



Հ Ա Ն Ր Ա Յ Ի Ն
Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ա Ն
Ի Ն Ս Տ Ի Տ Ո Ւ Տ

**ՀՀ-ում Կրթության պետական
տեսչության գործառական
հիմնախնդիրներն ու
արդյունավետության բարձրացման
ուղիները**

Երևան 2017

**Հետազոտությունն իրականացվել է «Հանրային քաղաքականության
ինստիտուտ» հետազոտական կենտրոնի կողմից Բաց Հասարակության
հիմնադրամներ – Հայաստան կազմակերպության օժանդակությամբ:
Հետազոտության հեղինակն է Ավետիք Մեջլումյանը:**

© «Հանրային քաղաքականության ինստիտուտ» ՀԿ
© Ավետիք Մեջլումյան

Բովանդակություն

Ներածություն.....	4
Կրթության պետական տեսչության լիազորությունները ՀՀ-ում	6
Կրթության պետական տեսչությունների միջազգային լավագույն փորձը.....	10
Տեսչության գործառական հիմնախնդիրները ՀՀ-ում.....	39
Տեսչական ստուգումների/ուսումնասիրությունների հատվածական բնույթը	39
Կրթական քաղաքականության թիրախավորման պակասը	40
Ստուգումների և ուսումնասիրությունների մեթոդաբանության սահմանափակումները.....	40
Ստուգումների ժամանակացույցի հետ կապված խնդիրները	43
Հայտնաբերված խախտումների վերացման գործընթացն ու Տեսչության լիազորությունները..	46
Տեսչական ենթակայության և շահերի բախման խնդիրները	48
Դասալսումներին առնչվող հիմնախնդիրները	50
Կադրային խնդիրներ և վերապատրաստում	52
Բարեվարքության խնդիրները՝ տեսչավորման գործընթացում	53
Տեսչավորման ենթակա խնդիրների սահմանափակ շրջանակը	54
Այլ խնդիրներ	55
Եզրահանգումներ	57
Առաջարկություններ	62

Ներածություն

Կրթության ոլորտում ծառայությունների որակն ու արդյունավետությունը, ինչպես նաև՝ բարեվարքության կանոնների պահպանումն ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ տեսչական ստուգումների արդյունավետ համակարգ:

Այս հետազոտությունը գալիս է լրացնելու հանրակրթության բնագավառում պետական մարմինների վերահսկողական գործունեության ուսումնասիրությունների պակասը: Վերջին տարիներին մեծ թվով հետազոտություններ են արվել ՀՀ կրթական համակարգի և դրա ակտուալ հիմնախնդիրների վերաբերյալ: Սակայն կրթական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ պետական հսկողության և վերահսկողության վերաբերյալ հետազոտությունները փոքրաթիվ են: Առավել ևս, ՀՀ ԿԳՆ Կրթության պետական տեսչության (այսուհետ՝ Տեսչություն կամ ԿՊՏ) գործունեությանն առնչվող առանձին հետազոտություն, կարծես թե, չկա:

Որոշ հետազոտություններում Տեսչության գործունեությանն անուղղակի անդրադարձ է կատարվում: Օրինակ, «Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստան» կազմակերպության աջակցությամբ իրականացված համեմատաբար թարմ հետազոտություններից մեկը (2015թ.) նվիրված է ՀՀ կրթական համակարգում բարեվարքության խնդիրներին: Տեսչության գործունեությանն անդրադարձ է կատարված միայն այն համատեքստում, թե վերջինս որքանով է աջակցում կրթական հաստատություններում բարեվարքության պահպանմանը և բարեվարքության սկզբունքների խախտման կանխարգելմանը: Այդ հետազոտության շրջանակներում քննարկվում է, օրինակ, տեսչական ստուգումների շրջանակում դպրոցներում մասնավոր պարապմունքների պրակտիկայի (որպես շահերի բախման և բարեվարքության խախտման ռիսկ) անտեսումը: Ընդհանուր առմամբ, Տեսչության գործունեությունը դիտարկվում է որպես բարեվարքության ապահովման լրացուցիչ, օժանդակ միջոց:

Հայալեզու էլեկտրոնային լրատվամիջոցներում ևս բազմաթիվ են հրապարակումները կրթության անբավարար որակի, դպրոցների քաղաքականացվածության, դպրոցներում առկա կոռուպցիայի և հովանավորչության, կրթության իրավունքի խախտման, դպրոցներում սոցիալական անհավասարության, դպրոցների անբավարար պայմանների և այլ խնդիրների մասին: Այնուամենայնիվ, տարատեսակ հրապարակումներում նույնպես բավական քիչ է անդրադարձը կրթական բնագավառում պետական հսկողության, մասնավորապես՝ Տեսչության գործունեության խնդիրներին: Էլեկտրոնային լրատվամիջոցներում Տեսչության գործունեությունը լուսաբանվում է սովորաբար յուրաքանչյուր տարեվերջին՝ տարեկան գործունեության ամփոփման ժամանակ:

Այս հետազոտության **խնդիրներն էին**.

1. Ուսումնասիրել Հայաստանի հանրակրթական համակարգում կրթական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ տեսչական հսկողության արդյունավետության հիմնախնդիրները,
2. Առաջարկել տեսչական հսկողության արդյունավետության բարձրացման ուղիներ, այդ թվում՝ միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության միջոցով:

Հետազոտության մեթոդաբանությունը: Ուսումնասիրության շրջանակներում կիրառվել են հետազոտության որակական մեթոդներ: Դրանք էին.

Փորձագիտական հարցազրույցներ: Այս հարցազրույցները հիմնականում իրականացվել են ուսումնասիրության ավարտական փուլում: Դրանց միջոցով քննարկվել և վերստին ստուգվել են հեղինակի առաջ քաշած վարկածները, եզրահանգումներն ու առաջարկությունների կիրառելիությունը (իրատեսականությունը): Փորձագետների ընտրության համար կիրառվել է ձևակույտի մեթոդը. նախապես, գրականության և մամուլի հրապարակումների, նաև՝ հեղինակի ունեցած տեղեկատվության հիման վրա ձևավորվել է փորձագետների ցանկը: Փորձագետների նախնական ցանկն այնուհետև հարստացվել և փոփոխվել է հետազոտության մասնակից փորձագետների կարծիքների հիման վրա: Հարցվող փորձագետներն իրենք երաշխավորել են նոր փորձագետների և այսպես շարունակ: Հարցման դադարեցման հիմք է հանդիսացել ստացվող տեղեկատվության և կարծիքների բովանդակության կրկնությունը, նոր բովանդակության բացակայությունը:

Հետազոտության մասնակից փորձագետները գործունեության բավական լայն դաշտ են ներկայացնում: Նրանց թվում են՝ Տեսչության ներկա և նախկին աշխատակիցներ, կրթության ոլորտի հետազոտողներ, ինչպես նաև՝ դպրոցների տնօրեններ և անձնակազմի այլ ներկայացուցիչներ:

Փաստաթղթերի վերլուծություն: Վերլուծության ենթարկված փաստաթղթերի տեսակներն են.

- Տեսչության կողմից հրապարակված հաշվետվությունները, տեղեկանքներն ու վերլուծությունները,
- Կրթության ոլորտի օրենսդրական և ենթօրենսդրական ակտերը,
- Տեսչության աշխատանքը կանոնակարգող օրենսդրական և ենթօրենսդրական ակտերը,
- Տեսական աշխատություններն ու հետազոտությունները,
- Մամուլի հրապարակումները:

Կրթության պետական տեսչության լիազորությունները ՀՀ-ում

ՀՀ Կրթության և գիտության նախարարության աշխատակազմի Կրթության պետական տեսչությունը (այսուհետ՝ Տեսչություն) գործում է «Կրթության պետական տեսչության մասին», «Կրթության մասին» ՀՀ օրենքներով, ՀՀ կրթության և գիտության նախարարության կանոնադրության և իր կանոնադրության հիման վրա:

Տեսչությունն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է ՀՀ Սահմանադրությամբ, «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Նախնական և միջին մասնագիտական կրթության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքներով, ՀՀ աշխատանքային օրենսգրքով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, այլ իրավական ակտերով:

Տեսչությունն իր գործունեությունն իրականացնում է՝ հիմք ընդունելով ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով հաստատված տեսչության տարեկան աշխատանքային ծրագրով և Տեսչության պետի՝ ՀՀ կրթության գլխավոր պետական տեսուչի կողմից հաստատված ստուգումների ժամանակացույցով:

Կրթության պետական տեսչության մասին ՀՀ օրենքն ընդունվել է 2005թ. նոյեմբերին: Օրենքի 5-րդ հոդվածում սահմանված է, որ կրթության բնագավառի պետական տեսչավորման գործընթացն իրականացնող պետական կառավարման մարմիններն են Հայաստանի Հանրապետության կառավարությունը և կրթության պետական կառավարման լիազորված մարմինը (Կրթության և գիտության նախարարություն):

Կրթության բնագավառի պետական տեսչավորման գործընթացում ՀՀ կառավարության իրավասություններն են.

- Կրթության բնագավառի օրենսդրության և այլ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության միասնական քաղաքականության իրականացման ուղղությունների սահմանումը,
- Տեսչության կանոնադրության և կառուցվածքի հաստատումը,
- ՀՀ հանրակրթության, նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության տեսչավորման և հրապարակային հաշվետվությունների մշակման ու ներկայացման, ինչպես նաև՝ ուսումնական հաստատությունների կրթական գործունեության գնահատման կարգերի հաստատումը:

Կրթության բնագավառի պետական տեսչավորման գործընթացում ԿԳՆ իրավասություններն են.

- Կրթության բնագավառի օրենսդրության պահպանման միասնական քաղաքականության մշակումը և իրականացումը,
- Կրթության բնագավառի օրենսդրության պահպանման նկատմամբ պետական վերահսկողության ապահովումը,
- Տեսչության գործունեության առաջնահերթ ուղղությունների որոշումը,
- Տեսչության աշխատանքային ծրագրերի հաստատումը, կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների վերլուծությունը, գնահատումը և ՀՀ կառավարություն համապատասխան առաջարկություններ ներկայացնելը,

- Տեսչության աշխատանքների համակարգումը և կրթական հաստատությունների գործունեության նկատմամբ վերահսկողությունը կանոնակարգող իրավական ակտերի մշակման ապահովումը, իր իրավասության սահմաններում դրանց հաստատումը:

ԿՊՏ մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածում սահմանված են Տեսչության նպատակներն ու խնդիրները:

Տեսչության նպատակներն են.

1. ՀՀ կրթության համակարգում կրթության բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների, հանրակրթության, նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության զարգացման պետական ծրագրի իրականացման, պետական կրթական չափորոշիչների կիրառման ապահովումը նպաստելը,
2. ՀՀ կրթության համակարգում կրթության որակի բարձրացման, կրթական ծրագրերի յուրացման, պետական կրթական չափորոշիչների պահանջների ապահովմանն աջակցելը:

Այս նպատակների արդյունավետ իրագործման համար Տեսչությունն իրականացնում է մի շարք խնդիրներ.

1. ՀՀ կրթության համակարգում պետական կրթական քաղաքականության իրականացման և կրթության զարգացման պետական ծրագրի կատարման վերահսկողության և մշտադիտարկման իրականացման ապահովումը,
2. Կրթակարգերի և կրթական չափորոշիչների կիրառման վերահսկողության և մշտադիտարկման իրականացման ապահովումը,
3. Հանրակրթական, նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ ուսումնական հաստատություններ) կողմից կրթական ծառայությունների մատուցման ուղղությամբ հաշվետվությունների ներկայացման ապահովումը,
4. Ստուգումների և ուսումնասիրությունների միջոցով կրթական քաղաքականության իրականացման և կրթական ծառայությունների արդյունավետության գնահատման ու հետադարձ կապի ապահովումը,
5. Կրթության որակի և չափորոշիչների բարելավման օրինակելի փորձի բացահայտման և դրա տարածման վերաբերյալ առաջարկությունների տրամադրման ապահովումը,
6. Ուսումնական հաստատություններին կրթության կազմակերպման և որակի բարելավման ուղղությամբ նորմատիվ իրավական ակտերի, մեթոդական նյութերի հատկացումը,
7. Ուսումնական հաստատություններում կրթական ծառայությունների մատուցման ուղղությամբ ստուգումների և ուսումնասիրությունների միջոցով բացահայտված խախտումների, սխալների, թերությունների վերացման աշխատանքներում մեթոդական օգնության կազմակերպումը,
8. Կրթության բնագավառի օրենսդրության կիրարկման ուղղությամբ մեթոդական օգնության կազմակերպումը:

Վերոնշյալ նպատակների և խնդիրների իրականացման համար Տեսչությանը բավական լայն լիազորություններ են վերապահված: Մասնավորապես, Տեսչությունը.

- Ստուգում և ուսումնասիրում է նախադպրոցական, հանրակրթական հիմնական, հատուկ ընդհանուր, նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների կրթական գործունեությունը՝ անկախ կազմակերպաիրավական ձևից և ենթակայությունից,

- Գնահատում է ուսումնական հաստատությունների կրթական ծառայությունների արդյունավետությունը (այդ թվում՝ սովորողների կողմից հանրակրթական և նախնական մասնագիտական ծրագրերի յուրացումը), վերլուծում այդ հաստատությունների գործունեությունը, ներկայացնում զարգացմանը նպաստող առաջարկություններ, ինչպես նաև՝ վերահսկում է դրանց իրականացումը,
- Ներկայացնում է հաշվետվություն լիազորված մարմին կրթության բնագավառում առկա վիճակի, դրա առանձին բնութագրիչների, կրթության ցուցանիշների մասին (ընդհանուր և ըստ մարզերի),
- Համապատասխան հանձնարարականի դեպքում ուսումնասիրում և ստուգում է քաղաքացիների դիմումներն ու բողոքները,
- Վերահսկում և ուսումնասիրում է տարածքային կառավարման մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների՝ կրթության հարցերով ստորաբաժանումների գործունեության համապատասխանությունը կրթության բնագավառի օրենսդրությանը և համագործակցում պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների հետ.
- Տեսչավորման աշխատանքներին մասնակից է դարձնում կրթական համակարգի լավագույն մասնագետներին, կրթության հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին,
- Եվ այլն:

Կրթական գործունեության՝ ստուգման ենթակա տեսակներն ու խնդիրները նույնպես բավական ընդգրկուն են. կրթական գործընթացի կազմակերպումը, ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի կատարումը, ուսումնական ժամանակացույցերի և դասացուցակների պահպանումը, սովորողների և շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգման, գնահատման, ամփոփիչ ատեստավորման, քննակարգերի, աշխատակարգերի պահպանումը, ընդունելության, փոխադրման, տեղափոխման, ավարտման կարգերին համապատասխան՝ սովորողների շարժը, անհրաժեշտ ուսումնագիտական, մեթոդական տեղեկատվությամբ, ծրագրերով, դասագրքերով, ուսումնական ձեռնարկներով, այլ անհրաժեշտ փաստաթղթերով ապահովվածությունը, ուսումնական հաստատությունների ղեկավար և մանկավարժական կադրերի ընտրության, նշանակման, ինչպես նաև վերապատրաստման, որակավորման բարձրացման և վերաորակավորման գործընթացի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, կրթության որակի նկատմամբ հաստատությունների կանոնադրական պահանջների կատարումը, հաստատությունների կառավարման մարմինների լիազորությունների իրականացումն ու պահպանումը, և այլն:

Կրթության բնագավառի պետական տեսչավորման գործընթացն իրականացվում է ստուգումների և ուսումնասիրությունների միջոցով՝ ԿՊՏ մասին օրենքի և «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքով սահմանված կարգերին և ժամկետներին համապատասխան:

Կրթության պետական տեսուչներն իրավունք ունեն ստուգման անցկացման համար ստուգվող սուբյեկտներից, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ստանալու անհրաժեշտ փաստաթղթեր, բացատրություններ, տեղեկանքներ, այլ տեղեկություններ, վերցնելու փաստաթղթերի կրկնօրինակներ, այլ անհրաժեշտ նյութեր և կազմելու համապատասխան ակտեր, ինչպես նաև՝ արձանագրելու խախտումները, օրենքով

սահմանված կարգով ստուգվող սուբյեկտներին տալու պարտադիր կատարման համար հանձնարարականներ:

Ուսումնասիրության ընթացքում կրթության բնագավառի օրենսդրության պահանջների խախտում հայտնաբերելու դեպքում Հայաստանի Հանրապետության կրթության գլխավոր պետական տեսուչը կամ, նրա հանձնարարությամբ, տեսչության տարածքային մարմնի ղեկավարը պատշաճ ձևով համապատասխան ուսումնասիրվող սուբյեկտին նախազգուշացնում է կրթության բնագավառի օրենսդրության պահանջի խախտման մասին՝ նշելով խախտման հետևանքները վերացնելու միջոցառումները, այդ թվում՝ դրանց կատարման ժամկետը:

Ուսումնասիրվող սուբյեկտը (դպրոց, նախադպրոցական հաստատություն, այլ) նախազգուշացման հետ կապված միջոցառումների կատարման մասին պարտավոր է պատշաճ ձևով տեղյակ պահել ՀՀ կրթության գլխավոր պետական տեսուչին կամ տեսչության տարածքային մարմնի ղեկավարին: Նախազգուշացումից հետո սահմանած ժամկետում խախտման հետևանքները չվերացնելը և (կամ) դրա վերաբերյալ պատշաճ ձևով չտեղեկացնելը հիմք է դառնում նոր ստուգումների իրականացման համար:

Բացահայտված խախտումների հետևանքների և թերությունների վերացմանն ուղղված կամ ուսումնական հաստատության զարգացմանը նպաստող՝ կատարման համար պարտադիր հանձնարարականներ են տրվում ուսումնական հաստատությունների կառավարման մարմիններին (տնօրեններին և խորհուրդների նախագահներին), ինչպես նաև, ըստ ուսումնական հաստատությունների ենթակայության, առաջարկություններ են ներկայացվում լիազորված պետական և (կամ) տեղական ինքնակառավարման մարմիններին, ուսումնական հաստատությունների հիմնադիրներին:

Կրթության պետական տեսչությունների միջազգային լավագույն փորձը

Ի տարբերություն, օրինակ, աշխատանքի տեսչությունների, կրթության ոլորտում տեսչավորման համակարգ ունենալու միջազգային որևէ պարտավորություն սահմանված չէ: Աշխատանքի միջազգային կազմակերպության «Աշխատանքի տեսչության մասին» 1947 թվականի Կոնվենցիայի (ՀՀ վավերացրել է 2004թ.) առաջին հոդվածով նախատեսված է, որ «Աշխատանքի միջազգային կազմակերպության յուրաքանչյուր անդամ, որի համար ուժի մեջ է սույն Կոնվենցիայի այս բաժինը, պետք է աշխատանքի տեսչության համակարգ ունենա արդյունաբերական ձեռնարկություններում»: Կոնվենցիայի 22-րդ հոդվածով սահմանվում է աշխատանքի տեսչության համակարգի անհրաժեշտությունն առևտրի ձեռնարկություններում:

Որքան էլ զարմանալի է, միջազգային փաստաթղթերում դեռ ձևակերպված չէ պետության պարտավորությունը՝ կրթության բնագավառում տեսչության համակարգ ունենալու մասին:

Այնուամենայնիվ, բազմաթիվ երկրներում կրթության ոլորտում տեսչական գործառույթների իրականացման տարբեր մոդելներ են գործում: Եվրոպական երկրների մեծամասնությունում կրթության տեսչությունները կրթության նախարարության մաս են կազմում: Որոշ երկրներում տեսչական գործառույթները բաշխված են կրթական քաղաքականություն իրականացնող տարբեր կառույցների, կոմիտեների և տեղական ինքնակառավարման մարմինների միջև: Կան երկրներ, որտեղ կրթության տեսչությունը և տեսչավորման գաղափարն ինքնին բացակայում է:

Ստորև ներկայացված է մի շարք եվրոպական և ոչ եվրոպական (ասիական) երկրների այն փորձը, որը կարող է արժեքավոր լինել՝ Հայաստանում կրթության տեսչության զարգացման համար:

Կրթության տեսչություններն ու տեսչական ստուգումները եվրոպական երկրներում

Եվրոպական երկրների մեծամասնությունը ներկայումս ունեն Կրթության տեսչություններ: Որոշ երկրներում, ինչպես օրինակ Իռլանդիայում, Չեխիայում և Սլովակիայում գործում է մեկ միասնական պետական տեսչություն, իսկ օրինակ Գերմանիայում յուրաքանչյուր երկրամաս ունի իր առանձին տեսչությունը:

Սովորաբար տեսչությունը կառավարության՝ որոշում կայացնող օղակից առանձին գործող առանձնացված կառույց է, բայց որոշ երկրներում՝ օրինակ Շոտլանդիայում երկու կառույցները միասին են գործում:

Որոշ երկրներում՝ օրինակ Բուլղարիայում, ստուգումների իրականացումը տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթն է, բայց հաճախ նման ստուգումները իրականացվում են Կրթության նախարարության սահմանած չափորոշիչների համաձայն: Թերևս շատ երկրներում նկատվում է նման գործառույթը կառավարման կենտրոնական մարմնին փոխանցելու միտում/օրինակ Ալբանիա/:

Դանիայում պետական տեսչության ֆորմալ համակարգ գոյություն չունի և հետևաբար չկա ստուգումների արդյունքներով ֆորմալ պահանջներ ներկայացնելու պետական համակարգ: Հաշվետվություններ ներկայացնելու գործառույթը թողնված է տեղական իշխանություններին:

Ներկայումս լայն տարածում է գտնում առանձին դպրոցի մակարդակով հաշվետվության հրապարակման միտումը: Մա հետ-ստուգումնային գործընթացը տեսչության կողմից

խթանելու ամենապարզ տարբերակն է: Նման մոտեցումը նաև հնարավորություն է ստեղծում այլ շահագրգիռ կողմերի, օրինակ ծնողների, գործընթացում ներգրավման համար:

Եվրոպական շատ երկրներ ներկայումս ունեն դպրոցների ազգային կամ պետական տեսչություններ: Դրանք հաշվետվություններ են կազմում, որոնք, սակայն, ոչ բոլոր դեպքերում հասանելի լայն հանրության համար: Շատ երկրներ որդեգրել են բոլոր դպրոցներում պարբերաբար ստուգումներ անցկացնելու մոտեցումը, մինչդեռ շատ այլ երկրներ աշխատում են ռիսկի հայտնաբերման մոդելի հիման վրա (այս մոտեցման համաձայն ստուգումները իրականացվում են միայն այն ժամանակ, երբ կրթական համակարգում հայտնաբերվել է որևէ թույլ օղակ) կամ բողոքների հիման վրա ստուգումների իրականացման մոդելի հիման վրա:

Դպրոցներում ստուգումներ և գնահատում իրականացնելու ուղեցույցները հիմնականում հրապարակվում են և կարևոր կապող օղակ են կազմում դպրոցի ինքնագնահատման գործում:

Նկատելի է, որ դպրոցներում ստուգումներ անցկացնելու արդյունքներով կազմված հաշվետվությունները բարձր արդյունավետությամբ ազդեցություն են գործում դպրոցների վրա:

Հատկանշական է, որ դպրոցների գործունեության վերահսկման և գնահատման պրակտիկան տարբերվում է ըստ երկրների. կան երկրներ, որոնք որդեգրել են իրենց դպրոցներին նվազագույն պահանջներ առաջադրելու մոտեցումը:

Նաև խիստ տարբեր են ստուգումներից հետո հետադարձ կապի բնույթն ու ծավալները, որոշ երկրներում ստուգումն ավարտվում է բանավոր հետադարձ կապ տալով և գրավոր հաշվետվություն ներկայացնելով, մինչդեռ այլ երկրներում ստուգումներից հետո կարող են անցկացվել մի քանի շաբաթ տևող քննարկումներ վերաբերելի լսարանի հետ:

Որոշ երկրներ ունեն պատժամիջոցների տարաբնույթ համակարգեր, որոնք կիրառվում են ցածր արդյունավետություն դրսևորող դպրոցների հանդեպ: Հաճախ դպրոցի տնօրենը պատասխանատվության է կանչվում, թերևս որոշ դեպքերում կարող են կիրառվել առավել խիստ պատժամիջոցներ, ինչպես օրինակ դպրոցի գործունեության դադարեցումը, եթե այն չի բարելավվում:

Որոշ երկրներում դպրոցները ստուգումներից հետո կազմում ու տեսչություն/կամ որևէ այլ մարմին/ են ներկայացնում իրենց գործունեության բարելավման ծրագիր, բայց սա հեռու է լայնորեն տարածված մոտեցում լինելուց: Որոշ երկրներ դադարել են նման ծրագրեր պահանջել, բացառությամբ հատուկ դեպքերի:

Որոշ երկրներում տեսչությունները կրկնակի այցեր են կատարում դպրոցներ, որոնց ցուցանիշները ընդունված չափորոշիչներից ցածր են, թերևս առավել հաճախ այս գործառույթը թողնված է այլ գերատեսչություններին:

Տեսչությունները նաև տարբերվում են դպրոցի ցուցանիշների բարելավմանը շարունակական ուղղակի աջակցություն մատուցելու ծավալներով, հաճախ սա արվում է այլ գերատեսչության կողմից, օրինակ տեղական կամ տարածքային իշխանությունների կողմից: Այնուամենայնիվ, նկատվում է աճող միտում դեպի տեսչությունների առավել սերտ համագործակցությունը դպրոցի հետ, հատկապես դա նկատելի է թույլ դպրոցների պարագայում:

Ներկայումս շատ տեսչություններ տեսնում են իրենց դերը բարձրորակ կրթական համակարգեր ունենալու գործընթացի խթանման մեջ: Թերևս դրան հասնելու մոտեցումները տարբեր են. որոշ տեսչություններ առաջատար դիրք են զբաղեցնում կրթության որակը

խթանելու գործում լավագույն ցուցանիշներով դպրոցներն առանձնացնելու, լավագույն փորձի օրինակներ ներկայացնելու, միջնորդի դեր ստանձնելու միջոցով, և այլն:

Հետ-ստուգումային գործընթացը

Ստուգումների համակարգն ընդհանուր առմամբ բավական ուժեղ գործիք է կրթական գործընթացի բարելավման համար, քանի որ ստուգումների արդյունքները ներկայացվում են ոլորտի պատասխանատու խմբերին և անհատներին, ինչպես նաև լայն հանրությանը: Օրինակ Բեռլինում նկատվել է, որ դպրոցի ստուգումների արդյունքում հաշվետվությունների հրապարակումը բարձր ազդեցության մեխանիզմ է:

Որոշ երկրներում ստուգումների արդյունքում դպրոցի «տապալվելու» հասկացություն գոյություն չունի, մինչդեռ այլ համակարգերում ստուգումների արդյունքում նման դպրոցներ հայտնաբերելը և դրանց նկատմամբ համապատասխան միջոցներ ձեռնարկելը հանդիսանում է ստուգումների հիմնական նպատակը: Ընդհանուր առմամբ ստուգումների գործընթացի ավարտից հետո հնարավոր է երեք ելք.

- Հաշվետվության հրապարակումից բացի ուրիշ ոչ մի գործողություն տեսչության կողմից չի ձեռնարկվում:

- Ձեռնարկվում են մի շարք աջակցող քայլեր ուղղված դպրոցի կրթական գործունեության բարելավմանը:

- Դպրոցները հարկադրված են որոշակի գործողություններ ձեռնարկել և մի շարք պատժամիջոցներ կարող են կիրառվել դպրոցի հանդեպ ընդհուպ մինչև դպրոցի գործունեության դադարեցումը, եթե դպրոցը չի բարելավում իր գործունեությունը:

Տեսչության ներգրավվածության աստիճանը բարելավմանն աջակցելու կամ դպրոցի հանդեպ միջոցներ ձեռնարկելու գործընթացում տարբեր է երկրից երկիր: Ներկայումս համարվում է, որ ստուգումների գործընթացն ինքնին հանդիսանում է տեսչության կողմից բարելավմանն աջակցելու գործընթացի մի մասը, դրա օրինակներ են օրինակ որակի չափորոշիչների վերաբերյալ տեսչության ուղեցույցի հրապարակումը, ստուգումների արդյունքում դուրս բերած արդյունքների հրապարակումը: Տեսչության ուղեցույցի հրապարակումը, ինչպես նաև դպրոցի փորձառու ուսուցիչների և այլ պաշտոնատար անձանց ներգրավումը ստուգումների գործընթացում նպաստում է դպրոցի գործունեության բարելավմանը երկարաժամկետ կտրվածքով:

Ստուգումների արդյունքում հետադարձ կապի ապահովումը նույնպես կարևոր է: Գերմանիայի որոշ երկրամասերում ստուգումների արդյունքում կազմված հաշվետվությունը լայնորեն ներկայացվում է շահագրգիռ կողմերի տարբեր խմբերին, ի հակադրություն այս մոտեցմանը, Անգլիայում ստուգումները ավարտվում են դպրոցի ղեկավար անձնակազմի և որոշ պաշտոնատար անձանց հետ հակիրճ խորհրդակցություն անցկացնելով:

Որոշ երկրներում նաև պահանջվում է, որ դպրոցի ղեկավարները համագործակցեն այլ շահագրգիռ անձանց հետ (ուսուցչական կազմի), երբեմն դրա համար բավարար է ստուգումներից հետո ժողով-խորհրդակցություն անցկացնելը, բայց օրինակ Բելգիայում հստակ պահանջվում է, որ դպրոցի ղեկավարները քննարկեն տեսչության զեկույցը դպրոցի ուսուցչական կազմի հետ:

Երբ վերը նկարագրված փուլն արդեն ամփոփվել է, որոշ երկրներում պահանջվում է, որ թույլ առաջադիմություն ունեցող դպրոցները կազմեն և հաստատեն գործողությունների կամ բարելավման ծրագիր: Նման ծրագրերը որոշ դեպքերում պետք է հաստատվեն որոշում կայացնողների կողմից, օրինակ կրթության տեղական գերատեսչության կողմից: Դանիայում

օրինակ, տեղական իշխանության մարմինը կարող է կազմել գործողությունների ծրագիր ցածր ցուցանիշներ ունեցող դպրոցների համար:

Ինչպես տեսնում ենք գործընթացը բավականաչափ բյուրոկրատացված է, թերևս հարկ է նշել, որ տեսչության ներգրավվածությունը այս գործընթացում տարբեր է երկրից երկիր: Որոշ երկրներում տեսչությունը մանրակրկիտ քննության է արժանացնում գործողությունների ծրագիրը, իսկ մյուսներում այն իր համաձայնությունն է տալիս ծրագրի նպատակներին ու ընտրված միջոցներին:

Այսպիսով դպրոցը սկսում է իր բարելավման գործընթացը, այստեղ տեսչությունը շարունակում է ներգրավված լինել, թերևս դրա ներգրավվածության աստիճանը կրկին շատ տարբեր է ամբողջ Եվրոպայում: Ստորին Սաքսոնիայում օրինակ, տեսչությունն ապահովում է ընդարձակ ռեսուրսներ և ուղղորդում, որոնք հասանելի են իր կայք-էջի միջոցով, այս համակարգում «դպրոցը դպրոցին աջակցություն» մոդելը շատ թույլ է արտահայտված:

Սաքսոնիայում և Բեռլինում խորհրդատվությունն ու ուղղորդումը դպրոցին տրամադրում են տարբեր գերատեսչություններ: Անգլիայի օրինակում դպրոցները, որոնք բարելավվելու կարիք ունեն՝ տեսչության աջակցությունը հատկապես հատկանշական գտան իրենց՝ բարձր առաջադիմություն ունեցող դպրոցների հետ կապի մեջ դնելու գործում, ինչպես նաև ուսուցչական կազմի հետ ժողովների անցկացման մեջ:

Դպրոցի վատ առաջադիմության դեպքում՝ գործի են դրվում մի շարք արձագանք միջոցներ՝ ընդհուպ մինչև դպրոցի փակումը: Նման ծայրահեղ միջոցներ կիրառվում են օրինակ Նիդեռլանդներում, Բելգիայում (Ֆլանդրիա), Չեխիայում, Անգլիայում, թերևս նման միջոցի կիրառումը միշտ չէ որ տեսչության գործառույթն է, սակայն, օրինակ, Նորվեգիայում դպրոցի դեմ համապատասխան հայցադիմում է ներկայացնում հենց Տեսչությունը: Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը (ՏՀԶԿ) իր «Միներգիա ավելի լավ ուսուցանման համար» զեկույցում ուսումնասիրության է առել քսան երկիր և առանձնացրել է դրանցից ինը, որտեղ նկատվել է, որ դպրոցի արտաքին ստուգումը/գնահատումը բարձր կամ միջին ազդեցություն ունի դպրոցի փակման վրա:

Թերևս առանձնացվել են նաև այլ երկրներ, ինչպես օրինակ Գերմանիան, Ֆրանսիան ու Իսպանիան, որտեղ նման ուղղակի կապ ստուգման/գնահատման ու դպրոցի փակման միջև չի նկատվել: «Ոչ շատ հուսադրող» ստուգման արդյունքում հետևանքները դպրոցի անձնակազմի համար կարող են շատ տարբեր լինել: Ալբանիայում, Անգլիայում և Չեխիայում դպրոցի տնօրենները կարող են տարբեր պատժամիջոցների ենթարկվել և անգամ հեռացվել, թերևս Ստորին Սաքսոնիայում և Գերմանիայի այլ հոդերում նման ծայրահեղ միջոցի կիրառումը քիչ հավանական է:

Շատ երկրներ ներկայումս ընդունում են, որ անհրաժեշտ են համապատասխան գործընթացներ այն դպրոցների համար, որոնց գործունեությունը չի դադարեցվում կամ առնվազն ոչ անմիջապես է դադարեցվում, որպեսզի վերջիններս կարողանան պատշաճ արձագանքել ստուգումների արդյունքում արված դիտարկումներին: Ընդհանուր առմամբ նկատվել է, որ ստուգումների արդյունքների/հայտնաբերած բացթողումների ներկայացումը դպրոցին ինքնին չի տանում դպրոցի կողմից բարելավման գործողությունների ձեռնարկմանը:

Տեսչությունների հիմնական միջազգային խորհրդաժողովը ("Standing International Conference of Inspectorates"), ինչպես նաև ՏՀԶԿ զեկույցը առանձնացնում են շատ փոքրաթիվ դեպքեր, երբ ստուգումների արդյունքում ֆինանսական պատժամիջոցներ կամ խրախուսումներ են կիրառվել: ՏՀԶԿ-ն այս առումով առանձնացնում է Բելգիան (Ֆլանդրիա)

և Չեխիան, որտեղ նման միջոցների կիրառումը բարձր արդյունավետություն ունի. այս երկրները որդեգրել են բավականին յուրօրինակ մոտեցում, դրանք տույժերի են ենթարկում անմիջապես դպրոցի տնօրեններին, սակայն նման միջոցները, թերևս, հազվադեպ են կիրառվում:

Վերջերս նկատվում է, որ որոշ երկրներ քայլեր են ձեռնարկում դեպի առավել կտրուկ միջոցների ձեռնարկումը՝ այդպիսով հավասարակշռելով դպրոցների ինքնավարության աճը: Նման երկրներից է Շվեդիան. այս երկրի Կրթության օրենքը Կրթության տեսչությանը տալիս է իրավասություն փակել դպրոցը կամ տնտեսական պատժամիջոցներ կիրառել ցածր առաջադիմություն ցուցաբերած դպրոցների հանդեպ: Այսպիսով, ստուգումը կարող է կանխորոշել դպրոցի ապագան:

Շվեդիայում փորձ է արվել պետության կողմից ֆինանսավորվող դպրոցների համար գործող համակարգը նույնականացնել մասնավոր դպրոցների համար գործող համակարգին, մոտեցումը տրամաբանական է մի երկրի համար, որտեղ պետության կողմից ֆինանսավորվող դպրոցների մեծամասնությունը ինքնավար են: Այդպիսով, հազվադեպ է, որ տեսչությունը դպրոցն անմիջականորեն փակելու իշխանություն ունենա. Չեխիայում Գլխավոր տեսուչը կարող է առաջարկել փակումը, իսկ Անգլիայում տեսչության կարծիքը փակման մասին սկիզբ է դնում համապատասխան գործընթացին, որն ավարտվում է նախարարական որոշմամբ:

Թերևս ֆինանսական պատժամիջոցները հազվադեպ են հանդիպում: Մի շարք կարգավորող համակարգերում կիրառման են դրվում իրավական մեխանիզմներ, ինչպես օրինակ դատական արգելքը, այս մոտեցումը կիրառվում է Նորվեգիայում: Նման դեպքերում չափորոշիչները, որոնք դպրոցը պետք է ապահովի ամրագրված են օրենքով, թերևս որոշ գնահատող համակարգերում (օրինակ Անգլիայում) չափորոշիչները սահմանվում են տեսչության ուղեցույցում և համապատասխան որոշումները կայացվում են տեսուչի կողմից: Երկու դեպքում էլ դպրոցները պետք է գործեն չափորոշիչներին համապատասխան, որոնցով և որոշվում է դպրոցների առաջխաղացումը:

Ինչպես նկատեցինք, բարելավման գործընթացին աջակցելու պարտականությունը կարող է ընկնել տեղական իշխանության, դպրոցի ղեկավար մարմնի, բարձր ցուցանիշներ ունեցող գործընկեր դպրոցի կամ կրթության փորձագետի, կիսահինքնավար մի որևէ գերատեսչության կամ անգամ կրթության տեսչության պատասխանատվության ներքո:

Սովորաբար բարելավմանն ուղղված գործողությունները միանման են եվրոպական տարբեր երկրներում, բայց մարմինները որոնք ներգրավված են այդ գործընթացում շատ տարբեր են երկրից երկիր: Հետ-ստուգումնային աջակցության, գնահատող այցերի կամ հետագա ստուգումների գործընթացները ծախսատար են, այսպիսով հետևյալ հիմնական մոտեցումներն են գործի դրվում՝

- Բարձր կրթական ցուցանիշներ ունեցող դպրոցներում ստուգումների նվազեցում:
- Դպրոցը դպրոցին աջակցություն:
- Լավագույն փորձի առանձնացում և ներկայացում համացանցում:
- Ստուգումը որպես միջոց օգտագործելը մի դպրոցի թույլ կողմերը մյուս դպրոցի ուժեղ կողմերին համադրելու համար:

Այստեղ մի հետևյալ խնդրահարույց հարց է առաջ գալիս. տեսչությունների համար ներգրավվումը բարելավման գործընթացի ընթացիկ աջակցությանը առաջ է բերում «խորհրդի» և «ստուգման» մինչև նուրբ շեմը չանցնելու խնդիր, արդյոք տեսչությունը պետք է գնահատի/ստուգի իր իսկ տված խորհուրդների/ղիտարկումների կիրառումը: Հաճախ հարցը

լուծվում է վերադարձ-այցերի միջոցով, որոնց ընթացքում ստուգման առարկա է դառնում նախորդ ստուգման արդյունքներով արված առաջարկությունները կամ առաջադրված պահանջները:

Պորտուգալիայում տեսուչը մշտադիտարկման է ենթարկում զարգացման ծրագրի իրականացումը և պահպանում է կապը դպրոցի մասնագետների հետ: Այս բանավեճը լայնորեն ծավալվել է Նիդեռլանդներում և Անգլիայում, քանի որ տեսչությունները գնալով ավելի ակտիվորեն են ներգրավվում աջակցման գործընթացում, բայց թերևս անտեսում են հանգամանքը, որ տեսչությունները մշտապես տվել են խորհրդատվություն այն մասին ինչ պետք է անել, և ոչ թե այն բանի, թե ինչպես է պետք դա անել: Նաև կարևոր է նշել, որ տեսչություններն իրենք չունեն գործադիր իշխանություն, դա դպրոցի տնօրեններն են, ովքեր պետք է արված առաջարկները ի կատար ածեն:

Նաև գնալով ավելի շատ է նկատվում մոտեցումը, երբ տեսչության գործառույթն է լավագույն փորձի օրինակները հայտնաբերելն ու ներկայացնելը, որպեսզի առավել թույլ դպրոցները կարողանան սովորել լավագույններից: Նման մոտեցում նկատվում է Ուելսում, Անգլիայում և Չեխիայում:

Կրթության պետական տեսչությունն Իռլանդիայում

Իռլանդիայում Տեսչության դերը հետևյալն է.

- Գործարկել հսկողության և գնահատման ծրագիր, որի շրջանակներում կիրականացվի ինչպես ուսուցիչների գործունեության, այնպես էլ դպրոցների և դասավանդվող առարկաների հսկողություն, կրթօջախների թեմատիկ գործունեության գնահատում:

- Գնահատել և առաջարկություններ անել ոլորտի օրենսդրության և Կրթության և գիտության դեպարտամենտի կանոնակարգերի կիրարկման վերաբերյալ, ինչպես նաև ընթացք տալ արված հարցումներին, քննել բողոքները Դեպարտամենտի նախնական և հետնախնական ադմինիստրատիվ բաժանմունքների սահմանված կարգով, ինչպես նաև հաշվետվություն ներկայացնել համապատասխանության հարցերի վերաբերյալ: Դեպարտամենտը նույն կրթության և գիտության նախարարությունն է, որը համարժեք է Հայաստանի Հանրապետության ԿԳՆ-ին և ղեկավարվում է համապատասխան նախարարի կողմից, հանդիսանում է կառավարության մարմին: Տեսչության իրավասության շրջանակներում խորհրդատվություն տրամադրել դպրոցներին, ուսուցիչներին և ծնողներին կրթության տրամադրման բոլոր հարցերի վերաբերյալ:

- Նպաստել և աջակցել ոլորտի քաղաքականության զարգացմանը խորհրդատվության տրամադրման, ներքին և արտաքին հանձնաժողովների աշխատանքներին մասնակցելու, նախարարական և այլ ցուցումներ պատրաստելու, ինչպես նաև միջազգային, ազգային և տեղական մարմիններում և գործակալություններում ներկայացուցչության ապահովման միջոցով:

Տեսչության առաքելությունը

Լայն իմաստով Տեսչության նպատակն է ապահովել որակի երաշխավորման մեխանիզմներ դպրոցների համար և խթանել առաջին և երկրորդ մակարդակի դպրոցներ հաճախող աշակերտների կրթական փորձառության շարունակական բարելավումը: Սրանք միջնակարգ և ավագ դպրոցներն են, սակայն այստեղ կա տարիքային տարբերություն:

Առաջին մակարդակը, ինչպես նշված է, ընդգրկում է 4-12 տարեկան երեխաներին: Իսկ երկրորդ մակարդակում սովորում են 12-18 տարեկան աշակերտները¹:

Տեսչության խնդիրներն են.

- Պետական հսկողության ծրագրի իրականացում դպրոցներում և կրթական կենտրոններում:
- Կրթության տրամադրման գործընթացի որոշակի ասպեկտի մշտադիտարկում և գնահատում:
- Օրենսդրության և Դեպարտամենտի կանոնակարգերի կիրարկման գնահատում և բարեհաջող կիրարկման վերաբերյալ խորհրդատվության տրամադրում:
- Քաղաքականության զարգացման աջակցում, ինչպես նաև մի շարք ոլորտների ուսումնասիրություն, ինչպիսիք են՝ ուսուցիչների կրթությունը, կրթական պլանն ու գնահատումը, իռլանդերեն լեզուն, հատուկ կրթությունը, գենդերային հավասարությունը:
- Միջազգային կրթական միջոցառումների վերաբերյալ խորհրդատվության տրամադրումը և մասնակցությունը դրանց:
- Տեսչության հմտությունների, իրավասությունների և կարողությունների պահպանում ու զարգացում:

Համեմատական վերլուծություն

Իռլանդիայի Կրթության պետական տեսչությունը Կրթության և գիտության դեպարտամենտի մաս է (The department of education and scills), և ենթարկվում է դեպարտամենտին: Աշխարհում ամենահին տեսչություններից է. հիմնադրվել է դեռ 1831թ.: Մինչ 2003թ. այս ոլորտում եղել է միակը, ունեցել է որոշակի դեր և ազդեցություն: Բայց սա փոխվեց, երբ 2003թ. ստեղծվեց Կրթության պետական հանձնաժողովը:

Իռլանդիայի հանրապետության փորձից հետաքրքրական է այն, որ Կրթության տեսչությունը ունի խորհրդատվության տրամադրման գործառույթ, այն խորհրդատվություն է տրամադրում դպրոցներին, ուսուցիչներին և ծնողներին կրթության տրամադրման բոլոր հարցերի վերաբերյալ: Թերևս նմանատիպ մի գործառույթ ամփոփված է ՀՀ Կրթության տեսչության խնդիրներում, այսպես ՀՀ Կրթության պետական տեսչության օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի համաձայն Տեսչության խնդիրներից է. «Ուսումնական հաստատություններին կրթության կազմակերպման և որակի բարելավման ուղղությամբ նորմատիվ իրավական ակտերի, մեթոդական նյութերի հատկացումը»²:

Տեսչության գործունեության կարգավորման համար առանձին օրենք գոյություն չունի, կա Կրթության մասին օրենք, ընդունված 1998թ. և տեսչությունը այս օրենքում դրված է կանոնադրական հիմքի վրա: Այս օրենքով է սահմանվում սրա հիմնական գործառույթները, որոնք ավելի շատ ունեն խորհրդատվական բնույթ: Տեսչության հիմնական գործառույթը առաջին և երկրորդ, այսինքն՝ միջնակարգ և ավագ դպրոցների գործունեության գնահատումն է, հենց օրենքով սահմանվում է սրա խորհրդատվական բնույթը՝ կրթության և գիտության դեպարտամենտի, ուսուցիչների գործունեության համար խորհրդատվությունների տրամադրման գործառույթը: Գլխավոր տեսուչը Դեպարտամենտի կառավարման մարմնի անդամ է:

¹ Տե՛ս The Inspectorate of Education of Ireland, [file:///C:/Users/User/Downloads/87057%20\(1\).pdf](file:///C:/Users/User/Downloads/87057%20(1).pdf), էջ 2:

² Տե՛ս ՀՀ օրենքը Կրթության պետական տեսչության մասին:

Թերևս Իռլանդիայի օրինակում Տեսչության գործառույթը չի սահմանափակվում այս կամ այն հարցի շուրջ նորմատիվ իրավական ակտի կամ մեթոդական նյութի տրամադրումով, այլև առավել լայն է և ենթադրում է բովանդակալից խորհրդատվության տրամադրում կրթության տրամադրման որևէ հարցի շուրջ: Հատկանշական է նաև, որ հասցեատերերի շարքում ընդգրկված են ոչ միայն ուսումնական հաստատությունները, այլև ուսուցիչները և աշակերտների ծնողները:

Անդրադառնանք Տեսչության նմանատիպ մեկ այլ խնդրին, մասնավորապես կրթության բնագավառի օրենսդրության կիրարկման ուղղությամբ մեթոդական օգնության կազմակերպմանը (հիշատակված օրենքի հոդված 8-րդ, 2-րդ մաս, 8-րդ կետ):

Իռլանդիայի օրինակում Տեսչությունը բովանդակալից խորհրդատվություն է տրամադրում այս կամ այն նորմատիվ իրավական ակտի կամ Դեպարտամենտի կանոնակարգի արդյունավետ կիրարկման վերաբերյալ: Կարևոր է նաև այն, որ Իռլանդիայի Տեսչությունն ունի կրթության վերաբերյալ օրենսդրության կիրարկման հանդեպ շարունակական մշտադիտարկում իրականացնելու խնդիր: Այս խնդիրն առավել լայն է և ենթադրում է շատ ավելի լայն գործողությունների կազմակերպում, քան զուտ մեթոդական օգնության կազմակերպումը:

Այստեղ Տեսչությունը ոչ միայն ապահովում է վերահսկողության ու մշտադիտարկման գործընթացների իրականացումը պետական կրթական քաղաքականության նկատմամբ, այլև հենց ինքը կոչված է նպաստելու կրթական քաղաքականության զարգացմանը և աջակցել դրան իր որոշակի գործողություններով, ինչպիսիք են խորհրդատվության տրամադրումը, ներքին և արտաքին հանձնաժողովների աշխատանքներին մասնակցելը, նախարարական և այլ ցուցումներ պատրաստելու, միջազգային, ազգային և տեղական մարմիններում և գործակալություններում ներկայացուցչության ապահովման միջոցով, հատկանշական է հատկապես վերջին գործառույթը՝ ներկայացուցչությունը ոլորտի մարմիններում և գործակալություններում միջազգային, ազգային և տեղական մակարդակներով:

Այս տեսանկյունից ՀՀ Տեսչությունը օժտված չէ նման գործառույթով, հատկապես միջազգային օղակներում: Նաև շարունակելով միջազգային ատյաններում ներկայացուցչության ապահովման թեման, ուշագրավ է այն հանգամանքը, որ Իռլանդիայի Տեսչության խնդիրներից մեկն է միջազգային մակարդակում տեղի ունեցող կրթական միջոցառումների վերաբերյալ խորհրդատվություն տրամադրելը կամ մասնակցությունը նման միջոցառումներին:

Անդրադարձ կատարենք նաև Տեսչության կարողությունների զարգացման խնդրին, այս տեսանկյունից ուշագրավ է, որ Իռլանդիայի օրինակում Տեսչության առջև առկա է իր համապատասխան հմտություններն ու կարողությունները շարունակաբար զարգացնելու խնդիր մեր օրենսդրությամբ Տեսչության առջև նման խնդիր դրված չէ:

Կրթության տեսչությունը Նիդեռլանդներում

Նիդեռլանդների Կրթության տեսչությունը հիմնադրվել է 1801թ.-ին և հանդիսանում է այսօր առկա կրթության տեսչություններից հնագույներից մեկը:

2008թ.-ից Տեսչությունը սկսել է իր գործունեությունը կառուցել ռիսկի վրա հիմնված հսկողության մոդելի հիման վրա, որպեսզի առանձնացնի այն դպրոցները, որոնք կրթական

ռիսկ են առաջ բերում, պայմանավորված իրենց մատուցած կրթական ծառայությունների որակով:

Տեսչության աշխատանքային շրջանը սկսվում է ռիսկի վերլուծությամբ. այս վերլուծությունը իր մեջ ներառում է 3 կարևոր բաղադրիչ, այսինքն՝ ռիսկի չափման այսպես ասած միավորներ. ազդանշաններ, հաշվետվություններ և սովորողի արդյունքներ: Այս տարրերը ապահովում են դպրոցների որակի հնարավոր ռիսկերի վերաբերյալ տեղեկատվություն: Նշված բաղադրիչների համադրմամբ և ուսումնասիրմամբ պարզ է դառնում՝ արդյոք դպրոցը կարող է բավարար որակ ապահովել գալիք տարում, թե ավելի խորացված հետաքննություն է պետք անցկացնել:

1. Ազդանշանները առաջին բաղադրիչն են: Այստեղ ամեն ինչ կարող է որակվել որպես ազդանշան՝ դպրոցի ցածր որակի մասին. օրինակ՝ աշակերտի, ծնողի, ուսուցչի, այլ իրավատերերի, շահակիցների որևէ հարցի վերաբերյալ հնչեցված բողոք: Կամ համացանցում, թերթերում տվյալ դպրոցի հետ կապված որևէ դիտարկում, հոդված, որը բացասական կամ ոչ այնքան բարենպաստ տեղեկատվություն է տրամադրում դպրոցի մասին: Դրանք կարող են ներառել որոշ տեղեկություններ, կարծիքներ, դիտողություններ, որոնք կարող են ազդել դպրոցի վարկի և կրթության որակի վրա:
2. 2008թ. սկսած յուրաքանչյուր դպրոց պարտավոր է թողարկել տարեկան հաշվետվություն, որը ներառելու է ոչ միայն ֆինանսական տեղեկատվություն, այլև դպրոցի՝ տարվա ընթացքում ունեցած առաջադիմությունների, գուցե անհաջողությունների, կրթության որակի մասին վիճակագրական տվյալներ: Տեսչությունը անպայման ուսումնասիրում է այս հաշվետվությունները և եզրակացություններ է անում դպրոցի որակի մասին սրանց հիման վրա:
3. Ամեն տարի Տեսչությունը հավաքում է սովորողների առաջադիմության մասին տվյալներ: Դրանց 80 տոկոսը կազմվում է անկախ թեստերի կամ քննությունների արդյունքներից, որոնք երեխաները պարտադիր հանձնում են տարվա ընթացքում, իսկ մնացածը՝ դպրոցներից: Ինչքան ցածր լինի առաջադիմության ընդհանուր պատկերը, այնքան բարձր է տվյալ դպրոցի կրթական որակի ռիսկային լինելու ցուցիչը: Այս տվյալները հավաքվում են տարեկան առնվազն մեկ անգամ, և եթե տվյալները մտահոգիչ լինեն, Տեսչությունը կարող է ձեռնարկել ռադիկալ միջոցներ³:

Վերջին քսան տարիների ընթացքում Նիդեռլանդների կրթության ոլորտում նկատվում են երկու զուգահեռ միտումներ: Մի կողմից գոյություն ունի կրթական չափորոշիչների սահմանման և կրթության արդյունավետության բարձրացման համար պետական մակարդակի միջոցառումներ ձեռնարկելու մեծ պահանջարկ, մյուս կողմից էլ՝ պետական կանոնակարգումը նվազեցնելու և յուրաքանչյուր ուսումնական հաստատության պատասխանատվությունը բարձրացնելու անհրաժեշտություն: Սրա հիմնական նպատակը այնն է, որ ուսումնական հաստատությունն ինքը կարողանա իր քաղաքականությունը մշակել ու արդյունավետորեն կյանքի կոչել այն:

Կրթության տեսչության մասին օրենքում փորձ է արվել ներդաշնակության բերել այս երկու միտումները. օրենքը սահմանում է հետևյալ բանաձևը. «Տեսչության դերն է գնահատել կրթության որակը և խթանել այն, ինչպես նաև տեղեկացնել ոլորտի դերակատարներին

³ St' u The inspection process of the Dutch Inspectorate of Education, <https://english.onderwijsinspectie.nl/inspection/the-inspection-process-of-the-dutch-inspectorate-of-education>:

կրթության որակի մասին ընդհանուր առմամբ և առանձին հաստատություններում՝ մասնավորապես»:

Տեսչության առաքելությունն է.

«Արդյունավետ հսկողություն ավելի լավ կրթության համար»: Կրթության տեսչությունը պատասխանատու է դպրոցների և ուսումնական հաստատությունների հսկողության և գնահատման համար:

Տեսչությունը

• Օժանդակում է դպրոցներին և ուսումնական հաստատություններին՝ պահպանելու և շարունակաբար բարելավելու իրենց կողմից մատուցված կրթական ծառայությունների որակը:

• Գնահատում և խթանում է կրթական գործընթացի համապատասխանությունը կանոնակարգերին, որոնք ընդունված են Կրթության մասին օրենքի հիման վրա:

• Գնահատում է առանձին ուսումնական հաստատության տրամադրած կրթության որակը, ինչպես նաև Նիդեռլանդների կրթական համակարգի որակն ընդհանուր առմամբ:

• Գնահատում է ԲՈՒՀ-ի կրթական համակարգի որակը:

• Գնահատում և է ֆինանսական օրինականությունը:

• Գնահատում և նպաստում է երեխաների խնամքի ոլորտում տեղական ինքնակառավարման մարմինների իրականացրած գործողությունների օրինականության ու արդյունավետության բարձրացմանը:

• Մատչելի կերպով հաղորդակցության մեջ է մտնում իր բոլոր թիրախ խմբերի ու շահառուների հետ:

• Հաշվետվություններ է ներկայացնում հանրությանը:

Նիդեռլանդների փորձում հատկանշական է, որ Տեսչությունը, բացի այն, որ հսկողություն է իրականացնում դպրոցներում և այլ ուսումնական հաստատություններում տրամադրվող կրթության որակի հանդեպ, այն նաև հսկողություն է իրականացնում երեխաների խնամքով զբաղվող հաստատությունների կողմից մատուցվող ծառայությունների վրա:

Հատկանշական է նաև, որ Կրթության տեսչությունը լայն գործառնություն է իրականացնում բարձրագույն կրթության ոլորտում, այսպես, այն.

• Հսկողություն է իրականացնում և հաշվետվություններ է ներկայացնում բարձրագույն կրթության ոլորտում տեղի ունեցող զարգացումների վերաբերյալ՝ թեմատիկ հետազոտություններ իրականացնելու միջոցով: Տեսչությունը տարեկան զեկույց է ներկայացնում երկրի պառլամենտին կրթության ոլորտում առկա իրավիճակի վերաբերյալ:

• Ուսումնասիրում է՝ արդյոք բարձրագույն ուսումնական հաստատությունները գործում են օրենքների և կանոնակարգերի հիման վրա:

• Հետազոտություն է իրականացնում, երբ ԲՈՒՀ-ում իրականացրած ստուգումները հուսադրող չեն և հատկապես այն դեպքում, երբ խնդիրը դուրս է գալիս առանձին ուսումնական հաստատության շրջանակներից:

Թեմատիկ ոլորտի ստուգման պրակտիկան

Նիդեռլանդների փորձում հետաքրքրական է այն, որ Կրթության պետական տեսչությունը անցկացնում է նաև որոշակի թեմատիկ ոլորտի ստուգում/հետազոտություն: Այս տիպի

ստուգումների առարկան ոչ թե ամբողջ դպրոցն է, այլ որևէ որոշակի ոլորտը կամ առարկան: Ոլորտները կարող են շատ տարբեր լինել, թերևս դրանց ընտրությունը պայմանավորվում է նրանով, որ Տեսչությունը գտնում է, որ տվյալ ոլորտում բարելավումներ կատարելը հնարավոր է և անհրաժեշտ: Նման թեմատիկ ոլորտ կարող է լինել օրինակ ուսուցանելու որակը նախադպրոցական ուսումնական հաստատություններում կամ մաթեմատիկայի ուսուցանման ու սովորելու որակը միջնակարգ կրթության ուսումնական հաստատություններում:

Այս թեմատիկ ստուգումները նպատակ ունեն ուսումնասիրելու կրթական համակարգի որևէ ոլորտի/առանձին թեմայի որակը: Դրանք ուղղված չեն որևէ առանձին դպրոցում որոշակի թեմատիկ ոլորտի որակը գնահատելուն: Այսպիսի հետազոտությունների արդյունքները օգտագործվում են կրթության ոլորտի փորձագետների, որոշումներ կայացնողների, քաղաքական գործիչների կամ ՋԼՄ դաշտի ներկայացուցիչների հետ քննարկումներում:

Հետազոտությունների արդյունքում կազմված հաշվետվություններում Տեսչությունը նկարագրում է կրթության ոլորտում տեղի ունեցող կարևոր զարգացումները եւ ներկայացնում է հետազոտության բուն առարկան: Որոշակի թեմայի կամ առարկայի հետազոտության օրինակներն են.

- Ուսուցանման արդյունքները եւ ավելացված արժեքը նախնական կրթության համակարգում,
- Աուդիտորական ծախսերը,
- Երեխաների խնամքի հաստատությունների հանդեպ ՏԻՄ իրականացրած հսկողության որակը,
- Աուտիզմի սինդրոմով երեխաների ընդունելությունը որևէ կրթական հաստատություն,
- Ուսուցիչների ուսուցանման ծրագրեր,
- Միասնական քննություններ,
- Ծնողների կամավոր ներդրումը նախնական կրթական համակարգում:

Տեսչության կառուցվածքն ու զբաղեցրած դիրքը

Կրթության նախարարը պատասխանատու է և պաշտոնապես հաշվետու է Խորհրդարանի առաջ կրթության ոլորտի հսկողության համար, որն իրականացվում է Տեսչության կողմից: Ձևականորեն Տեսչությունը Կրթության, մշակույթի եւ գիտության նախարարության կազմում է, սակայն գործունեության առումով այն անկախ է: Կրթության տեսչության մասին օրենքի և կրթության մասին սահմանադրական օրենքի ուժով Տեսչությունն անկախ մարմին է և ազատ է իր աշխատանքային մեթոդների ընտրության և հաշվետվություններ ներկայացնելու մեջ: Չնայած նրան, որ այն գտնվում է Նախարարության կազմում և ըստ էության դրա մաս է, սակայն իր գործունեության շրջանակներում լիովին անկախ է: Մա բխում է ոչ միայն օրենքից, այլև պետական, հասարակական և քաղաքացիական մտածելակերպից, որի համաձայն Տեսչությունը կրթության վերահսկման ոլորտում միակ և ամենակարևոր մարմինն է, ուստի դրա գործունեության վերահսկումը առաջին հերթին կվտանգի կրթության որակն առհասարակ: Տեսչությունը նույնիսկ ֆիզիկապես է դուրս գտնվում Նախարարության

տարածքից: Սա խորհրդատվական մարմին չէ, ինչպես օրինակ Իռլանդիայի դեպքում, բայց նախարարության դիմումի ուժով կարող է նման ծառայություն մատուցել⁴:

Տեսչությունը խորհրդակցական մարմին չէ, բայց կարող է սեփական նախաձեռնությամբ կամ համապատասխան հարցման դեպքում խորհուրդներ տալ Կրթության նախարարին կամ Կրթության նախարարությանը իր իրականացրած ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա:

Տեսչությունն ինքն ամեն տարի ընտրում է իր ուսումնասիրությունների ուղղությունները: Տարեկան գործողությունների ծրագիրը կազմվում է ավագ գլխավոր տեսուչի կողմից տարբեր վերաբերելի խմբերի հետ խորհրդակցություններից հետո, ներառյալ Կրթության նախարարությանը: Կրթության նախարարը հաստատում է տարեկան գործողությունների ծրագիրը և ուղարկում է այն խորհրդարան: Տեսչությունն ինքն է որոշում իր աշխատանքային ծրագիրը: Կրթության նախարարը կարող է պահանջել, որ Տեսչությունը հետագոտի կրթության համակարգի մի որևէ ոլորտ:

Տեսչությունը ղեկավարվում է ավագ գլխավոր տեսուչի և գլխավոր տեսուչի կողմից: Ավագ գլխավոր տեսուչը պատասխանատու է միջնակարգ կրթության, բարձրագույն կրթության, մասնագիտական եւ մեծահասակների կրթության համար, իսկ նախնական և հատուկ կրթության ոլորտը, ինչպես նաև երեխաների խնամքի ոլորտը ընկնում են գլխավոր տեսուչի պատասխանատվության ներքո: Երկու պաշտոններում նշանակումներ է անում Կրթության նախարարը:

Տեսչությունը կարող է ինտենսիվ ստուգումներ անցկացնել դպրոցներում, որից հետո թերություններ հայտնաբերելու դեպքում կայարտադրի դպրոցին դրանք վերացնել և համապատասխանեցնել դպրոցի գործունեությունը Տեսչության պահանջներին: Միաժամանակ նշվում է, որ եթե դպրոցը Տեսչության կողմից նշված ժամանակահատվածում չկարողանա կամ խուսանավի այդ թերությունները շտկելուց, ապա Տեսչությունը կարող է դպրոցին ճնշել լրացուցիչ և ավելի ինտենսիվ մոնիտորինգով, կամ կիրառել սանկցիաներ, բայց թե ինչ սանկցիաներ կարող են լինել դրանք, չի նշվում⁵:

Տեսչությունը մեծ կարևորություն է տալիս իր գործունեության մասին հնչեցված գնահատականներին և տեսակետներին: Բոլոր դպրոցներում բավական մեծ հաճախականությամբ անցկացվում է տեսուչների գործունեության գնահատում. սա ընթանում է գաղտնի, և գնահատման արդյունքները կոնֆիդենցիալ են: Տեսչության ներսում նույնպես անցկացվում են անանուն գնահատումներ՝ տեսուչների գործունեության անաչառության վերաբերյալ: Սա շատ կարևոր է հատկապես այն դեպքերում, երբ կարիք կա համեմատականներ անցկացնել տարբեր շրջանների դպրոցներում տեսուչների աշխատանքի և դատողությունների մասին. սա հնարավորություն է տալիս չափել նրանց օբյեկտիվությունը: Ամեն տեսուչ գնահատվում է իր թիմի ղեկավարի, ինչպես նաև այն դպրոցի կողմից, որտեղ տեսուչն աշխատել է: Տեսչության գործունեության արտաքին վերահսկողությունն իրականացնում է Նիդեռլանդների հավատարմագրման խորհուրդը: Վերջին անգամ, երբ Տեսչության աշխատանքը գնահատվել է Խորհուրդի կողմից, եղել է 2014թ., որը հայտնեց, որ

⁴ St' u Dutch Inspectorate of Education Background information and working method of the inspectorate, Utrecht, October 2015 Department of International Affairs Dutch Inspectorate of Education, <http://www.sici-inspectorates.eu/getattachment/ab42ac74-fe55-45af-9ecc-85a757003fc6>:

⁵ St' u Dutch Inspectorate of Education Background information and working method of the inspectorate, Utrecht, October 2015 Department of International Affairs Dutch Inspectorate of Education, էջ 19, <http://www.sici-inspectorates.eu/getattachment/ab42ac74-fe55-45af-9ecc-85a757003fc6>:

Տեսչության գործունեությունը արդյունավետ է և համապատասխանում է դրա առջև դրված թիրախներին և դրա գործունեության մեջ չեն հայնաբերվել կեղծիքներ կամ այլ անումալիաներ⁶:

Կրթության պետական տեսչությունն Ալբանիայում

Ալբանիայում կրթության պետական տեսչությունն ընտրում է դպրոցները, որտեղ պետք է ստուգումներ անցկացնի մի քանի չափանիշներով, այսպես՝ աշակերտների քանակը, դպրոցի ցածր կամ միջին ցուցանիշները, աշխարհագրական դիրքը, և այլն: Հիմնական նպատակն է բոլոր տարածաշրջաններում տարբեր տիպի կրթական հաստատություններում արդյունավետ ազդեցություն ունենալ արդյունավետ պրակտիկա ձևավորելու միջոցով: Տեսչությունը ստեղծել է գնահատման հիմնական փաստաթղթերը որտեղ նշված են ստուգումների հիմնական ոլորտները, չափանիշները և գործիքները, ինչպես նաև կիրառելի մեթոդաբանությունը: Այս փաստաթղթերը օգնում են շահագրգիռ անձանց ինքնագնահատման գործընթացում: Այս փաստաթղթերը նաև օգնում են ուսուցիչներին և տնօրեններին մի շարք իրականացվելիք գործողությունների կիրառման և դրանք ընկալելու գործընթացում: Տեսչությունը ապահովում է դպրոցներին իր կողմից հրապարակված ուղեցույցերով:

Հետաքրքրական է, որ Ալբանիայում ստուգումները լինում են ընդհանուր/ամբողջական/թեմատիկ և որոշակի ուղղվածություն ունեցող: Այս ստուգումների միջոցով Տեսչությունը կրթական համակարգի մասին տեղեկություններ է քաղում և օգտագործում այդպիսիք «Տեղեկատվական նամակներ» կազմելու մեջ, այդ փաստաթղթերը բոլոր հետաքրքրված անձանց հնարավորություն են տալիս կրթական համակարգի որևէ հատվածի մասին պատկերացում կազմել: Տեղեկատվական նամակները հիմնականում անդրադառնում են այնպիսի խնդիրներին ինչպիսիք են՝ դպրոցի տարեկան, ծրագիրը, ուսումնական պլանը, ուսուցանումն ու սովորելը, աշակերտներին գնահատելը, դպրոցի միջավայրը և էթիկան դպրոցում, մարդկային և ֆինանսական ռեսուրսների կառավարումը, լաբորատորիաների արդյունավետ օգտագործումը և այլն:

Հատկանշական է նաև, որ Ալբանիայի տեսչությունը, նպատակ ունենալով առավել արդյունավետորեն հաղթահարել մինչ ԲՈՒՀ-ական կրթական համակարգում առկա խնդիրներն ու մարտահրավերները, մի շարք նախագծեր են իրականացնում ոլորտի հետ կապված միջազգային կազմակերպությունների հետ, որոնցից են օրինակ՝ Save the children, UNICEF և այլն:

Նաև հետաքրքրական է այն, որ Ալբանիայում տեսչության գործունեության կարևոր ուղղություններից մեկն է կրթական հաստատությունների լավագույն փորձի հայտնաբերումը և տեղեկությունների հրապարակումը: Լավագույն փորձի օրինակները հայտնաբերվում են փորձագետների կողմից՝ ուսուցիչների և ուսմասվարների հետ ձևավորած հետևյալ համագործակցությունների արդյունքում՝ ստուգումնային, գնահատող, մոտիվացիոն, տեղեկատվական, խորհրդատվական, աջակցող: Որպես լավագույն փորձ դիտարկվում է ուսուցիչների արդյունավետ և դրական արդյունքներ ստեղծած փորձը, արդյունավետ ուսումնական պլանը, դպրոցի ներսում գործող ոլորտները:

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 32:

Նաև Ալբանիայի օրինակում հետաքրքրական է այն, որ առանձնակի ուշադրություն է տրվում դպրոցում տիրող միջավայրին և այն նույնպես ստուգումների արդյունքում դիտարկվում է: Համարվում է, որ դպրոցը ոչ միայն մի վայր է, որտեղ գիտելիք է տրվում, այլև մի տեղ որտեղ ապրելակերպ և վարքագծի մոդելներ են առաջարկվում: Այսպիսով, Ալբանիայում ստուգումներ են անցկացվում նաև «Դպրոցի միջավայրը և էթիկան դպրոցում» և «Վերաբերմունքը աշակերտի հանդեպ» թեմաներով, որոնց ընթացքում հետազոտվում են ուսումնական հաստատության առկա վիճակը վերոհիշյալ առարկաների շուրջ: Զեկույցից հետո աշակերտները խթանվում են իրենց անձային աճում, ինչը հնարավոր է դարձնում ժողովրդավար հասարակությունում անհատներ և քաղաքացիներ կրթելը:

Ալբանիայում կառուցվածքային որոշակի բարեփոխումներից հետո նկատվում է դպրոցի ինքնավարության խթանման միտում: Այսպես նախաբուհական կրթության ծրագրով սահմանվող նորմատիվ դրույթները դպրոցի համար երաշխավորում են առավել մեծ ինքնավարություն և իշխանություն որոշումներ կայացնելու գործում: Դպրոցի տնօրենները, այլ ղեկավարները, ուսուցիչներն ու դպրոցի այլ ներկայացուցիչները կարիք ունեն հստակորեն հասկանալու դպրոցում իրենց գործառույթները և դրանց իրականացման եղանակները: Դրան հասնելու համար Տեսչության կողմից լուրջ ջանքեր են գործադրվել ուղիների, գործընթացների, ծրագրերի, մեթոդների և մասնագիտական համագործակցությունների ձևավորման համար՝ հիշատակված ծրագրի նորմատիվ դրույթների վերլուծության միջոցով: Զարգացվել են գնահատման և հետազոտման համապատասխան գործիքները, որպեսզի դպրոցները կիրառեն այդ դրույթները: Տեսչության կողմից դպրոցին տրամադրված նյութերը նպատակ ունեն՝

- Աջակցել տնօրեններին, ղեկավարներին, ուսուցիչներին պատշաճ կերպով կիրառել նորմատիվ դրույթների իրավական նորմերը:

- Պարզեցնել ներքին գնահատման գործընթացը կապված իրավական հիմնահարցերի հետ:

- Օժանդակել ստուգողների կողմից իրականացվող արտաքին գնահատման գործընթացը:

Տեսչությունը բավականին մեծ ջանքեր է ներդրել ուսուցիչների աշխատանքը պարզեցնելու գործում, ինչպես նաև վերջիններիս՝ աշակերտների հետաքրքրություններին և կարողությանը համապատասխան ուսումնական ծրագրեր ձևավորելու և դրանք իրագործելու կարողությունները զարգացնելու հարցում:

Ներքին գնահատման և ինքնագնահատման մշակույթի լայն տարածումը ընկալվել է որպես հիմնարար քայլ դեպի կայուն զարգացում անհատական, ինստիտուցիոնալ և ռեգիոնալ մակարդակներում, ներառյալ ամբողջ կրթական համակարգը: Ալբանիայում հետաքրքրական պիլոտային ծրագիր է իրականացվել. դրա ընթացքում հինգ միջնակարգ դպրոցի հետ աշխատանք է իրականացվել դպրոցի ինքնագնահատումը զարգացնելու ուղղությամբ: Ինքնագնահատման գործընթացի ընթացքում դպրոցի մասնագետների, ինչպես նաև արտաքին գնահատողների կողմից կիրառվել են միննույն մեթոդոլոգիան և գործիքները: Դպրոցները ամփոփեցին իրենց ինքնագնահատման արդյունքները, դրանք համեմատվեցին արտաքին գնահատման արդյունքների հետ: Տնօրենները և դպրոցների՝ ինքնագնահատում անցկացնող թիմերը գտան, որ գործընթացը շատ ակտիվ է, ներառական է և նշեցին այն պարբերաբար անցկացնելու անհրաժեշտությունը: Ինքնագնահատման գործընթացը բերում է նաև հաշվետվողականության ինստիտուցիոնալ մակարդակում: Ինքնագնահատումը դպրոցում պետք է իրականացվի տվյալների սիստեմատիկ հավաքագրման,

տեղեկատվության վերլուծության հիման վրա տարբեր մեթոդների և գործիքների կիրառմամբ:

Ներկայիս օրենսդրությամբ դպրոցի ինքնագնահատումը ներառվել է յուրաքանչյուր դպրոցի ծրագրում: Ինքնագնահատման այս գործընթացում օգտագործվում է հետևյալ գործիքը. դպրոցի առաջադիմության քարտ, այն կոչված է ապահովելու տեղեկատվության հավաքագրումն ու արդյունավետությունը: Այն տրամադրում է տեղեկություններ դպրոցի ձեռքբերումների մասին ուսումնական տարվա կտրվածքով:

Առաջադիմության քարտը ներկայացնում է տեղեկատվություն դպրոցի ծառայությունների որակի մասին մի շարք ստանդարտացված ցուցանիշներին համապատասխան: Քարտը գործիք է դպրոցի ինքնագնահատման և ստուգումների գործընթացներում: Դպրոցի առաջընթացի քարտը ծնողների, տնօրենների, աշակերտների, տարածաշրջանային կրթական վարչություններին, համայնքին և շահագրգիռ անձանց տեղեկատվություն է տրամադրում, որն ուսումնասիրելով վերջիններս կարող են տարբեր ցուցանիշների միջոցով վերլուծել դպրոցի արդյունքները և համեմատել դրանք այլ դպրոցների առաջխաղացման արդյունքների հետ: Սա կօգնի ծնողներին և համայնքին պատկերացում կազմել դպրոցի գործունեության և դրա կարիքները բարելավելու մասին, այսպիսով նաև հնարավորություն տալով վերջիններս ներառվել որոշումների կայացման գործընթացում:

Դպրոցի ղեկավարները օգտագործում են դպրոցի առաջխաղացման քարտը որպես գլխավոր ցուցիչ խորքային վերլուծության մեջ, որը հետագայում ընկնում է դպրոցի տարեկան ծրագրի կազմման հիմքում, ինչպես նաև իրենց գործունեության գնահատման գործում: Դպրոցները, որոնք լավ առաջխաղացում ունեն որոշ ոլորտներում կարող են հանդիսանալ դրական փորձի օրինակ մյուս դպրոցների համար: Որոշ ժամանակ անց իրականացվում է դպրոցի առաջընթացի վերագնահատումը: Դպրոցում տեսչության կողմից ստուգումներից հետո, Տարածքային կրթական վարչությունները և Կրթական գրասենյակները կրում են դպրոցների բարելավման գործընթացին աջակցելու պարտականությունը: Այդ կառույցները նաև դիտարկում են դպրոցի առաջխաղացումը՝ Տեսչության կողմից տրված խորհուրդների ուղղությամբ:

Կրթության պետական տեսչությունն Անգլիայում

1993թ.-ից Անգլիան դպրոցներում գործի է դրել հետստուգումնային միջամտության համակարգ, որը տապալվել է ստուգումների արդյունքում. այդ կառույցը կոչվում է Օֆստեդ: Օֆստեդը առանձնացված է թե՛ Կրթության դեպարտամենտից, թե՛ տեղական իշխանություններից, որոնք տեղական մակարդակում ծառայություններ են մատուցում:

1998թ.-ին Դպրոցի չափանիշների և կառուցվածքի մասին օրենքի հրապարակումից հետո պարտականությունների մեծ ծավալ դրվեց տեղական իշխանությունների վրա, որոնք պետք է վերահսկողի դիրքում հանդես գան ձախողված դպրոցների հետ աշխատանքում ստուգումներից առաջ և հետո: Վերջին տարիներին, թերևս, շատ դպրոցներ հեռանում են տեղական իշխանության վերահսկողության մոդելից և սկսում գործել որպես ակադեմիաներ: Այնուամենայնիվ, տեղական իշխանությունները հիշատակված գործընթացում ունեն հետևյալ իրավասությունները՝

- Լրացուցիչ ղեկավարներ նշանակել այնտեղ, որտեղ ղեկավարումը կաղում է:

- Կասեցնել ղեկավար մարմնին պատվիրակված լիազորությունները և նշանակել ժամանակավոր գործադիր խորհուրդ, որը կվերահսկի դպրոցը:

- «Նախազգուշացնող ծանուցում» հրապարակելը և ներկայացնելը դպրոցին այն պարագայում, երբ առկա են մտահոգող դիտարկումներ ցածր ստանդարտների, ղեկավարման ու կառավարման, ինչպես նաև դպրոցում անվտանգության վերաբերյալ: Նախազգուշացնող ծանուցումները ուսումնասիրվում են Տեսչության կողմից, որը կարող է գործել դրանցով առաջնորդվելով: Երբ դպրոցը ցածր ցուցանիշներ է ունենում ստուգումների արդյունքում, տեղական իշխանությունը պետք է անմիջապես որոշում կայացնի՝ արդյոք հարկ է գործի դնել վերը նկարագրված իրավասություններից մեկը:

Այնուամենայնիվ, համարվում էր, որ տեղական իշխանությունը պետք է աջակցություն տրամադրի, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում նաև միջամտություն, և սա միշտ չէ որ պատշաճ կերպով ապահովվում էր, այդպիսով 2002թ.-ից Պետքարտուղարը իրավասություն ունեցավ տեղական իշխանությունից պահանջելու, որ այն ապահովի աջակցության արտաքին աղբյուր. ժամանակի ընթացքում նման աջակցության արտաքին աղբյուր են հիմնականում դարձել բարձր առաջադիմություն ունեցող դպրոցները:

Տեսչության դերը հիմնականում հանգել է դպրոցի առաջխաղացումը մշտադիտարկելուն, թերևս տեսչությունը ցածր առաջադիմություն ունեցող դպրոցներին տրամադրել է խորհրդատվություն և ուղղորդում, որի հետևանքով այն դուրս է գալիս գուտ «ստուգողի» շրջանակներից: Օրինակ, Տեսչությունը դպրոցների կառավարման խորհրդին հրավիրել է բարելավման ծրագիր գրելու վերաբերյալ թրեյնինգային ծրագրերին, որի հետևանքով տեսչությունը գնահատել է և մեկնաբանություններ է արել թե՛ դպրոցի, թե՛ տեղական իշխանության կազմած ծրագրերի վերաբերյալ և այլն⁷:

Անգլիայում առանձնացվում են ստուգումների հետևյալ տեսակները.

- Ընդհանուր/համակարգային ստուգումներ: Այս ստուգումների ժամանակ մի այցի ընթացքում ուսումնասիրության առարկա է դառնում դպրոցում ուսուցանման արդի վիճակը: Ստուգումների ընթացքում նաև ուսումնասիրվում է, թե որքանով է դպրոցի գործունեությունը համահունչ դպրոցի չափանիշները սահմանող կանոնակարգերին:

- Կանոնակարգերի պահպանման վերաբերյալ ստուգումներ: Նման ստուգումներ իրականացվում են այն դպրոցներում, որոնք չեն ապահովում սահմանված չափանիշները: Այս ստուգումների ընթացքում ստուգվում է դպրոցի գործունեության համապատասխանությունը բոլոր վերաբերելի կանոնակարգերին:

Ստուգման մեթոդները

Որոշումները, որոնք տեսուչները կայացնում են, հիմնված են մինչ ստուգումները իրականացվող գործընթացի և ստուգումների ընթացքում անմիջապես հավաքագրվող տվյալների վրա: Մինչ ստուգումները հավաքագրված ինֆորմացիան հիմնականում փաստաթղթերի տեսքով է: Անհրաժեշտ փաստաթղթերի տեսակները կախված են անցկացվելիք ստուգայցի նպատակից և ծավալներից: Ամբողջ ծավալով ստուգումների ընթացքում փաստաթղթերի ծավալը շատ լայն է, այսպես ուսումնասիրության են ենթարկվում՝

⁷ Տե՛ս Brian Wilcox, Making school inspection visits more effective: The English experience, UNESCO 2000, <http://unesdoc.unesco.org/images/0012/001202/120289E.pdf>, էջ 35-39:

- Տեսուչների կողմից մշակված նախաստուգումնային ձևերը և/կամ հարցաշարները:
- Դպրոցի ազդագիրը/prospectus:
- Դպրոցի զարգացման ծրագիրը կամ նույնաբովանդակ մի փաստաթուղթ:
- Տարեկան զեկույցը ծնողների համար:
- Կառավարող մարմնի և/կամ տեղական իշխանության՝ ժողովների ամփոփագրերը:
- Ուսումնական պլանները, քաղաքականությունը, աշխատանքի սխեմաները:
- Քաղաքականության հետ առնչվող այլ փաստաթղթեր:
- Դպրոցի դասացուցակը:
- Այլ տեղեկատվություն, որը դպրոցը ցանկանում է ուշադրության արժանացնել⁸:

Դպրոցներում ստուգում իրականացնելիս տեսուչները հիմնականում որդեգրում են գործընթացին հետևողի դերը՝ ձգտելով զերծ մնալ մասնակցությունից: Գործնականում, բավական հաճախ, ստացվում է այնպես, որ տեսուչը ավելի ինտերակտիվ դեր է ունենում, օրինակ երբ գրուցում է երեխաների հետ՝ հարցնելով նրանց՝ իրենց կողմից կատարվող աշխատանքի մասին⁹:

Հարցազրույցներ

Տվյալների հավաքագրման մեթոդներից մեկն է ուսուչիների և դպրոցի գործունեության մեջ ներգրավված այլ անձանց հետ քննարկումները: Նախկինում սա հաճախ արվում էր ոչ ֆորմալ զրույցների միջոցով, ներկայումս տեսուչները նկատում են առավել շատ ֆորմալ հարցազրույցներին անցնելու անհրաժեշտությունը: Առանձնացվում են կառուցվածքային և ոչ կառուցվածքային հարցազրույցների տեսակները: Կառուցվածքային հարցազրույցները հաճախ նման են բանավոր անցկացված հարցաշարների, այստեղ հարցազրույցի սխեման հստակորեն կառուցված է, կազմված են հստակ թիրախ/հարցադրում ունեցող հարցեր: Այս մեթոդը օգտագործվում է, երբ հարցազրուցավարը հստակ պատկերացում ունի իր ուսումնասիրության առարկայի մասին:

Ոչ կառուցվածքային հարցազրույցները բաց են և հնարավորություն են տալիս հարցվողին ազատ արտահայտվել քննարկվող առարկայի մասին: Այստեղ տեսուչը իր օրակարգում ունի հստակ խնդիրներ ու մտահոգության ոլորտներ, բայց համեմատաբար ազատ ոճում է անցկացնում դրանց շուրջ քննարկումը: Հարցվողներին առաջարկվում է իրենց կարծիքները արտահայտել հարցազրույցի հստակ առարկայի վերաբերյալ: Օրինակ, ուսմասվարը կարող է հարցվել դպրոցի անձնակազմի շարունակական զարգացման մասին:

Այսպիսով, ստուգման օրակարգում դրված հարցերը կարող են ինքնաբերաբար վերհանվել, իսկ թե ոչ՝ հարցվողներին կառաջարկվեն հստակ հարցադրումներ: Մեծ հաճախանակություն են սկսել ձեռք բերել աշակերտների հետ հարցազրույցների անցկացումը, քանի որ աշակերտների թիվը շատ մեծ է, անհրաժեշտ են առանձնացման ինչ-որ մեխանիզմներ: Խմբային հարցազրույցների մեթոդը լայնորեն կիրառվում է. այստեղ հավաքվում են մարդիկ, որոնց առաջարկվում է որոշակի առարկայի շուրջ քննարկում անցկացնել հարցազրուցավարի ղեկավարման ներքո: Այս մեթոդը օգտագործվում է ուսուցիչների, աշակերտների և անգամ ծնողների հետ:

⁸ Տե՛ս Brian Wilcox, Making school inspection visits more effective: The English experience, UNESCO 2000, <http://unesdoc.unesco.org/images/0012/001202/120289E.pdf>, էջ 31:

⁹ Նույն տեղում, էջ 32:

Թերևս հարցազրույցները ոչ միշտ են, որ դասալսումից առանձնացված ֆորմալ գործողություններ են: Դասալսման ընթացքում ուսուցիչների հետ հարցազրույց անցկացնելը կարող է շատ ավելի բնական լինել ու հարմար: Այս դեպքում ուսուցիչների կարծիքները ներառվում են ուսումնասիրության արդյունքների մեջ: Սակայն ֆորմալ հարցազրույցները մշտապես որոշ կազմակերպչական խնդիրներ են առաջ բերում, օրինակ՝ դասերի տապալումը: Հետևաբար, որոշ դեպքերում օգտագործվում են հարցաթերթիկներ՝ ուսումնական գործընթացը չխաթարելու համար:

Հարցաթերթիկային (անկետային) հարցում

Եթե օգտագործվում է հարցաշարերի մեթոդը, այն պետք է կառուցված լինի այնպես, որ հարցերին հնարավոր լինի հեշտ ու արագ պատասխանել: Նաև կարևոր է, որ հարցաշարի արդյունքները հնարավոր լինի արագորեն վերլուծել, որպեսզի տեղեկատվությունը, որը դրանք պարունակում են, հնարավոր լինի շուտափույթ ուսումնասիրել: Հարցաշարի լավ օրինակ է OՖՍՏԵԴ տեսչության ստուգումից առաջ բոլոր ծնողներին ուղարկվող հարցաշարը:

Փաստաթղթերի ուսումնասիրություն

Սովորաբար տեսուչներին հասանելի է փաստաթղթերի լայն ծավալ: Դրա հիմնական մասը կազմում են դպրոցի կողմից ներկայացված փաստաթղթերը: Նման նյութերի ծավալը նշանակալի է նույնիսկ փոքր դպրոցներում, այսպիսով անհրաժեշտ նյութերի ծավալը պետք է որոշվի զգուշորեն: Տեսուչների համար հիմնականում կարևոր են հետևյալ փաստաթղթերը՝ դպրոցի ազդագիրը, ուսումնական պլանը, ուսումնական քաղաքականության հետ կապված այլ փաստաթղթեր, ժողովների արձանագրություններ, դպրոցի ստատիստիկ տարբեր տվյալներ:

Փաստաթղթերի ուսումնասիրությունը երկու հիմնական նպատակի է ծառայում՝

- Դպրոցի վերաբերյալ նախնական պատկերացում կազմելու, մոտալուտ ստուգումների հնարավոր խնդրո առարկաները առանձնացնելու համար:

- Այլ աղբյուրներից քաղած տվյալների հիման վրա արված դիտարկումները հիմնավորելու համար:

Դպրոցի փաստաթղթերի ուսումնասիրման մի առանձնահատուկ օրինակ է աշակերտների աշխատանքների ուսումնասիրության ներկայումս տարածված պրակտիկան:

Հետադարձ կապ

Ծնողներին և աշակերտներին առաջարկվում է լրացնել կոնֆիդենցիալ հարցաշարեր մինչ ստուգումները դպրոցում: Պատասխանները կանխորոշում են այն ոլորտները, որոնց հատուկ ուշադրություն է տրվում ստուգումների ընթացքում:

Նաև հատկանշական է, որ դպրոցի ուսուցչական կազմը կարող է նախաձեռնել կոնֆիդենցիալ քննարկումներ տեսուչների հետ մինչ վերջիններիս այցելությունը դպրոց:

Բուլղարիայի կրթական համակարգը

Բուլղարիայում գոյություն չունի Կրթության կենտրոնացված տեսչություն: Կրթական համակարգի կառավարումը և վերահսկողությունը դրա հանդեպ իրականացվում է քսանութ տարածքային կրթական տեսչությունների կողմից: Դրանք հանդիսանում են Կրթության,

երիտասարդության և սպորտի մասնագիտացված տարածքային մարմինները: Տեսչությունները ունեն պլանավորման, համակարգման և մշտադիտարկման գործառույթներ դպրոցի գործունեության հանդեպ: Տեսչությունները նաև ակտիվ դերակատարում ունեն տարեկան պետական քննությունների և ԲՈՒՀ ընդունելության քննությունների պատրաստման, կազմակերպման և կառավարման գործընթացներում:

Ստուգումները դպրոցներում իրականացվում են Կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված կանոնակարգերին, ինչպես նաև համապատասխան տեսչության ստուգումների պլանի համաձայն: Բացի պլանավորած ստուգումներից, կան նաև բողոքների և առկա խախտումների վերաբերյալ դիմումների հիման վրա իրականացվելիք ստուգումներ: Պարտադիր ցուցումների կատարման հանդեպ վերահսկողությունը իրականացվում է տարածքային կրթական տեսչությունների կողմից: Դպրոցի մանկավարժ-մասնագետները և տարածքային կրթական տեսչության փորձագետները ներգրավվում են ստուգումներից հետո դպրոցի առաջխաղացումը խթանելու գործընթացում: Դպրոցի տնօրենը պատասխանատվության է կանչվում, եթե պարտադիր ցուցումները չեն իրականացվում:

Կրթության տեսչությունը Դանիայում

Ինչպես և Հայաստանի Հանրապետությունում և աշխարհի բազմաթիվ երկրներում, այնպես էլ Դանիայի կրթական համակարգի հիմնական դերակատարը Կրթության նախարարությունն է: Սակայն անհրաժեշտ է շեշտել մեկ տարբերություն: Դանիայի Կրթության նախարարության համակարգման առարկա են միայն երկրի դպրոցները. բարձրագույն ուսումնական հաստատությունների վերահսկման կամ մոնիտորինգի հարցերով զբաղվում է Գիտության, տեխնոլոգիաների և նորամուծությունների/ The Ministry of Science, Technology and Innovation/ նախարարությունը¹⁰: Չնայած այսպիսի տարանջատման՝ այս երկու մարմիններից ոչ մեկը, ըստ էության, չի իրականացնում կրթօջախի գործունեության գնահատում, այլ կերպ ասած՝ տեսչական մարմին չէ:

Այս ուղղությամբ առաջին քայլը արվեց 1999թ., երբ հիմնադրվեց Դանիական գնահատման ինստիտուտը /the Danish Evaluation Institute (EVA)/, որը չնայած նրա, որ հանդիսանում է ԿՆ մաս, այնուամենայնիվ, անկախ մարմին է¹¹: Այս առումով սա բավականին առաջադիմական քայլ համարվեց Եվրոպայում, քանի որ պետական մակարդակով հիմնադրվեց մի մարմին, որն իր գործունեության շրջանակներում իրավասու էր իրականացնել նախակրթարաններից մինչև բարձրագույն ուսումնական և հետբուհական հաստատությունների գործունեության, կրթության որակի, դասավանդման մեխանիզմների պարտադիր և սիստեմատիկ գնահատում:

Կրթության որակի գնահատման, ինչպես նաև դասավանդման կարգի, մեթոդների և դասավանդվող առարկաների արդյունավետության քննման համար Ինստիտուտը պարբերաբար ուսումնասիրում է կրթական ծրագրերը, դրանց բովանդակությունը, ինչպես նաև դրանց միջև առկա փոխկապակցվածությունը: Ինստիտուտը մշակում է կրթության գնահատման բավականին հաջող մեթոդներ՝ համադրելով միջազգային լավագույն փորձն ու ազգային առանձնահատկությունները:

¹⁰ Տե՛ս The Inspectorate of Education of Denmark, էջ 14, <file:///C:/Users/User/Downloads/87075.pdf>:

¹¹ Տե՛ս նույն տեղում, էջ 14:

Սակայն Գնահատման ինստիտուտը երկար ժամանակ չմնաց այս ոլորտի տեսչական միակ մարմինը, քանի որ 2006թ. սեպտեմբերի 1-ին ԿՆ կողմից հիմնադրվեց Տարրական և ստորին միջնակարգ կրթության գնահատման և որակի զարգացման խորհուրդը /The Council for the Evaluation and Quality Development of Primary and Lower Secondary Education (Skolerådet)¹²: Այս մարմինն, ինչպես և Գնահատման ինստիտուտը, անկախ մարմին է, սակայն ունի հստակ, կարևոր գործառույթ. Խորհուրդը պարտավոր է իրականացնել միայն պետական և մունիցիպալ /Folkeskole/ դպրոցների կրթության զարգացումն ու դրա գնահատումը: Folkeskole հիմնադրվել է դեռ 1814թ. և հանդիսանում է ազատ, հանրային դպրոցների համակարգ՝ իր մեջ ներառելով բոլոր մունիցիպալ տարրական և միջնակարգ դպրոցները: Հատկանշական է, որ այս դպրոցների կրթության համակարգման ողջ պատասխանատվությունը ընկնում է քաղաքային խորհրդի վրա, այսինքն՝ մունիցիպալ իշխանությունն ինքն է որոշում դպրոցի գործունեության իրականացման կարգը՝ գործող օրենքներին համապատասխան: Սրանից հետևում է, որ քաղաքային իշխանությունը կարող որոշել նոր մարտահրավերներ դնել դպրոցի առջև կամ օրինակ ավելացնել դասավանդվող կոնկրետ առարկայի դասաժամերը¹³:

Նույն թվականին Դանիայի ԿՆ որոշեց հիմնադրել մեկ այլ մարմին՝ Տարրական և ստորին միջնակարգ կրթության գնահատման և որակի զարգացման գործակալությունը /the Agency for the Evaluation and Quality Development of Primary and Lower Secondary Education was established (Skolestyrelsen)/, որն ըստ էության ունի նույն գործառույթներն, ինչ Խորհուրդը, սակայն դրանք իրականացնում է ոչ միայն պետական, այլ նաև մասնավոր, անկախ դպրոցներում՝ այսպիսով հանդես գալով Կրթության նախարարության անունից: Գործակալությունն իրավասու է նաև իրականացնել դպրոցների գործունեության պարբերական մոնիտորինգ, ինչպես նաև քննություններ անցկացնել այդ դպրոցներում՝ ԿՆ կողմից մշակված թեստերի, այսպես ասած՝ ազգային թեստերի հիման վրա¹⁴:

Չնայած այս խրթին տարանջատման՝ անհրաժեշտ է շեշտել կարևոր մի նկատառում: Դանիայում պետական տեսչության ֆորմալ համակարգ գոյություն չունի և հետևաբար չկա ստուգումների արդյունքներով ֆորմալ պահանջներ ներկայացնելու պետական համակարգ: Հաշվետվություններ ներկայացնելու գործառույթը թողնված է տեղական իշխանություններին¹⁵: Այս պնդումը ճշմարիտ է Folkeskole-ի պետական, մունիցիպալ դպրոցների պարագայում, իսկ մնացած այլ կրթական հաստատությունները ինքնակառավարվող են, ունեն կառավարիչների անկախ խորհուրդներ և ֆինանսավորվում են մեկ սովորողին հասնող միանվագ կանխիկ դրամաշնորհներով¹⁶:

Սահմանելով կրթության մասին բոլոր օրենքները՝ Դանիական պառլամենտը եկել է այն եզրակացության, որ կրթության ոլորտում անկախությունն ու որոշումներ կայացնելու ազատությունը կրթական բարձր որակ ապահովելու գործում առանցքային տեղ ունեն, իսկ կրթության որակն իր հերթին ունի կենտրոնական դիրք, ուստի դրան հասնելու համար անհրաժեշտ է զերծ պահել կրթօջախներին անհարկի ճնշումներից: Այս համատեքստում պետք է հասկանալ Կրթության նախարարության հիմնական գործառույթը, այն է՝ հետևել, որ

¹² Sté u The Inspectorate of Education of Denmark, էջ 15, <file:///C:/Users/User/Downloads/87075.pdf>

¹³ Նույն տեղում, էջ 5:

¹⁴ Նույն տեղում, էջ 16:

¹⁵ Sté u Adrian Gray HMI, MA Executive Committee, SICI, Supporting school improvement: the role of inspectorates across Europe A report from the Standing International Conference of Inspectorates (SICI), էջ 7, տե՛ս <http://www.sici-inspectorates.eu/getattachment/5caebee9-84c1-41f0-958c-b3d29dbaa9ef>:

¹⁶ Sté u The Inspectorate of Education of Denmark, էջ 17-18, <file:///C:/Users/User/Downloads/87075.pdf>:

վերը նշված սկզբունքի իրականացումը ընթանա գործող կանոնների համաձայն, կրթական ծրագրերի առջև դրված նպատակները բարեհաջող իրականացվեն, իսկ կրթության որակը պահպանվի և գնալով առավել զարգանա¹⁷: Այսինքն, Կրթության նախարարությունը հիմնականում կրում է խորհրդատվական մարմնի բնույթ բոլոր դպրոցների համար և կարող է օժանդակել կոնկրետ առարկայի դասավանդումը կազմակերպելու հարցում:

Այսպիսով, Դանիան չունի դիտորդների կամ տեսուչների առանձին թիմ, որը կայցելի մունիցիպալ դպրոցներ՝ դրա կատարողականը քննարկելու կամ ուսումնասիրելու:

Սակայն նույնը հնարավոր չէ ասել անկախ, մասնավոր դպրոցների համար: 2008թ. ի վեր մասնավոր դպրոցների առջև դրվեց գնահատման և վերահսկման յուրօրինակ մեխանիզմ, որը չնայած որ պարտադիր է, բայց դպրոցն այստեղ ունի գնահատման մեթոդները ընտրելու մեծ ազատություն¹⁸: Գնահատման ընթացքը բաղկացած է մի քանի փուլերից¹⁹.

- **Ինքնագնահատում:** Յուրաքանչյուր մասնավոր դպրոց պետք է անցկացնի իր սեփական գործունեության գնահատում՝ հենվելով դպրոցի անձնակազմի հաղորդած տվյալների, դիտորդությունների, առաջարկությունների վրա: Գնահատման կարգն ու մեթոդները որոշում է ինքը դպրոցը և հենց դպրոցն է սահմանում այն բաղադրիչները, որոնք պարտադիր պետք է ներառվեն գնահատման մեջ: Սրա արդյունքները պարտադիր պետք է հրապարակվեն դպրոցի պաշտոնական կայքում. ինքը՝ գնահատումը, անանուն է:

- **Ծնողների կողմից գնահատում:** Որոշ մասնավոր դպրոցներ փորձել են հեշտացնել ծնողի կողմից կատարվող գնահատման ընթացքը և տարվա ընթացքում մի քանի անգամ հրավիրում են մասնակցելու տարբեր առարկաների դասաժամերին՝ հնարավորություն տալով ծնողներին ուսուցման մասին պատկերացում կազմել ոչ միայն երեխայի պատմածներից, այլև անմիջապես ներսից տեսնել կրթության ընթացքը: Համենայն դեպս, դպրոցն ինքն է որոշում ինչպես ընդգրկել ծնողին կրթության որակի գնահատման ընթացքի մեջ: Եթե մեկ կամ մի քանի ծնողներ դժգոհություններ են հայնտում կրթական ծրագրի որակի հարցում, ապա կարող են դրանք ներկայացնել դպրոցի Խորհրդին և գրավոր հայտնել իրենց դժգոհությունները:

- **Արտաքին աուդիտ:** Արտաքին աուդիտն իրականացնում է ծնողների կողմից ընտրված տեսուչը, ով ընտրվում է տարեկան ընդհանուր ժողովի նիստի ժամանակ: Խորհուրդը հնարավորություն է տալիս ծնողներին նույնիսկ ընտրել մի քանի տեսուչ, այդ թվում և քաղաքային՝ մունիցիպալ դպրոցների տեսուչներից: Սակայն տեսուչների հանդեպ ունեցած պահանջները բավականին խիստ են: Ավելորդ է խոսել այն մասին, որ նրանք պետք է գերազանց տիրապետեն գրավոր և բանավոր խոսքի՝ Դանիայի պետական լեզվին, մանկավարժության ոլորտում ունենան լուրջ ձեռքբերումներ և փորձ, չլինեն դպրոցում սովորող երեխայի ծնող, դպրոցի խորհրդի անդամ, չաշխատեն դպրոցում, չլինեն որևէ այլ մասնավոր դպրոցի խորհրդի անդամ:

Ծնողի կողմից ընտրված տեսուչը վարձատրվում է իր աշխատանքի դիմաց ամեն տարի, և վարձատրության չափը որոշվում է կա՛մ սովորողների քանակից, կա՛մ նախարարության կողմից: Տեսուչն ընտրվում է 4 տարի ժամկետով՝ վերընտրման իրավունքով:

Տեսուչը պարտավոր է տարեկան հաշվետվություն ներկայացնել իր աշխատանքի մասին և շաբաթական առնվազն մեկ անգամ, այնսինքն՝ մեկ լրիվ օր, մասնակցել այդ օրվա բոլոր

¹⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 18:

¹⁸ Տե՛ս The Inspectorate of Education of Denmark, էջ 19, <file:///C:/Users/User/Downloads/87075.pdf>:

¹⁹ Նույն տեղում, էջ 20:

առարկաների դասաժամերին: Հաշվետվությունը ներկայացվում է ծնողներին տարեկան ընդհանուր ժողովի ժամանակ և այն ենթակա է հրապարակման դպրոցի պաշտոնական կայքէջում:

Հաշվետվությունը պարտադիր պետք է ընգրկի հետևյալը²⁰.

• սովորողների ընդհանուր առաջադիմությունը դանիերեն և անգլերեն լեզուներից, ինչպես նաև մաթեմատիկայից,

• դպրոցի կրթության որակը պետական դպրոցների համեմատությամբ,

• երեխաների՝ դեմոկրատական հասարակության մեջ ընդգրվելու պատրաստավժության աստիճանի գնահատում,

• տեսուչի կողմից այցելած բոլոր առարկաների անվանումները, օրը, ամիսը,

• դպրոցի անվանումը և կոդը:

Տեսուչը կարող է ինքը որոշել հայտնել իր սպասվելիք այցի մասին, թե ոչ, իսկ հետո գնահատական տալ՝ արդյոք դասավանդվող նյութերը համապատասխանում են ակադեմիական կամ մանկավարժական սահմանված չափանիշներին: Այն դեպքերում, երբ տեսուչը հայտնաբերում է վերը նշված սկզբունքներից շեղում կամ ողջամիտ կասկածներ կամ տեղեկատվություն է հայտնում կրթական որակի անբավարար մակարդակի հարցում, պետք է հրահանգ տա դպրոցին դրանց վերացման համար, վերջինս էլ պարտավոր է առնվազն 3 ամսում շտկել նշված բոլոր թերությունները:

Դանիայի կրթական համակարգը դավանում է այս սկզբունքներին արդեն բավական տևական ժամանակ՝ ըստ էության երբեք քայլեր չանելով փոխել դրա գնահատման մեխանիզմները: Կրթության նախարարությունը կամ գործող կառույցները օժանդակող, խորհրդատվական բնույթ են կրում, որոնց հիմնական պարտականությունն է դպրոցների տարեկան պարտադիր հաշվետվությունների ներկայացման չափանիշների և ուղենիշների սահմանում: Այսօր Դանիան հանդիսանում է Եվրոպայում որակյալ կրթություն մատուցող առաջնային երկրներից մեկը, սրանից կարելի է պարզապես ենթադրել, որ գործող կրթական համակարգը իրեն արդարացնում է: Կենսամակարդակի և իր քաղաքացիների բարեկեցության ապահովման հարցում Դանիան օրինակելի երկիր է, ուստի կրթության ոլորտի ազատականացումը կարելի է դիտարկել որպես ավելի առաջադիմական, քան չմտածված քայլ:

Ճապոնիայի կրթական համակարգը

Այն պահից ի վեր, երբ միջազգային հարթակում բուռն քննարկումներ սկսվեցին աշխարհի բոլոր ուսանողների ձեռքբերումներն ու ունակությունները համեմատելու ուղղությամբ, Ճապոնիայի ուսյալները եղել են առաջինների շարքում, իսկ հաճախ նաև հենց առաջինը²¹: Չնայած նրա, որ Ճապոնիան կղզի երկիր է և դարերով մեկուսացված է եղել զարգացած արևմուտքից՝ այն բավականին արագ կարողացավ յուրացնել արևմտյան կրթական միտումները՝ դրանք բարեհաջող համադրելով ազգային առանձնահատկությունների հետ:

²⁰ Stéu The Inspectorate of Education of Denmark, էջ 20-21, <file:///C:/Users/User/Downloads/87075.pdf>:

²¹ Stéu Japan Overview, Center on International Educational Benchmarking, Learning from the world's high performing education systems, տե՛ս National Center on Education and the Economy, <http://ncee.org/what-we-do/center-on-international-education-benchmarking/top-performing-countries/japan-overview/>:

Ճապոնիան աշխարհի «ամենաագրեսիվ» մերիտոկրատական երկրներից մեկն է. սեփական կարողությունները ցուցաբերելու հնարավորությունը ճոխություն է, սակայն վկայում է տաղանդի, շնորհի մասին, այդ շնորհն էլ իր հերթին պայմանավորվում է երեխայի՝ դպրոցում ունեցած հաջողություններով²²: Հատկանշական է, որ այդ տաղանդը, ըստ ճապոնացիների, բնատուր, աստվածային պարզև չէ, այլ քրտնաջան աշխատանքի, ջանքերի արդյունք: Իսկ այդ արդյունքին հասնելու ճանապարհը սկսվում է անմիջապես դպրոցից: Իրենց ճանապարհը հարթելու և ապագայում հասարակության շրջանում հարգանք վաստակելու տեսլականը ունենալով՝ դպրոցահասակ երեխաները ջանում են աչքի ընկնել և արժանանալ իրենց ուսուցիչների գովասանքին:

1946թ. հետպատերազմական ճապոնիան աշխարհին հայտնեց իր նորընտիր սահմանադրության մասին, որում կրթություն ստանալը հոչակվեց մարդու անքակտելի, անբաժանելի պոզիտիվ իրավունք²³: Իհարկե, այստեղ զգացվում էր արևմտյան իմպերիալիստական երկրների ազդեցությունը, որոնք տևական ժամանակ վերահսկում էին հետպատերազմական ճապոնիայի կյանքի գրեթե բոլոր բնագավառները:

1947թ. ճապոնիայում ընդունվեց Կրթության մասին օրենքը, որտեղ ակնհայտ էր ամերիկյան օկուպացիայի ազդեցությունը: Համաձայն այդ օրենքի՝ կրթությունն ունի հետևյալ կառուցվածքը՝ 6+3+3+4: Մրանից 6 տարին երեխան անցկացնում է տարրական դպրոցում, 3-ը՝ ստորին միջնակարգ դպրոցում, մյուս 3-ը՝ ավագ դպրոցում և 4 տարի սովորում է բարձրագույն ուսումնական հաստատությունում²⁴:

1949թ. հիմնադրվեց ճապոնիայի նոր Կրթության նախարարությունը, որն էապես տարբերվում էր նախապատերազմյան Կրթության նախարարությունից: Նոր նախարարությունը որոշեց իր գործառույթների ցուցակը կտրուկ նվազեցնել և մեծ մասը պատվիրակեց տեղական կրթական խորհուրդներին՝ այսպիսով դյուրացրեց իր գործունեության շրջանակը: Դրա փոխարեն իրեն վերապահեց մասնագիտական, տեխնիկական, ինչպես նաև ֆինանսական աջակցության ցուցաբերման իրավունքը²⁵:

Ճապոնիայի կրթական համակարգում, սակայն, էական փոփոխություններ չգրանցվեցին մինչ այն պահը, երբ 1951թ. վերջապես ճապոնիան ազատվեց շրջափակումից և վերգտավ ազատ որոշումներ կայացնելու իր իրավունքը: Առաջին հերթին անհրաժեշտ էր վերանայել կրթական համակարգը ամբողջապես և հարմարեցնել դա ազգային, քան թե ամերիկյան կամ եվրոպական ստանդարտներին:

Սակայն այդ համակարգում, ի զարման շատերի, լուրջ փոփոխություններ չարվեցին, ընդհուպ մինչև 1980-ականները, երբ որոշում կայացվեց արմատական բարեփոխման ենթարկել համակարգը և 1980-ականների կեսերին հիմնադրվեց Կրթական բարեփոխումների ազգային խորհուրդը²⁶, որը շատ արագ հավաքեց և ներկայացրեց կրթության ոլորտի անհապաղ փոփոխման ենթակա կետերը.

²² Տե՛ս նույն տեղում:

²³ Տե՛ս Ministry of Education, Culture, Sports, Science and Technology, National Institute for Educational Policy Research, տե՛ս Educational Administration in Japan, <http://www.nier.go.jp/English/educationjapan/pdf/201203EAJ.pdf>:

²⁴ Տե՛ս Education in Japan, տե՛ս World Education News and Reviews, <http://wenr.wes.org/2005/05/wenr-mayjune-2005-education-in-japan>:

²⁵ Տե՛ս Ministry of Education, Culture, Sports, Science and Technology, National Institute for Educational Policy Research, տե՛ս Educational Administration in Japan, <http://www.nier.go.jp/English/educationjapan/pdf/201203EAJ.pdf>:

²⁶ Տե՛ս նույն տեղում, <http://www.nier.go.jp/English/educationjapan/pdf/201203EAJ.pdf>:

- բարձրագույն ուսումնական հաստատությունների հիմնադրման չափանիշների վերափոխում,
- տարրական և ստորին միջնակարգ դպրոցների հիմնադրման խթանում,
- պետական և տեղական իշխանությունների գործառույթների հստակ տարանջատում,
- կրթության տեղական խորհուրդների գործունեության հիմնանորոգում և իրականացում,
- դպրոցների վարչակազմի և կառավարման համակարգի բարելավում/ դպրոցում հաշվետվողական մարմնի ստեղծում, դպրոցների ընդհանուր գործունեության համակարգման սկզբունքների հիմնադրում/:

1998թ. Կրթության կենտրոնական խորհուրդը հայնտաբերեց և հրապարակեց տեղական կրթական խորհուրդների գործունեության բացերը: Ձեկույցում մասնավորապես նշվում էր այդ խորհուրդների ձևական գործունեության մասին, որոնք իրականում ոչ մի էական գործառույթ չեն իրականացնում: Նշվում էր նաև, որ այդ խորհուրդների անդամների ընտրությունը անցկացվում է կասկածելի պայմաններում, ովքեր հաճախ նշանակվում են այս պաշտոնին առանց մանկավարժական կամ մասնագիտական կրթություն կամ փորձ ունենալով²⁷:

Այս և այլ փաստարկների հիման վրա տեղական կրթական խորհուրդների մասին օրենքը ենթարկվեց անմիջական փոփոխության, և այդ խորհուրդների գործառույթների մեծ մասը փոխանցվեց տեղական իշխանության մարմիններին²⁸:

2001թ. Կրթության նախարարության մեջ միաձուլվեցին միաժամանակ մի քանի նախարարություններ, և նախարարությունը վերանվանվեց Կրթության, գիտության, սպորտի, մշակույթի և տեխնոլոգիաների գործակալություն (the Ministry of Education, Science Sports and Culture and the Science and Technology Agency)²⁹:

Գործակալության կազմում է գտնվում կրթական ոլորտի մի դերակատարներից մեկը՝ Կրթության կենտրոնական խորհուրդը, որը սակայն անկախ մարմին չէ և իրականացնում է ավելի շատ խորհրդատվական գործունեություն: Խորհրդի ուսումնասիրությունների և կարծիքի հիման վրա Գործակալությունը, այսինքն՝ Նախարարությունը որոշումներ կարող է ընդունել կրթության ոլորտի բարեփոխումների, խրախուսումների և այլ հարցերի վերաբերյալ³⁰: Տեսչական, վերահսկման կամ գնատահման որևէ գործառույթ Խորհուրդը չունի:

Սակայն Կրթության մասին օրենքը, այնուամենայնիվ, նախատեսել է որոշակի վերահսկման մեխանիզմ, որը, սակայն, բավական հեռու է եվրոպական երկրների տեսչական մարմիններին նման լինելուց:

Օրենքը հստակ սահմանել է, որ կրթական ոլորտի հիմնական որոշումները կայացնում է երկրի Կառավարությունը և հենց սա է պատասխանատու հավասար և որակյալ կրթության մատուցման համար: Միաժամանակ, օրենսդիրը, հասնակալով, որ Կառավարությունը չի կարող արդյունավետ վերահսկում իրականացնել կրթական սկզբունքների անաչառ

²⁷ Տե՛ս Ministry of Education, Culture, Sports, Science and Technology, National Institute for Educational Policy Research, տե՛ս Educational Administration in Japan, <http://www.nier.go.jp/English/educationjapan/pdf/201203EAJ.pdf>:

²⁸ Տե՛ս նույն տեղում, <http://www.nier.go.jp/English/educationjapan/pdf/201203EAJ.pdf>:

²⁹ Տե՛ս MEXT, տե՛ս <http://www.mext.go.jp/en/about/mext/index.htm>:

³⁰ Տե՛ս նույն տեղում <http://www.mext.go.jp/en/about/mext/index.htm>:

իրականացման համար, նախատեսել է մի քանի ատյանների գործունեության հնարավորություն³¹.

- Կրթության նախարարությունը պատասխանատու է կրթության որակյալ մատուցման համար առհասարակ, սակայն այն զբաղվում է նախակրթարաններից մինչև ավագ միջնակարգ կրթության կազմակերպմամբ, օրինակ՝ կրթական ծրագրի սահմանմամբ, ուսուցիչների որակավորումների անցկացմամբ, դպրոցների գործունեության սկզբունքների հաստատմամբ և այլն:

- Կրթության ազգային խորհուրդ, որը կազմված է կրթության ոլորտի հայնտի փորձագետներից և այլ շահակիցներից/ծնողներից, այլ ոլորտի, օրինակ՝ սպորտի, մշակույթի, տնտեսագիտության, մամուլի ներկայացուցիչներից/, նախարարության պահանջով պատրաստում է և ներկայացնում զեկույց կրթության արդի հիմնախնդիրների մասին:

- 1719 քաղաքապետարաններ /municipalities/, որոնք պատասխանատու են պարտադիր կրթական հաստատությունների՝ դպրոցների, գործունեության կարգավորման համար: Յուրաքանչյուր քաղաքապետարանի կրթության խորհուրդ զբաղվում է դպրոցի աշխատանքի վերահսկմամբ, դրա բյուջեի բաշխմամբ, էթե կա անհրաժեշտություն, ապա նոր դպրոցի հիմնադրմամբ:

- 47 թաղապետարաններ /prefectures/ պատասխանատու են ավագ միջնակարգ դպրոցների աշխատանքի կազմակերպման համար: Թաղապետը պատասխանատու է նաև բյուջեի, ինչպես նաև մասնավոր նախակրթարաններից մինչև մասնավոր ավագ միջնակարգ դպրոցների կրթության իրականացման համար:

- Կրթության նախարարությունը զբաղվում է նաև բարձրագույն կրթության հարցերով: Պետական բուհերը հիմնադրվում են Պետական համալսարանների կորպորացիաների կողմից, բայց սովորողների մեծ մասը ընտրում է մասնավոր բուհերը:

- Կրթության ոլորտի այլ շահակիցներ՝ ներառյալ ուսուցիչների միությունները և քաղաքացիական հասարակությունը:

Այս ցուցակում ամենամեծ գործունեությունը իրականացնում են քաղաքապետարանները և թաղապետարանները: Դրանք կայացնում են դպրոցի վերաբերյալ ամենակարևոր որոշումները, ինչպես նաև այն դպրոցների աշխարհագրական դիրքի ընտրությունը, որոնք պետք է դեռ բացվեն, ինչպես նաև ուսուցիչների ընտրությունը: Յուրաքանչյուր քաղաքապետարանի կրթության խորհուրդ զբաղվում է դպրոցի ամենօրյա գործունեությամբ, ուսուցիչների աշխատանքի վերահսկմամբ, բայց չեն իրականացնում տեսչական գործառնություններ:

Բարձրագույն կրթության ոլորտում որոշումներ կայացնելու իրավունքը պատվիրակված է և՛ Կառավարությանը, և՛ Կրթության նախարարությանը: Վերջինս հաստատում է բուհերի հիմնադրման չափանիշները: Ե՛վ մասնավոր, և՛ պետական համալսարանները պարտադիր պետք է ունենան ինքնագնահատման համակարգ և անցնեն Նախարարության կողմից հաստատված կրեդիտացիայի փուլով ամեն 7 տարին մեկ³²:

Ճապոնիան կրթության տեսչական մարմին, որպես այդպիսին, փաստորեն չունի: Վերահսկման մեխանիզմները պատկանում են կա՛մ տեղական իշխանության մարմիններին կա՛մ Նախարարությանը: Սակայն գրականության մեջ չի նշվում առհասարակ, թե ինչպես

³¹ St' u EDUCATION POLICY OUTLOOK JAPAN, OECD, Better policies for better lives, November 2015, տե՛ս <http://www.oecd.org/japan/Japan-country-profile.pdf>, էջ 14:

³² St' u EDUCATION POLICY OUTLOOK JAPAN, OECD, Better policies for better lives, November 2015, տե՛ս <http://www.oecd.org/japan/Japan-country-profile.pdf>, էջ 14:

կարող է իրականացվել վերահսկողություն կամ տեսչություն այդ ատյանների կողմից, պարզապես նշվում է՝ կրթօջախի գործունեության ընդհանուր իրականացում և վերահսկում:

Հարավային Կորեայի կրթական համակարգը

Հարավային Կորեայի կրթական համակարգն ուսումնասիրելիս անհնար է չնկատել արևմտյան երկրների փորձի ազդեցությունը: Եվ դա զարմանալի չէ՝ հաշվի առնելով, որ այդ երկրի միջազգային հարաբերությունների պատմությունը հիմնականում զարգացել է և շարունակում է զարգանալ այդ երկրների հետ սերտ շփումներից:

Ինչպես և արևմտյան շատ երկրներում կամ Հայաստանում, Հարավային Կորեայի կրթության համակարգման իրավունքը վերապահված է Կրթության նախարարությանը, որը հիմնադրվել է 1948թ. նոյեմբերին և այդ օրվանից ի վեր չի դադարել իր գործունեությունը³³:

Հարավային Կորեայի Կառավարությունը իր պատմության ողջ ընթացքում եղել է բավականին կենտրոնացված, և դրա արտացոլումը երևում է նաև այդ երկրի կրթության համակարգում: Կրթության գործարկման մեխանիզմները մշակվում են Կառավարության կողմից, այսինքն՝ ստանդարտները սահմանում է Կառավարությունը, իսկ դրա իրականացումը թողնվում է ավելի ստորին մարմիններին³⁴: 180 տարածքային կրթական խորհուրդներ կրթական գործունեության մասին զեկուցում են 16 քաղաքային և գավառային կրթական խորհուրդների, սրանք էլ իրենց հերթին՝ Կրթության նախարարությանը³⁵: Այս բոլոր մարմինները կրթության կազմակերպման ուղենիշները ստանում են Կրթության նախարարությունից, սակայն ունեն որոշակի անկախություն՝ դպրոցի բյուջեի, ինչպես նաև ուսուցիչների ընտրման հարցում:

Վերջին ժամանակներում փորձ արվեց ապակենտրոնացնել կրթությունը, գործելու ազատության հնարավորություն վերապահել դպրոցներին: Սրա արդյունքում յուրաքանչյուր դպրոց իրավունք ստացավ ձևավորել իր խորհուրդը, որն ուսուցիչներին խրախուսելու և վերապատրաստում կազմակերպելու գործառույթի է տիրապետում, սակայն սա իրականացվում է կրկին խիստ սահմանափակումներով: Այս խորհուրդների անդամները ընտրվում են լուրջ մրցակցության պայմաններում. անդամների թվի առնվազն 50 տոկոսը պարտավոր է ունենալ առնվազն 10 տարվա մասնագիտական մանկավարժական փորձ, ընդ որում այս պահանջը հաստատված է օրենքի ուժով: Անդամների գործունեությունը ապաքաղաքական է, նրանք բոլորն ընտրվում են քաղաքային կամ գավառային տարածքային կրթական խորհրդի կողմից:

Դպրոցները պարբերաբար ենթարկվում են արտաքին աուդիտի: Այս մոնիտորինգային խմբերը ընտրվում են տարածքային կրթական խորհրդի կողմից, որոնք իրականացնում են

³³ Sté u Ministry of Education, տե՛ս <http://english.moe.go.kr/main.do?s=english>:

³⁴ Sté u South Korea: System and School Organization, տե՛ս Center on International Educational Benchmarking, Learning from the world's high performing education systems, National Center on Education and the Economy, տե՛ս <http://ncee.org/what-we-do/center-on-international-education-benchmarking/top-performing-countries/south-korea-overview/south-korea-system-and-school-organization/>:

³⁵ Sté u նույն տեղում:

դպրոցի քննումը /տեսչությունը/ Կրթության նախարարության կողմից հաստատված պլանի և չափանիշների հիման վրա³⁶:

Դպրոցի գործունեության գնահատումը իր մեջ ներառում է ուսուցչական անձնակազմի աշխատանքի ստուգումը, կրթական ծրագիրը և սովորողների կարիքների քննումը: Եթե դպրոցը բարեհաջող անցնում է աուդիտը, այսինքն՝ իր զեկույցում մոնիտորինգային խումբը չի հայտնաբերում խախտումներ կամ թերություններ, ապա այդ դպրոցը, Կրթության նախարարության հրահանգով, ստանում է բոնուսներ:/չի նշվում, թե ինչ տեսքով են լինում այդ բոնուսները/

Այնուամենայնիվ, այս ստուգումները չեն առաջացնում պատժիչ հետևանքներ: Եթե դպրոցը չի բավարարում որոշակի չափանիշների, այն պարզապես ստանում է դպրոցի վարչական մեխանիզմների փոփոխման կամ բարելավման համար անհրաժեշտ քայլերի ուղենիշներ³⁷: Դպրոցի ստուգման արդյունքում կազմված հաշվետվությունը հրապարակվում է հասարակության համար:

Հարավային Կորեան միշտ կարևորել է ծնողի դերը կրթության մեջ: Ներկայումս, ծնողները կարող են ներգրավվել ծնողական խորհուրդների աշխատանքներում, ովքեր մշտապես հանդիպում են և կիսվում իրենց մտահոգություններով կամ առաջարկներով³⁸:

Վերջերս, Կրթության նախարարությունը բացահայտեց իր մտադրությունների մասին, այն է՝ ավելի ներգրավել ծնողներին կրթական համակարգի մեջ, ստեղծել նրանց վերապատրաստումների խմբակներ, ձգնաժամային կենտրոններ /կրնգրկվեն միայնակ մայրեր կամ հայրեր, սոցիալապես անապահով ծնողներ և այլն/ ներառել նրանց մոնիտորինգային խմբերի մեջ, որպեսզի ծնողը ներսից տեսնի և պատկերացում կազմի այն համակարգի մասին, որտեղ գտնվում է իր երեխան³⁹:

Փաստորեն, այստեղ վերահսկման և գնահատման մարմինները առանձնացված չեն, այսինքն՝ չկա տիպիկ մի մարմին, որի գործառույթները կլինեն միայն տեսչական աշխատանքների իրականացումը: Վերահսկումը հիմնականում կատարվում է տեղական իշխանության մարմինների կողմից, պատժիչ մեխանիզմներ նույնպես բացակայում են: Մոնիտորինգը ավելի շատ կրում է խորհրդատվական բնույթ, թերությունների հայտնաբերումը դպրոցի համար չի առաջացնում բացասական հետևանքներ:

Մինգապուրի կրթական համակարգը

Մինգապուրը քաղաք-պետություն է հարավ-արևելյան Ասիայում: Այն հիմնադրվել է որպես հանրապետություն ոչ այնքան վաղ անցյալում՝ 1965թ. և այ պահից ի վեր գրանցել է բազմաթիվ հաջողություններ իր կյանքի գրեթե բոլոր բնագավառներում:

Բոլորովին վերջերս Մինգապուրը դեռ աղքատ և մեկուսացված կղզի-երկիր էր, որը չէր տիրապետում բնական ռեսուրսների մեծ պաշարների, ուներ անաշխատունակության բարձր

³⁶ Sté u South Korea: System and School Organization, տե՛ u Center on International Educational Benchmarking, Learning from the world's high performing education systems, National Center on Education and the Economy, տե՛ u <http://ncee.org/what-we-do/center-on-international-education-benchmarking/top-performing-countries/south-korea-overview/south-korea-system-and-school-organization/>:

³⁷ Sté u նույն տեղում:

³⁸ Նույն տեղում:

³⁹ Sté u Ministry of Education, տե՛ u <http://english.moe.go.kr/main.do?s=english>:

մակարդակ և օրեցօր ավելացող տարբեր էթնիկ խմբեր, որոնք այդքան էլ հաշտ չէին միմյանց հետ:

Այսօր Մինգապուրը առևտրի, ֆինանսների և փոխադրումների համաշխարհային կենսունակ հանգույց է, որն ունի ուժեղ և ներդաշնակ քաղաքացիների համայնք, ովքեր պատկանում են զանազան էթնոսների և դավանում են տարբեր կրոններ:

Անկախությունից հետո նոր կառավարությունը եկավ այն եզրակացության, որ կրթության ոլորտում անհրաժեշտ են մեծ բարեփոխումներ՝ կրթական միջավայրի ապակենտրոնացումից մինչև ազատականացում⁴⁰: Այս առումով կարևոր փոփոխություն եղավ ընդհանուր դպրոցների բացումը: Մինչ այդ, Մինգապուրում գործում էին տարբերակված դպրոցներ՝ նախատեսված առանձին էթնիկական խմբերի համար: Այսուհետ, բազմակրոն սովորողները կրթօջախներում ուսանելու էին միասին: Այս համակարգում որոշվեց ներդնել եռալեզու կրթական ծրագիր. երեխաները սովորելու էին երկրի պետական լեզուն, անգլերեն և մայրենի լեզու՝ յուրաքանչյուր էթնիկական խմբի ներկայացուցիչ իրավունք ուներ սովորել իր լեզուն⁴¹:

1970-ականներին Մինգապուրը պայքարում էր տարածաշրջանի տնտեսական հեգեմոնի կոչման համար: Երկրի իշխանությունները միաձայն որոշեցին, որ նման դիրքի հասնելու համար անհրաժեշտ է փոփոխել երկրի կրթական համակարգը՝ նորանոր, առավել զարգացած կադրեր թողարկելու համար: Այս հանգեցրեց նրան, որ երկրի դպրոցներում անգամ ներդրվեց տնտեսական խիստ ուղղվածություն ունեցող առարկաների դասավանդումը: Չնայած նրա, որ Մինգապուրում արտաքինապես ազատականացվել էր կրթական միջավայրը, այդուհանդերձ պետությունը կարելի է ասել ինքն էր որոշում երեխաների նախասիրությունները կամ ապագա մասնագիտությունը՝ պարտադրելով այնպիսի կրթական ծրագիր, որն ուղղված կլինի երկրի ապագա տնտեսական զարգացման խթանմանը:

Հետաքրքրականն այն է, որ այս մեթոդները զարկ տվեցին կրթության որակի բարձրացմանը: Նոր կրթական ծրագրի հետևանքով երկրում մի քանի անգամ մեծացավ օտար լեզվի իմացության մակարակը, նվազեց անգրագիտության ցուցանիշը⁴²:

Սակայն պետական իշխանությունները ժամանակի ընթացքում եկան այն որոշման, որ դպրոցներում նման պարտադրված առարկաները գուցե չկարողանան ապահովել բարձր որակ, հետևաբար անհրաժեշտ է ստեղծել մասնագիտական կենտրոններ, որտեղ կհաճախեն այն երեխաները, ովքեր կցանկանան և ովքեր իրոք ունեն մաթեմատիկական կամ տնտեսական մտածողություն: Այս կենտրոնները կոչվեցին մտածող դպրոցներ սովորող ազգ՝ thinking schools, learning nation, որոնք ունեն իրենց առջև դրված հստակ առաքելություն. զարգացնել քննադատական մտածողությունը իրենց ուսույանների շրջանում⁴³:

Այս նպատակին հասնելու համար Մինգապուրի իշխանություններն անցան կտրուկ ազատականացման մեխանիզմների իրականացմանը: Ուսումնական պլանը բավականին

⁴⁰ Տե՛ս OECD, Country Note, Singapore, PISA 2015 HIGH PERFORMERS, <https://www.oecd.org/pisa/PISA-2015-singapore.pdf>:

⁴¹ Նույն տեղում, էջ 1:

⁴² Տե՛ս OECD, Country Note, Singapore, PISA 2015 HIGH PERFORMERS, էջ 2, <https://www.oecd.org/pisa/PISA-2015-singapore.pdf>:

⁴³ Տե՛ս Prof S Gopinathan, The Education System in Singapore: The Key to its Success, Madrid, Spain November 2011, National Institute of Education Singapore, http://www.fedea.net/politicaseducativas/The_Education_System_in_Singapore_The_Keyto_its_Success.pdf:

թեթևացավ՝ տեղ թողնելով սովորողների անձնական հետաքրքրությունների համար: Ուսուցիչների համար առանձնացվեցին հատուկ դասաժամեր, ովքեր մշակում էին երեխաների համար դասաժամերի առավել հետաքրքիր անցկացման մեթոդներ:

Այս համատեքստում հետաքրքրական է պետության դիրքորոշումը ուսուցիչներին ներկայացվող պահանջների առումով: Մինգապուրը խստորեն հետևում է ուսուցիչների որակավորմանը՝ բացատրելով այնպես, որ ուսուցիչները երկրի համար օգտակար կադրեր կրթելու հարցում ամենաառաջին և ամենակարևոր դերակատարներն են: Կրթության ազգային ինստիտուտը⁴⁴ պարբերաբար անցկացնում է ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ, որի արդյունքների մասին զեկուցում է Կրթության նախարարությանը:

Մինգապուրի կրթական համակարգի զարգացումը էական աճ գրանցեց վերջին 20 տարիների ընթացքում: Երկրի նման հաջողությունները կարելի է վերագրել մի քանի կարևոր բաղադրիչների, սակայն դրանցից ամենակարևորն է ազգի մտածելակերպը. որպեսզի գոյատևենք, պետք է մրցենք⁴⁵: Այստեղ շատ հստակ նախանշված են երկրի ապագա զարգացման համար անհրաժեշտ գործողությունները. դրանցից ամենակարևորը որակյալ կրթություն ստանալն է: Իսկ առավել հետաքրքրականն այն է, որ այս երկրի բնակչության մեծագույն մասը նվիրված է իր երկրի զարգացման գործին, ուստի պարտաբողական կամ տեսչական որևէ մարմնի կարիք այս երկրում չկա. կրթական գործընթացը Մինգապուրում ընթանում է առավել քան հարթ և այստեղ վերահսկման մեխանիզմներ չկան, դրանց կարիքը նույնպես բացակայում է:

⁴⁴ Տե՛ս OECD, Country Note, Singapore, PISA 2015 HIGH PERFORMERS, էջ 3, <https://www.oecd.org/pisa/PISA-2015-singapore.pdf>:

⁴⁵ Տե՛ս Prof S Gopinathan, The Education System in Singapore: The Key to its Success, Madrid, Spain November 2011, National Institute of Education Singapore, http://www.fedea.net/politicaseducativas/The_Education_System_in_Singapore_The_Keyto_its_Success.pdf:

Տեսչության գործառական հիմնախնդիրները ՀՀ-ում

Տեսչական ստուգումների/ուսումնասիրությունների հատվածական բնույթը

Հետազոտության մասնակիցներն առավել հաճախ մատնանշել են այն խնդիրը, որ տեսչական ստուգումների և ուսումնասիրությունների արդյունքում հանրակրթության խնդիրների և իրավիճակի վերաբերյալ ձևավորվող պատկերը բավական հատվածական (ֆրագմենտար) է: Ստուգումներն ու ուսումնասիրությունները հարուստ տեղեկատվություն են ապահովում առանձին դպրոցում առկա խնդիրների վերաբերյալ, սակայն բացակայում է դրանց պատճառահետևանքային կապերի համակարգային վերլուծությունը: Ընդ որում, հիմնախնդիրների ֆրագմենտար նկարագրությունը բնորոշ է ոչ միայն առանձին դպրոցին կամ մարզին, այլև՝ հանրակրթական ամբողջ համակարգին:

ԿՊՏ մասին օրենքի 8-րդ հոդվածում, ի թիվս այլ նպատակների և խնդիրների, նշված է, որ Տեսչությունը նպաստում է պետական կրթական չափորոշիչների կիրառման ապահովմանը, կրթության որակի բարձրացմանը, կրթական ծրագրերի յուրացմանը, ինչպես նաև՝ կրթական քաղաքականության իրականացման և կրթական ծառայությունների արդյունավետության գնահատմանն ու հետադարձ կապի ապահովմանը: Հետազոտության մասնակիցների գերակշիռ մասը համակարծիք էր այն հարցում, որ կրթական քաղաքականության իրականացման և կրթական ծառայությունների արդյունավետության գնահատումը փաստացի բացակայում է: Տեղեկատվական առումով որքան էլ հազեցած են Տեսչության կողմից կազմված հաշվետվությունները, տեղեկանքներն ու այլ փաստաթղթերը, միևնույն է, դրանցում բացակայում է արդյունավետության գնահատումը:

Տեսչության կողմից առանձին դպրոցում որևէ կոնկրետ խնդրի կամ խնդիրների թեմատիկ հետազոտությունը կարող է բավական խորքային և որակյալ լինել: Օրինակ, դասալսումների միջոցով կարող են վեր հանվել դասավանդման մեթոդներին վերաբերող մի շարք բացեր կամ, հակառակը, տվյալ դպրոցի ուժեղ կողմերը: Սակայն որքան էլ թեմատիկ ստուգումները կամ ուսումնասիրությունները որակյալ են, դրանք, միևնույն է, չեն ուրվագծում կրթության որակին առչվող հիմնարար խնդիրները կամ կրթական չափորոշիչների կիրառման ընդհանուր պատկերը:

Տեսչավորման մեթոդաբանության հիմնական բացերից է այն, որ թեմատիկ տարբեր ուղղվածության տվյալների/արդյունքների միջև կապն այդպես էլ չի ձևավորվում: Պարզ չէ, թե ինչպիսին է հայտնաբերված բացերի կամ դրական փորձի ազդեցությունը կրթության որակի վրա: Օրինակ, Տեսչությունը զգալի ուշադրություն է դարձնում դպրոցների կողմից պատշաճ գրագրության վարմանը: Սակայն վերջնարդյունքում պարզ չէ, թե այս խնդիրն ինչ կշիռ/ազդեցություն ունի դպրոցի արդյունավետ գործառության և իր կրթական առաքելության իրականացման վրա:

Այս խնդիրը բարձրաձայնվել է հարցվողների կողմից նույնպես. «Փորձում են կորեյացիաներ գտնել, օրինակ՝ դպրոցի մեթոդ-միավորման աշխատանքի և առաջադիմության միջև: Բայց մեթոդ-միավորման աշխատանքն էլ գնահատվում է կրկին ըստ արձանագրությունների: Դա լիարժեք պատկերացում չի տալիս աշխատանքի որակի մասին: Կարող են փաստաթղթերը լավ լրացնել, բայց բուն գործ չանել: Եվ հակառակը՝ արձանագրությունները վատ վիճակում լինեն, իսկ իրենց գործին պատասխանատվությամբ մոտենան»:

Կրթական քաղաքականության թիրախավորման պակասը

Որպես վերը նկարագրված խնդրի (մեթոդաբանության հատվածայնության) հետևանք՝ Տեսչությունը, ըստ հետազոտության մասնակիցների, նվազ ազդեցություն ունի կրթական քաղաքականության մշակման և վերանայման վրա: Մինչդեռ, ըստ օրենքով իրեն վերապահված լիազորությունների, ակնկալվող ազդեցությունն ավելի արժեքավոր ու հիմնարար կարող էր լինել:

Ի վերջո, առանձին դպրոցներում հայտնաբերված խախտումներից և խնդիրներից այդպես էլ դուրս չեն բերվում հանրակրթության հիմնախնդիրներին առնչվող օրինաչափություններ և բացատրական ուղղվածության եզրահանգումներ, չեն կատարվում կրթական քաղաքականության վերանայման հստակ առաջարկություններ:

Տեսչության աշխատակազմն այս խնդիրը փորձում է լուծել ինքնուրույն՝ փորձելով հայտնաբերել և կիրառել վերլուծական ծրագրեր: Սակայն ակնհայտ է, որ արդյունավետ վերլուծական աշխատանքը պահանջում է ինչպես արտաքին խորհրդատվական/մեթոդաբանական աջակցություն, այնպես էլ՝ նոր կադրերի/հաստիքների ներգրավում:

Այնուամենայնիվ, Տեսչության աշխատակիցները նշել են, որ վարվող քաղաքականության փոփոխությանն ուղղված առաջարկություններ մշակվում են, սակայն դրանք հասանելի չեն հանրությանը: Ձևավորված պրակտիկայի համաձայն, առաջարկությունները ներկայացվում են ԿԳ նախարարին, սակայն, որպես կանոն, չեն հրապարակվում: Հիմնական պատճառներից մեկը մամուլի և հանրային քննադատության հնարավոր կանխումն է այն պարագայում, եթե բարձրաձայնված առաջարկները չընդունվեն կամ բավարար չափով չիրագործվեն: Բացի այդ, մի շարք առաջարկությունների (օրինակ՝ դպրոցների միավորման վերաբերյալ) հրապարակումն անհարկի սոցիալական լարվածություն կարող է առաջացնել ինչպես աշակերտների ընտանիքների, այնպես էլ՝ դպրոցների անձնակազմերի և ղեկավարության շրջանում:

Ստուգումների և ուսումնասիրությունների մեթոդաբանության սահմանափակումները

Կրթության բնագավառի պետական տեսչավորման գործընթացն իրականացվում է ստուգումների և ուսումնասիրությունների միջոցով՝ ԿՊՏ մասին օրենքի և Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին ՀՀ օրենքով սահմանված կարգերին և ժամկետներին համապատասխան: Տեսչավորման (ստուգումների, ուսումնասիրությունների) արդյունքների հիման վրա կազմվում են հաշվետվություններ, ակտեր, տեղեկանքներ, վերլուծություններ, և այլ փաստաթղթեր:

Տեսչավորման առավել բնութագրական հիմնախնդիրներից է հետազոտական մեթոդների սահմանափակ «զինանոցը»: Տեսչության աշխատանքը կարգավորող ակտերում որևէ սահմանափակում չկա տեղեկատվության աղբյուրների և դրանցից տեղեկատվության ստացման մեթոդների ընտրության հարցում: Տեսուչները կարող են իրականացնել դասալսումներ, իրականացնել փաստաթղթերի վերլուծություն, կազմակերպել հարցումներ, և այլն:

Այնուամենայնիվ, տեսչավորման արդյունքներն ամփոփող փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ տեղեկատվության ստացման հիմնական մեթոդը փաստաթղթերի վերլուծությունն է, որոշ դեպքերում՝ դիտարկումը: Տեսչության

հաշվետվություններն ու վերլուծությունները սովորաբար հիմնվում են դպրոցի ղեկավարության կողմից տրամադրված տարատեսակ փաստաթղթերի վրա: Հետազոտական մեթոդներից այս մեկին տրվող նախապատվությունն էլ հետադարձ ազդեցություն է ունենում հետազոտության առարկայի վրա: Այլ կերպ ասած, մեթոդն է «որոշում», թե ինչին պետք է ուշադրություն դարձնել: Մինչդեռ հակառակը պետք է լիներ:

Որպես հետևանք, Տեսչության հաշվետվություններում մանրակրկիտ անդրադարձ է կատարվում դպրոցի գրագրությանը՝ տարբեր փաստաթղթերի պատշաճ կազմմանը, դրանց բովանդակության՝ ձևային (ֆորմալ) պահանջներին համապատասխանության խնդիրներին: Ֆորմալության նկատմամբ այս գերակա ուշադրության արդյունքում տուժում է իրականության ուսումնասիրությունը: Անպատասխան է մնում այն հարցը, թե «թղթերի իրականությունն» ինչ ազդեցություն ունի կրթության որակի և, ընդհանրապես, դպրոցի առաքելության պատշաճ իրագործման վրա:

Տեսչության ստուգումների և ուսումնասիրությունների գերակշիռ մասն անդրադառնում է որոշակի ֆորմալ ընթացակարգերի, կանոնակարգերի պահպանմանը: Կրթության որակին, կրթական ծրագրերի յուրացմանը, կրթական ծառայությունների արդյունավետության գնահատմանն⁴⁶ ու կրթության բովանդակային հիմնահարցերին նվիրված այլ խնդիրների ստուգումը/ուսումնասիրությունը կարծես թե մղված է երկրորդ պլան:

Այսպես, օրինակ, Տեսչության 2015թ. գործունեության տարեկան ամփոփ հաշվետվության «Հանրակրթություն» բաժնում նշված է ՀՀ Լոռու մարզի թվով 48 և ՀՀ Գեղարքունիքի մարզի թվով 44 հանրակրթական ուսումնական հաստատությունների կրթական գործունեության ուսումնասիրությունների մասին: Ուսումնասիրությունների ընթացքում կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ են հայտնաբերվել 46 դպրոցներում (ՀՀ Լոռու մարզում՝ 27, ՀՀ Գեղարքունիքի մարզում՝ 19): Հայտնաբերված խախտումների վերաբերյալ կազմվել է ընդհանուր 46 արձանագրություն⁴⁷:

Ընդհանուր առմամբ, 2015թ. հաշվետվության մեջ թվարկված են, օրինակ, հետևյալ տեսակի խախտումները.

- Տնօրենը սահմանված կարգով չի իրականացրել մանկավարժական կադրերի ընտրությունը (համաձայն պաշտոնների անվանացանկի և պաշտոնի նկարագրի):
- Խախտվել են ուսուցչի թափուր տեղի մրցույթի կարգի պահանջները:
- Ուսուցիչն ընդունվել է աշխատանքի՝ առանց ուսուցչի թափուր աշխատատեղը համալրելու համար մրցույթ հայտարարելու:
- Մեթոդական միավորումները նախնական դասաբաշխում չեն իրականացրել, նիստերը չեն գումարել սահմանված կարգին համապատասխան:
- 120-ից ավելի ժամ բացակայություն ունեցող սովորողները սահմանված կարգի խախտումով փոխադրվել են հաջորդ դասարան:
- Սովորողի ընդունելությունը դպրոց իրականացվել է սահմանված կարգի խախտումով:
- Սովորողների անձնական գործերում բացակայում են պետքեզիստրում հաշվառված լինելու մասին տեղեկանքները:

⁴⁶ Մրանք Տեսչության խնդիրներից են («Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենք, հոդված 8):

⁴⁷ ՀՀ Կրթության պետական տեսչության 2015թ. գործունեության տարեկան ամփոփ հաշվետվություն, էջ 16, <https://goo.gl/1mrh3f>:

- Հաստատության հիմնական դպրոցի շրջանավարտների հիմնական կրթության վկայականներում, քննական արձանագրության մեջ և դասամատյանում առկա են անհամապատասխանություններ:
- Դասավանդվող առարկայի ծրագիրը սահմանված կարգով հաստատված չէ:
- և այլն:

Տեսչության տարեկան հաշվետվությունից կատարված այս մեջբերումից⁴⁸ պարզ է դառնում, որ հայտնաբերված խախտումների գերակշիռ մասը գուտ ընթացակարգային բնույթ ունի: Հիմնականում պահպանված չեն այս կամ այն կանոնակարգի, օրենքի, կարգի պահանջները: Իհարկե, ուսումնական հաստատության գործունեության օրինականությունը կարևոր խնդիր է: Սակայն, մյուս կողմից, նորմատիվ պահանջների անթերի կատարումը բնավ երաշխիք չէ կրթության պատշաճ որակի ապահովման:

Վերը ներկայացված խախտումներից մեկն, օրինակ, վերաբերում է այն խնդրին, որ «Ֆիզկուլտուրա» առարկան չի դասավանդվում երկու դպրոցի մի շարք դասարաններում: Իհարկե, ուսումնական պլանով նախատեսված առարկայի փաստացի բացակայությունը լուրջ բաց է և միջամտության կարիք կա: Սակայն, մյուս կողմից, անդրադարձ չկա այն հարցին, թե ֆիզկուլտուրայի դասավանդման որակն ինչպիսին է, արդյոք կատարվում են կրթական չափորոշիչները, արդյոք դպրոցն ապահովված է ֆիզկուլտուրայի դասավանդման համար պատշաճ պայմաններով, և այլն:

Վերոնշյալ հաշվետվության մեջ անդրադարձ չկա դասավանդման և ուսումնառության բովանդակային խնդիրներին (օրինակ՝ ուսուցիչների կողմից դասավանդման ժամանակակից և սովորողների կարիքներին համարժեք մեթոդների կիրառությանը, պետական կրթական չափորոշիչների պահպանությանը՝ բովանդակային/որակական առումով, կրթական ծրագրերի իրականացման որակը):

Ըստ հետազոտության մասնակիցների, Տեսչության մեթոդաբանության հիմնական բացն այն է, որ տեղեկատվության աղբյուրը ոչ թե մարդիկ են, այլ՝ փաստաթղթերը: Ուսումնասիրության առարկա են ոչ թե մարդկանց մոտեցումներն ու տեսակետները, գաղափարներն ու արժեքները, այլ՝ փաստաթղթերը, որոնք, ենթադրաբար, արտացոլում են որոշակի օբյեկտիվ իրականություն, սակայն անկարող են փոխել այն: Դպրոցները ներկայացնող հարցվողները նշել են, որ տեսուչների կողմից անհարկի մանրակրկիտ անդրադարձ է կատարվում տարբեր փաստաթղթերի բովանդակությանը. «Օրինակ, շատ և անտեղի խորանում են աշակերտական խորհուրդների, մանկավարժական և մեթոդ-խորհուրդների արձանագրությունների բովանդակության մեջ: Դա դպրոցի ներքին գործն է, իր իրավասությունն է՝ ինչ հարցի անդրադառնալ, ինչ չափով: Իրենք անտեղի նայում են նաև այդ հարցերը՝ թե ինչու է այսպես ձևակերպված, ինչու է այնպես գրված, և այլն»:

Իհարկե, տեսչավորման այս մոտեցումը նպաստել է դպրոցներում գրագրության որակի էական բարելավմանը: Ըստ հարցվողների, Տեսչության ձևավորման և գործունեության սկզբնական շրջանում դպրոցներում ահռելի թվով խնդիրներ էին կուտակված՝ կապված Կրթության մասին ՀՀ օրենքի, Հանրակրթության մասին ՀՀ օրենքի, դպրոցների կանոնադրության և այլ ակտերի պահանջների կատարման հետ:

Մինչ այժմ՝ սկսած 2006թ.-ից, Տեսչության գլխավոր ձեռքբերումն այն է եղել, որ այդ խնդիրների զգալի մասը հաղթահարվել է: Փոխվել է գործող պրակտիկան և դպրոցների ղեկավարության մոտեցումն այդ հարցում: Տարատեսակ փաստաթղթերը՝ սկսած տնօրենի

⁴⁸ Ոչ ամբողջական ցանկ է:

հրամաններից, մինչև տարբեր գրանցամատյանները, բերվել են պատշաճ վիճակի: Տեսչությունը հսկայական աշխատանք է կատարել իրազեկման և խորհրդատվական աջակցության ուղղությամբ:

Հարցվողները դրական են գնահատել նաև Տեսչության «զգաստացնող» դերը, որի շնորհիվ կանխարգելվում կամ շտկվում են դպրոցներում ֆորմալ բնույթի բազմաթիվ խախտումները: Ներկայումս, ըստ ոլորտի փորձագետների, էականորեն նվազել են տնօրենների կողմից օրենքի խախտումով աշխատանքի ընդունման դեպքերը, ուսումնական պլանի խախտումները, աշակերտների թվաքանակի՝ միտումնավոր կամ անփութության պատճառով գերազանցման դեպքերը. «Տեսչության շնորհիվ հիմա դպրոցի փաստաթղթերը նորմալ վիճակում են, բոլոր արձանագրությունները՝ մանկավարժական և մեթոդ-խորհուրդների, կազմվում են: Դպրոցներ կային, որ չունեին էդ ամենը: Հիմա ամեն ինչ տեղում է, կարգավորել են այդ խնդիրները: Օրինակ, առաջ տարածված էր մինչև 6 տարեկան լրանալը դպրոց ընդունելը: Հիմա դա վերացել է, որովհետև շատ լավ ստուգվում է»:

Այնուամենայնիվ, բաց է մնում այն հարցը, թե այս ձեռքբերումներն ինչպես են կապակցվում դպրոցի հիմնական առաքելության կատարման հետ: Ի վերջո, հնարավոր չէ բացառել (և դրա օրինակները բազմաթիվ են), որ ֆորմալ պահանջների կատարման հարցում հմուտ ինստիտուտները կարող են թերանալ և նույնիսկ հետընթաց գրանցել որակի և արդյունավետության ապահովման հարցում: Ֆորմալ խնդիրների նկատմամբ տեսչական մարմնի նման ուշադրությունը հակառակ ազդեցությունն է ունենում. դպրոցներն ավելի շատ ջանք և ուշադրություն են հատկացնում օրենսդրության ձևական պահանջների կատարմանն ու գրագրության որակին, քան կրթության որակի ապահովմանը:

Ստուգումների ժամանակացույցի հետ կապված խնդիրները

ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի պահանջի համաձայն, միննույն պետական մարմնի կողմից միննույն տնտեսավարող սուբյեկտում ստուգումները՝ կախված տնտեսավարող սուբյեկտի ռիսկայնության աստիճանից, իրականացվում են հետևյալ հաճախականությամբ՝

- 1) բարձր ռիսկայնության սուբյեկտների մոտ՝ ոչ ավելի հաճախ, քան տարին 1 անգամ,
- 2) միջին ռիսկայնության սուբյեկտների մոտ՝ ոչ ավելի հաճախ, քան 3 տարին 1 անգամ,
- 3) ցածր ռիսկայնության սուբյեկտների մոտ՝ ոչ ավելի հաճախ, քան 5 տարին 1 անգամ:

Ստուգումների հաճախականության՝ վերը բերված սահմանափակումները միանգամայն հիմնավորված են՝ ստուգման ենթակա սուբյեկտի բնականոն գործունեությունը չխաթարելու, ստուգում իրականացնող մարմնի վարքում հնարավոր կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու տեսանկյունից: Նշվածը վերաբերելի է նաև հանրակրթական դպրոցներին:

Սակայն, մյուս կողմից, հետազոտության մասնակիցները նշել են այն մասին, որ հինգ տարին մեկ իրականացվող ստուգումը չի կարող բավարար պատկերացում ձևավորել տվյալ դպրոցում առկա յուրահատուկ իրավիճակի և դրա դինամիկայի վերաբերյալ: Հինգ տարին զգալի ժամանակահատված է՝ տարբեր փոփոխությունների, նոր հիմնախնդիրների ի հայտ գալու կամ, հակառակը, որոշների հաղթահարման համար: Հինգ տարվա ընթացքում նշանակալի օրենսդրական փոփոխություններ կարող են կատարված լինել, որոնք նոր պահանջներ են առաջադրում դպրոցներին: Մեծ ազդեցություն ունի նաև դպրոցներում կադրերի հոսունությունն ու փոփոխությունը: Այսպիսով, երբ Տեսչությունը նախորդ ստուգումից հինգ տարի անց է ստուգում իրականացնում միննույն դպրոցում, բախվում է

միանգամայն այլ իրավիճակի՝ նոր մարտահրավերներով, խաղի նոր կանոններով, նոր դերակատարներով և հիմնախնդիրներով:

Օրինակ, ինչպես նշվել է Տեսչության աշխատակիցներից մեկի հարցազրույցում, «Մարզերից մեկում 2013թ.-ից հետո չեինք իրականացրել աշակերտների շարժի ուսումնասիրություն: Այս ժամանակահատվածում արդեն խնդիր է առաջացել, նորից խախտումներ կան, թվերը չեն բռնում: Այսինքն, ստուգման երկարատև դադարը բերում է նրան, որ խախտումները նորից տարածվում են»: Մեկ այլ հարցազրույցում նշվել է. «Ստուգման հաճախականությունը թույլ չի տալիս խնդիրները պահել վերահսկողության ներքո: Օրինակ, Արմավիրի մարզում 48 դպրոց է ստուգվել՝ չորս տարի առաջ: Հիմա դրանց մի մասը նորից է ստուգվում: Պետք է անպայման նայել նախորդ արդյունքները՝ տեսնելու, թե չորս տարվա մեջ ինչ է փոխվել, ինչ դինամիկա կա: Կան արդյոք կրկնվող խնդիրներ, թե ոչ: Քանի որ 4-5 տարի տվյալ դպրոցը չի ստուգվում, այդ տրամաբանական կապը բաց ենթ թողնում: Դժվար է զարգացումը տեսնել, որովհետև այդ տարիների ընթացքում փոփոխություններ են լինում»:

Որպես հետևանք՝ տուժում է նախկին իրադրության դինամիկան, տվյալ դպրոցի և նրա անձնակազմի զարգացման հետագիծը հասկանալու հնարավորությունը: Տեսական ժամանակահատված անց կատարվող ստուգման կամ ուսումնասիրության ժամանակ պետք է նորից ջանքեր գործադրել՝ իրավիճակի խորքային ընկալման, տվյալ դպրոցի և նրա սոցիալական միջավայրի յուրահատուկ միջավայրի ճանաչման համար: Այսպիսով, զարգացման միտումները հասկանալու փոխարեն՝ հերթական ստուգումը վերածվում է նոր էջից ծանոթացման:

Իհարկե, օրենքով նախատեսված են դեպքեր, երբ այս սահմանափակումները չեն գործում: Օրինակ, երբ ստուգում իրականացնող պետական մարմինը ՀՀ վարչապետից ստացել է ստուգում իրականացնելու հանձնարարական, երբ քաղաքացիներից կամ իրավաբանական անձանցից դիմում-բողոքներ է ստացել, և այլն: Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին օրենքով նախատեսված են նաև կրկնակի ստուգման և վերստուգում իրականացնելու հիմքերը: Այնուամենայնիվ, չնայած նախատեսված բացառություններին, իրավակիրառ պրակտիկան հիմնականում համահունչ է ստուգումների վերը ներկայացված պարբերականությանը:

Ընդ որում, մինչ այժմ մենք քննարկում էինք միայն օրենքով նախատեսված ժամանակային սահմանափակումը: Մինչդեռ, ստուգումների ժամանակացույցի վրա ավելի մեծ ազդեցություն ունեն Տեսչության սահմանափակ ռեսուրսները՝ ինչպես կադրային, այնպես էլ՝ ֆինանսական:

Տեսուչների թվաքանակը բացասաբար է ազդում անհրաժեշտ ծավալով տեսչավորում իրականացնելու վրա: Հետազոտության իրականացման պահին՝ 2017թ. մարտի դրությամբ, ԿՊՏ Հանրակրթության տեսչավորման բաժնում աշխատում էին 13 տեսուչ: Յուրաքանչյուր ստուգում տևում է միջինում հինգ օր: Դրան մասնակցում են առնվազն 2 տեսուչ և տարբեր առարկաների գծով դասալսում իրականացնող 4 մասնագետ (մաթեմատիկայի, հայոց լեզվի, հայոց պատմության, ռուսաց լեզվի): Նման թվակազմով և պայմաններով (նաև՝ դպրոցների արձակուրդային շրջանը բացառելով), յուրաքանչյուր տարի տեսչավորում է իրականացվում միջինում 60-80 հանրակրթական դպրոցում (Հայաստանում գործող շուրջ 1400 դպրոցից):

Տվյալ ուսումնական տարվա ընթացքում, սովորաբար, տեսչավորում է իրականացվում երկու մարզում: Այս մոտեցումն արդյունավետ է այն առումով, որ թույլ է տալիս խորությամբ հասկանալ տվյալ մարզի հանրակրթական համակարգին բնորոշ խնդիրները: Դպրոցների

ավելի մեծ ցրվածության պարագայում օրկնաչափությունների հայտնաբերումը գործնականում բարդ կլինի:

Ընդ որում, միջինում 5-օրյա ստուգումը, ըստ հարցվողների, բավարար չէ նույնիսկ աշակերտների գիտելիքները կամ դասավանդման մեթոդների արդյունավետությունը գնահատելու համար: Իրենց հերթին էլ՝ դասավանդման մեթոդները կամ աշակերտների կողմից գիտելիքների մակարդակը ամբողջական պատկերացում չեն տալիս կրթության որակի վերաբերյալ: Կրթության որակը բազմաթիվ այլ տարրերի համադրություն է և իրատեսական չէ դրա գնահատումը մի քանի օրվա ընթացքում:

Նաև վերոնշյալ պատճառներով պայմանավորված՝ Տեսչավորումն «... ավելի շատ սխալների հայտնաբերում է: Ներկայիս մեթոդները չեն կարող լիարժեք վերհանել որակի խնդիրները: Դրա համար, ավելի շատ իրավական ակտերի պահանջների կատարումն է ստուգում»:

Այսպիսով, տեսուչների թվաքանակը բավարար չէ առանձին դպրոցում նույնիսկ 5-ամյա պարբերականությամբ ստուգում իրականացնելու համար: Մինչև նույն դպրոցում ստուգման փաստացի պարբերականությունը իրականում գերազանցում է 5 տարին, կարող է հասնել յոթ և ավելի տարվա: Տեսչության գործունեության շուրջ մեկ տասնամյակի ընթացքում մեծ թվով դպրոցներում մինչ օրս կամ չի իրականացվել տեսչավորում, կամ՝ միայն մեկ անգամ է իրականացվել: Տեսչավորում իրականացնելու համար նախապատվություն է տրվում համեմատաբար մեծ թվով աշակերտ ունեցող դպրոցներին: Նաև այս պատճառով է, որ բազմաթիվ փոքր, գյուղական դպրոցներում այդպես էլ ստուգումներ և ուսումնասիրություններ չեն իրականացվել:

Ստուգումներն ու ուսումնասիրությունները պլանավորելիս հաշվի է առնվում ոչ այնքան դրանց անհրաժեշտությունը/կարիքը, որքան՝ Տեսչության մարդկային և այլ ռեսուրսների առկայությունը: Ընդ որում, թեև Տեսչության կառուցվածքում առկա են տարածքային մարմիններ (հյուսիսային, հարավային, արևելյան, արևմտյան), սակայն դրանք գործունեություն են ծավալում Տեսչության երևանյան գրասենյակում: Հայաստանի մարզերում Տեսչությունը չունի աշխատակիցների մշտական ներկայացվածություն:

Ընդ որում, առանձին խնդիր է նաև դպրոցների ռիսկայնության համապարփակ գնահատման բացակայությունը: Ուսումնական հաստատության ոլորտային ռիսկը դասակարգվում է ցածր, միջին և բարձր ռիսկային մակարդակների՝ հաշվի առնելով վերջին երեք տարվա ընթացքում Տեսչության կողմից կատարված ստուգումների արդյունքները⁴⁹: Քանի որ, ինչպես նշեցինք, բազմաթիվ դպրոցներում ստուգում չի իրականացվել երբևէ, հետևաբար բացակայում է դրանց ռիսկայնության ցուցանիշը:

Հաշվի առնելով դպրոցների մի մասի ռիսկայնության գնահատականի բացակայությունը և Տեսչության սահմանափակ մարդկային ռեսուրսները՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը լիարժեք կիրառություն չունի:

Տեսչավորման ժամանակացույցի հետ կապված հաջորդ խնդիրն այն է, որ դպրոցները, որոնց մոտ ստուգումն ավելի ուշ է նախատեսված, քան այլ դպրոցներում, հայտնվում են առավել շահեկան վիճակում. «Դպրոցների տնօրենները, ում մոտ ավելի շուտ է սկսվել ստուգումը, տեղեկացնում են իրենց կոլեգաներին, թե Տեսչությունն այդ անգամ որ

⁴⁹ ՀՀ Կառավարության 2006 թվականի N 497-Ն որոշումը՝ ՀՀ ԿԳՆ աշխատակազմի Կրթության պետական տեսչության՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը և ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին, <https://goo.gl/NHwhbd>

խնդիրներին է ավելի շատ ուշադրություն դարձնում: Նրանք էլ հասցնում են ուղղել: Այսինքն՝ անհավասար պայմաններ են: Ում մոտ ստուգման առաջին շաբաթն են գնում, նա տուժում է: Ում մոտ գնում են ավելի ուշ, իրենց կուլեգա տնօրեններից իմանում են խախտումների բնույթի մասին, հասցնում են ուղղել, ամեն ինչ լավ ցույց տալ: Ճիշտ կլինի՝ բոլոր մոտ միանգամից մտնեն ստուգման, որ անհավասար չլինի»:

Ճիշտ է, ստուգման ենթակա խնդիրների ցանկը բաց տեղեկատվություն է և հասանելի է դպրոցների համար՝ ստուգաթերթերի միջոցով: Սակայն յուրաքանչյուր տարի Տեսչությունը սովորաբար թիրախավորում է, ավելի մեծ ուշադրության է արժանացնում խնդիրների որոշակի շրջանակի: Որպես հետևանք՝ այս տեղեկատվությանը նախապես կամ ստուգումների ընթացքում տիրապետող դպրոցներն առավելություն են ստանում մյուսների նկատմամբ:

Հայտնաբերված խախտումների վերացման գործընթացն ու Տեսչության լիազորությունները

Տեսչավորման կամ ուսումնասիրության արդյունքում կրթության բնագավառի օրենսդրության պահանջների խախտում հայտնաբերելու դեպքում ՀՀ կրթության գլխավոր պետական տեսուչը կամ, նրա հանձնարարությամբ, տեսչության տարածքային մարմնի ղեկավարը ուսումնասիրվող սուբյեկտին (տվյալ դեպքում՝ հանրակրթական դպրոցին) նախազգուշացնում է կրթության բնագավառի օրենսդրության պահանջի խախտման մասին՝ նշելով խախտման հետևանքները վերացնելու միջոցառումները, այդ թվում՝ դրանց կատարման ժամկետը: Բացահայտված խախտումների հետևանքների և թերությունների վերացմանն ուղղված կամ ուսումնական հաստատության զարգացմանը նպաստող՝ կատարման համար պարտադիր հանձնարարականներ կարող են տրվել ուսումնական հաստատությունների կառավարման մարմիններին (տնօրեններին և խորհուրդների նախագահներին): Ըստ ուսումնական հաստատությունների ենթակայության, Տեսչությունը կարող է առաջարկություններ ներկայացնել լիազորված պետական և (կամ) տեղական ինքնակառավարման մարմիններին, ուսումնական հաստատությունների հիմնադիրներին:

Ուսումնասիրվող դպրոցը նախազգուշացմանն առնչվող միջոցառումների կատարման մասին պարտավոր է պատշաճ ձևով տեղյակ պահել ՀՀ կրթության գլխավոր պետական տեսուչին կամ տեսչության տարածքային մարմնի ղեկավարին: ԿՊՏ մասին օրենքի 18-րդ հոդվածում նշված է, որ նախազգուշացումից հետո սահմանած ժամկետում խախտման հետևանքները չվերացնելը և (կամ) դրա վերաբերյալ պատշաճ ձևով չտեղեկացնելը հիմք է դառնում նոր ստուգումների իրականացման համար:

Սակայն Տեսչությունը չունի պարտադիր հանձնարարականների կատարմանը նպաստող կամ այն երաշխավորող հարկադրանքի միջոցներ: Որևէ կերպ կարգավորված չէ այն հարցը, թե խախտման հետևանքները չվերացնելն ինչպիսի պատասխանատվություն է նախատեսում հանրակրթական հաստատության ղեկավար մարմինների՝ տնօրենի և խորհրդի համար:

Տեսչությունն իրավասու է համապատասխան լիազոր մարմինն (օրինակ՝ ԿԳՆ-ին, մարզպետին կամ ՏԻՄ-ին) առաջարկություն ներկայացնելու դպրոցի տնօրենի նկատմամբ պատասխանատվության միջոցներ կիրառելու վերաբերյալ: Սակայն ներազդեցության անմիջական, ուղղակի լծակներ չունի, ի տարբերություն այլ ոլորտներում գործող տեսչությունների, որոնք վարչական մարմիններ են և կարող են հարուցված վարչական վարույթի արդյունքներով նաև տույժեր կիրառել: ԿՊՏ այս կարգավիճակը (մասնավորապես՝

վարչական մարմին չլինելը), ըստ հարցվողների, առիթ է հանդիսացել այն հաճախ բնորոշելու որպես «անատամ տեսչություն»:

Հարցվողների մի մասը դրական է գնահատել ԿՊՏ՝ վարչական մարմին չլինելու հանգամանքը: Ըստ նրանց, Տեսչության կողմից վարչական վարույթ չիրականացնելու փաստը դրական ազդեցություն ունի այս մարմնի հանրային ընկալման վրա: Այն չի դիտարկվում որպես պատժիչ մարմին: Ըստ հարցվողների զգալի մասի՝ պատժիչ գործառույթների կատարումը կարող է ստվերել, երկրորդային պլան մղել Տեսչության խորհրդատվական, աջակցող գործառույթները:

Ցավոք, դպրոցների զգալի մասում տեսչավորումը մինչ այժմ ընկալվում է որպես պատժիչ կամ պատժի համար հիմք նախապատրաստող գործողություն: Ըստ հարցվողների, դպրոցներում դեռ տարածված է այն ընկալումը, որ ստուգումներն իրականացվում են ոչ թե աջակցելու, այլ՝ ինչ-որ խախտում հայտնաբերելու և պատժելու համար:

Տեսչական այցերը լուրջ լարվածություն են առաջացնում դպրոցի անձնակազմի համար: Ստուգման ժամանակահատվածում բոլոր ջանքերն ուղղվում են տեսուչների վրա դրական տպավորություն թողնելուն: Անձնակազմի խնդիրն է դառնում ծանոթ խնդիրների քողարկումը և հնարավորինս դրական լույսի ներքո հանդես գալը:

Ընդհանուր առմամբ, տեսչական մարմիններն (անկախ իրենց գործունեության ոլորտից), ունեն ներազդեցության երկու հիմնական մարտավարություն՝ հարկադրանքի և խորհրդատվության: Տարբեր երկրներում գործում են տարբեր մոտեցումներ: Երբեմն այս երկու մարտավարությունները հաջողությամբ համադրվում են և կիրառվում են՝ ըստ անհրաժեշտության: Այնուամենայնիվ, վերջին երկու տասնամյակի միտումները վկայում են խորհրդատվական, աջակցող մարտավարությանը նախապատվություն տալու մասին: Վերջին տարիներին հատկապես կարևորվում է դպրոցների ինքնավարությունը, ինչպես նաև՝ հանրային վստահությունը դպրոցների հանդեպ: Համարվում է, որ դպրոցին պետք է զգալիորեն վստահել և աջակցել՝ սեփական կարողություններով ու մոտեցումներով առկա խնդիրները լուծելու համար:

Այս մոտեցման (դպրոցների լայն ինքնավարության) հետ համակարծիք էին հարցվողների մի մասը. «Կրթության որակի նկատմամբ Տեսչության վերահսկողությունը պետք է անուղղակի բնույթ ունենա: Ի վերջո, դա դպրոցի գործն է և ազատությունն է՝ կիրառելու որոշակի մեթոդներ ու մանկավարժական մոտեցումներ: Տեսչությունը ոչ թե պետք է միջամտի որակի ապահովմանը անմիջականորեն, այլ՝ անուղղակի կերպով՝ օրինակ, դիտարկելով, թե արդյոք մեթոդ-միավորումները նորմալ գործում են, արդյոք կազմում են արձանագրություններ, և այլն: Իսկ կրթության բովանդակային հարցերը արդեն պետք է որոշվեն այդ խորհուրդների կողմից»:

Բացի այդ, պետք է հաշվի առնել պատասխանատվության այս կամ այն միջոցի արդյունավետության աստիճանը: Դպրոցի նկատմամբ դրամական տուգանքը դժվար է արդյունավետ միջոց համարել: Ի վերջո, այդ տուգանքը վճարվելու է դպրոցի բյուջեից, որն իր հերթին պետական բյուջեի միջոցներով է ձևավորվում:

Ինչպես նշվել է հարցազրույցներից մեկում, «Եթե նույնիսկ հիմա Տեսչությունը ստանա վարչական տույժերի իրավասություն, ի՞նչ իմաստ ունի դրանց կիրառությունը: Միևնույն է, դպրոցը պետական բյուջետային հիմնարկ է: Դպրոցին եթե տուգանի, մի գրպանից վերցնելու է, դնի մյուս գրպանը: Այսինքն, դպրոցին փողով պատժելու իմաստ չկա: Իսկ նկատողություն և այլ տույժեր կարող է տալ միայն տնօրենի գործատուն, ոչ տեսչությունը»:

Վերջապես, կարևոր է հասկանալ այս կամ այն խախտման խորքային պատճառները, ինչպես նաև՝ դրա վերացման իրական հնարավորությունները: Օրինակ, գյուղական դպրոցներում տարածված հիմնախնդիր է համապատասխան որակավորմամբ ուսուցիչների պակասը: Տեսչության կողմից հայտնաբերված խախտումների շարքում տարածված խնդիրներ են առանց մրցույթի անցկացման ուսուցչին աշխատանքի ընդունելը, անհրաժեշտ որակավորում չունեցող անձի հետ աշխատանքային պայմանագիր կնքելը: Ըստ հարցվողներից մեկի, ի կատարումն Տեսչության հանձնարարականների, դպրոցի տնօրինությունն ապահովում է ֆորմալ ընթացակարգը (օրինակ՝ տվյալ ուսուցչին աշխատանքից ազատելը, մրցույթի հայտարարություն տալը), միաժամանակ լավ իմանալով, որ գործնականում անհնար է պահանջվող որակավորմամբ մասնագետ գտնել: Արդյունքում՝ իրավիճակն էականորեն չի փոխվում, շատ դեպքերում, այլընտրանքի բացակայության պատճառով, կրկին պայմանագիր է կնքվում աշխատանքից ազատված անձի հետ:

Շեղանարար, Տեսչության գործունեության արդյունքում փոփոխություններ ունենալու համար կարևոր է այդ ակնկալվող բարեփոխումները սպասարկող ենթակառուցվածքների, ֆինանսական և մարդկային ռեսուրսների առկայությունը: Առանց համապատասխան ռեսուրսային հենքի, Տեսչության կողմից տրված հանձնարարականները (որքան էլ դրանք հիմնավորված են և օրենքի պահանջներին համահունչ), մնում են թղթի վրա:

Հարկադրանքի մարտավարության մյուս վտանգն է՝ թե Տեսչության, թե լիազոր մարմինների հետ հարաբերություններում դպրոցների կողմից առավել զգուշավոր և փակ գործելակերպի որդեգրումը: Այս դեպքում դպրոցները հակված կլինեն ամեն կերպ թաքցնելու առկա խնդիրները, ինչը կհանգեցնի դրանց խորացմանը: Մինչդեռ, երբ դպրոցների անձնակազմը դիտարկում է Տեսչությունը որպես աջակցող մարմին, առավել բաց է հաղորդակցության և խնդիրները համատեղ ուժերով հաղթահարելու համար:

Իհարկե, պատասխանատվության միջոցների կիրառության ներկայիս պրակտիկան նույնպես խնդրահարույց է: Այսպես, հարցվողները մի շարք դեպքեր են մատնանշել, երբ լիազոր մարմինը կամայական մոտեցում է ցուցաբերել Տեսչության ներկայացրած առաջարկությունների առնչությամբ: Մասնավորապես, պատժել է որոշ դպրոցների տնօրենների, մինչդեռ նույնատիպ խախտման համար որոշների նկատմամբ որևէ միջոց չի կիրառել: Ըստ հարցվողների, մարզպետները երբեմն օգտագործում են Տեսչության ստուգումների արդյունքները՝ որոշ տնօրենների անձնական շահախնդրությամբ աշխատանքից հեռացնելու կամ այլ կերպ պատժելու համար: Հակառակ օրինաչափությունը նույնպես գործում է. լիազոր մարմնի կամ տեղական իշխանության այլ օղակների հետ լավ հարաբերություններ ունեցող տնօրենները մնում են անպատիժ: Այս տեսանկյունից, պատասխանատվության միջոցների կիրառությունն ավելի անաչառ և անկողմնակալ կարող է լինել Տեսչության, քան՝ տեղական մարմինների կողմից:

Տեսչական ենթակայության և շահերի բախման խնդիրները

Որպես կանոն, այն դպրոցներում, որտեղ Տեսչության կողմից իրականացվում է քննական գործընթացի դիտարկում, գնահատականները միջինից ցածր են լինում: Դիտարկվող կամ ուսումնասիրվող դպրոցներում, համեմատած այլ դպրոցների, պատկերն ավելի մոտ է լինում իրականությանը:

Ինչպես նշել են Տեսչության աշխատակիցները, իրենց կողմից անցկացրած քննությունների արդյունքներն ակնհայտ տարբերվում են դպրոցի կողմից կազմակերպված քննությունների արդյունքներից. «Մենք համեմատում ենք մեր գրավորի արդյունքը՝ տվյալ դպրոցի, դասարանի՝ նախորդ տարվա արդյունքի հետ: Եվ ակնհայտ տարբերություններ կան: Մեր գրավորի արդյունքով՝ ցածր է, կան անբավարարներ, իսկ դպրոցի անցկացրածով՝ անբավարար գնահատական չկա: Օրինակ, մեր արդյունքով աշակերտների 70%-ը ստացել է անբավարար, իսկ իրենց անցկացրածով ոչ մի անբավարար չկա»:

Իհարկե, արդյունքների այդպիսի էական տարբերությունը պայմանավորված է ոչ միայն դպրոցի անձնակազմի հնարավոր կողմնակալ գնահատմամբ, այլև՝ քննական առաջադրանքների բովանդակության տարբերությամբ. «Տեսչությունը ոչ թե տեստ է տալիս՝ դպրոցի պես, այլ ստուգում ենք մնացորդային գիտելիքն ու կարողությունները: Օրինակ՝ մաթեմատիկայից տալիս ենք 4 առաջադրանք: Կամ՝ հայոց լեզվից՝ թելադրություն: Մեր առաջադրանքները հիմնված են նախորդ տարվա ուսումնական նյութի վրա: Մնացորդային գիտելիքների պակասն ակնհայտ երևում է այդ առաջադրանքների միջոցով»:

Ըստ Տեսչության աշխատակիցների, դպրոցների տարածված «արդարացումն» այն է, որ իրենք աշակերտներին պատրաստում են քննությունների (հաջողությամբ տեստեր լրացնելուն): Այսպիսով, աշակերտների գիտելիքների և կարողությունների ցածր մակարդակը պայմանավորված է ոչ միայն դասավանդման հնարավոր թերացումներով, այլև՝ հանրակրթական համակարգի առջև դրված և աշակերտների ու նրանց ծնողների կողմից առավել կարևոր համարվող խնդիրներով:

Ըստ հետազոտության մասնակիցների, որքան էլ տեսուչների ներկայությունը քննական գործընթացում կաշկանդող նշանակություն է ունենում, միևնույն է, Տեսչությունը լոյալ վերաբերմունք է պահպանում դպրոցի ավարտական քննություններում գնահատականների անհիմն բարձրացման կամ աշակերտներին ցուցաբերվող աջակցության նկատմամբ: Ինչպես նշել է հարցվողներից մեկը, «Տեսչությունը այք է փակում անբավարար գնահատականները բավարար դարձնելու վրա, որովհետև դա ամբողջ հանրակրթության հեղինակության խնդիրն է նաև: Բայց թույլ չեն տալիս, որ անբավարարը գերազանց գնահատվի»: Հարցվողներից մյուսի կարծիքը ևս համահունչ է վերը բերվածին. «Ավարտական քննություններին Տեսչությունը այք է փակում: Եթե շատ խիստ հետևեն, շատ վատ պատկեր կստացվի, շատերը չեն ավարտի»:

Այսպիսով, Տեսչության մշտադիտարկումը սահմանափակում է կողմնակալ գնահատման հնարավորությունները: Մյուս կողմից, սակայն, հանրակրթական համակարգի հեղինակության մասին մտահոգությունը դրդում է այք փակել անբավարար գնահատականների անհիմն բարձրացման նկատմամբ: Տեսչական մարմնի նման վարքագիծը սպասելի է, քանի որ, մի կողմից, այն ստուգող մարմին է, մյուս կողմից՝ ԿԳՆ ստորաբաժանում: Շահերի բախումն անխուսափելի է, քանի որ կառույցի գործառույթները որոշ իրավիճակներում ուղղակի հակասության մեջ են մտնում գերատեսչական շահի (օրինակ՝ հեղինակության պահպանման, թերությունները ծածկելու) հետ:

Պետք է նշել, որ այս խնդիրը բնորոշ է տեսչական մարմիններին ընդհանրապես, անկախ գործունեության բնագավառից: Տեսչության գործառույթները որևէ նախարարության ենթակայության ներքո էականորեն սահմանափակում է այդ մարմնի անկախությունը: Տեսչությունը, որ գործում է նախարարության կազմում, կաշկանդված է նույն նախարարության կազմում կամ ենթակայությամբ գործող այլ կառույցների տեսչավորման հարցում:

Քաղաքականության մշակող ու իրագործող և դրա նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինների տարանջատումը կարող է նպաստել պետական կառավարման միևնույն բնագավառում հակակշիռների ստեղծմանը, շահերի բախման ռիսկերի կանխմանը, ներհամակարգային կոռուպցիոն ազդեցությունների չեզոքացմանը:

Իհարկե, կառուցվածքային վերափոխումներ իրականացնելիս պետք է ապահովել նշված մարմինների միջև արդյունավետ հաղորդակցությունը: Տեսչության ենթակայության և կարգավիճակի փոփոխությունը չպետք է հանգեցնի ԿԳՆ հետ համագործակցության ընդհատմանը կամ մրցակցային հարաբերությունների ձևավորմանը: Նոր տեսչական մարմնի հավաքած տեղեկատվությունն ու առաջարկությունները պետք է լիովին բաց լինեն լիազոր մարմնի համար:

Ղասալումների անհավոտ հիմնախնդիրները

Ներկայումս տեսչավորման գործընթացում լայնորեն կիրառվող մեթոդներից մեկն էլ դասալումն է: Հետազոտության արդյունքում այս մեթոդի կիրառությանն ու արդյունավետությանն առնչվող մի քանի հիմնախնդիրներ են բացահայտվել:

Խնդիրներից մեկը վերաբերում է դասալում իրականացնող անձի և դասավանդող ուսուցչի մոտեցումների տարբերությանը՝ դասավանդման հայեցակարգերի և մեթոդների շուրջ: Օրինակ, դասալում իրականացնող անձը կարող է նախապատվություն տալ դասավանդման առավել ինտերակտիվ մեթոդներին, իսկ դասավանդողը՝ ավանդական մոտեցումների կողմնակից լինել, կամ՝ հակառակը: Կենսափորձով, մասնագիտական փորձառությամբ և անձնային այլ գործոններով պայմանավորված օրինաչափ այս տարբերությունները կարող են միևնույն խնդրի վերաբերյալ տարբերակային տեղիք տալ: Տեսչության կողմից չի օգտագործվում դասալումային այնպիսի կարգ (ներառյալ չափանիշներն ու մեթոդաբանությունը), որը հնարավորինս կանխատեսելի և կողմերի համար հնարավորինս ընդունելի կդարձներ դրա արդյունքները: Ըստ էության, դասալումային արդյունքները, դրանց մեկնաբանությունն ու կիրառությունը որևէ ֆորմալ ընթացակարգով կարգավորված չէ:

Հաճախ տարբերակային պատճառ է դառնում այն հանգամանքը, որ ուսուցիչը և նրա դասին դասալում իրականացնողը աշակերտների տարբեր տարիքային խմբերի հետ են աշխատում, ինչն էլ պայմանավորում է նրանց մոտեցումների տարբերությունը: Պետք է հաշվի առնել նաև տվյալ կրթական հաստատության սովորողների առանձնահատկությունները: Օրինակ՝ ԿԱՊԿՈՒ երեխաներ ունեցող դասարաններում դասալում իրականացնող անձը պետք է հատուկ ուշադրություն դարձնի ներառական ուսուցման մեթոդների կիրառությանը: Ինչը, բնականաբար հատուկ պատրաստություն է պահանջում: Այս դեպքում գնահատման միասնական մոտեցում (աշակերտների առանձնահատուկ կարիքները չարտացոլող) կիրառելը տեղին չէ:

«Ասում են՝ լավ մասնագետ ուղարկի դասալումային համար: Չեն նայում՝ որ դասարանում է դասալում անելու կամ որտեղ է իրականացվելու դասալումը: Այսինքն՝ տարբեր սպեցիֆիկ բաներ հաշվի չեն առնում: Օրինակ, թե որ դասարանում է դասավանդում տվյալ ուսուցիչը, որ տարիքային խմբի հետ աշխատելու փորձ ունի»:

Այսպիսով, անհրաժեշտ է սահմանել դասալում իրականացնող անձանց ընտրության չափանիշները: Վերջապես, «լավ ուսուցիչը» և «լավ դասալում իրականացնողը» տարբեր դերեր են: Արհեստավարժ ուսուցիչ լինելը միգուցե անհրաժեշտ, բայց բավարար պայման չէ

արդյունավետ դասալսում իրականացնելու համար: Դասալսում իրականացնողը պետք է շատ լավ տիրապետի կրթական չափորոշիչներին, և կարողանա դասալսման արդյունքներով օգտակար, կիրառելի հնաձևարարականներ պատրաստել:

Մինչ այժմ Տեսչության տրամադրության ներքո առկա չէ դասալսում իրականացնող մասնագետների տվյալների բազա, որն ընտրության լավ հնարավորություն կընձեռներ:

Դրական է այն հանգամանքը, որ ներկայումս Տեսչության կողմից դասալսման են ներգրավվում գործող ուսուցիչները: Նախկին պրակտիկան, երբ դասալսում էին իրականացնում արդեն տևական ժամանակ դպրոցում չդասավանդող անձինք, արդյունավետ չէր: Ըստ հարցվողների, կարևոր է, որ դասալսում իրականացնողը գործող ուսուցիչ լինի՝ խնդիրները ներսից պատկերացնելու, ինչպես նաև՝ ժամանակակից մոտեցումներին և մեթոդներին տեղյակ լինելու կամ տիրապետելու համար:

Մյուս կողմից, սակայն, գործող ուսուցիչների՝ որպես դասալսողների ներգրավումը շահերի բախման խնդիր է առաջացնում: Օրինակ, ինչպես նշել է դպրոցի տնօրեն հարցվողներից մեկը, «Դասալսում անող ուսուցիչն էլ է իմ կոլեգան, կարող եմ իր վրա ազդել: Կարող եմ իր տնօրենին զանգել և ասել, որ իր ենթակային ասի՝ մեղմ նայի»: Գործող ուսուցիչների դեպքում դասալսման օբյեկտիվության վրա են ազդում գործընկերային հարաբերությունները, թեկուզ՝ միջնորդավորված կերպով, ոչ անմիջական ծանոթության: Խնդիրն առավել ցայտուն է մարզային դպրոցներում, որտեղ գործընկերային և ընկերական կապերի ազդեցությունն ավելի ուժեղ է արտահայտված: Մյուս կողմից, Տեսչությունը բավարար ֆինանսական միջոցների չի տիրապետում՝ մայրաքաղաքից կամ այլ շրջաններից դասալսողների ներգրավելու համար: Սովորաբար դասալսում են իրականացնում միևնույն մարզում աշխատող ուսուցիչները:

Հարցվողների զգալի մասն ընդհանրապես թերահավատ է դասալսման մեթոդի արդյունավետության հարցում: Օրինակ, ինչպես նշել է հարցվող տնօրեններից մեկը, «Դասալսումը շատ չի օգնում: Ընդամենը այդ պահին ուսուցիչը լավ դաս է անում: Դասալսման ժամանակ ուսուցիչը կարող է փայլուն դաս ապահովել, իսկ հետո՝ գլուխ պահել: Մի օրվա դասալսման արդյունքով հնարավոր չէ պատկերացում կազմել: Ոչ միայն լավ արդյունքն է խաբուսիկ, այլև՝ վատ: Եթե վատ արդյունք լինի, տնօրենը կարող է ասել՝ իմ լավագույն ուսուցիչներից է, ձեզ տեսնելով՝ շփոթվեց»:

Այս խնդիրը մատնանշվել է նաև Տեսչության նախկին և ներկա աշխատակիցների հետ հարցազրույցներում. «Երբ մենք ստուգում ենք անում, երեխաներն անգամ խնդրում են, որ իրենց դպրոցից չգնանք: Որովհետև մեր ներկայությամբ դասերը շատ հետաքրքիր են վարում: Մեր գնալուց հետո՝ վերադառնում են սովոր ռեժիմին», «Դասալսումը, որ ընկալվում է որպես սխալ բռնելու միջոց՝ (թե աշակերտի, թե ուսուցչի սխալը), չի ծառայում իր նպատակին: Բոլորին կամ կաշկանդում է, կամ՝ խթանում, որ ավելի լավ վարք ցույց տան: Այսինքն, երկու դեպքում էլ օբյեկտիվ պատկերը չի տալիս»:

ՀՀ կրթական համակարգում բարեվարքության խնդիրներին նվիրված վերջին հետազոտություններից մեկում նույնպես անդրադարձ կա այս խնդրին: Նշված է, որ դասալսումների համար նախատեսված ժամանակը բավարար չէ մատուցվող ուսումնական նյութի ամբողջականությունը գնահատելու համար: Մահմանված կարգը թույլ չի տալիս միևնույն դպրոցում անցկացնել ավելի քան մեկ ստուգում 5 տարվա ընթացքում կամ 3

տարվա ընթացքում, եթե հիմքեր կան ենթադրելու, որ տվյալ դպրոցն արդյունավետ չի աշխատում⁵⁰:

Ընդհանուր առմամբ, հարցվողները համակարծիք էին, որ միայն դասալսումը լիարժեք պատկերացում չի տալիս դասավանդման խնդիրների վերաբերյալ: Դասավանդման որակի միջնորդավորված գնահատումը՝ սովորողների մնացորդային գիտելիքների գնահատման միջոցով, ավելի արդյունավետ եղանակ է համարվել:

Կարգավորված չեն նաև դասալսման մասնակցող ուսուցիչների՝ իրենց ուսումնական գործընթացից բացակայության խնդիրները: Դասալսում իրականացնողը դրա համար չի վարձատրվում, չի տրամադրվում որևէ փոխհատուցում, դասալսման պատճառով բացակայությունը չի ձևակերպվում որպես գործուղում: Դասալսման մասնակցող ուսուցիչների խրախուսման միակ մեխանիզմն այն է, որ այդ փաստը հաշվի է առնվում տարակարգի ստացման ժամանակ: Ակնհայտ է, որ այս միջոցը բավարար չէ լավագույն մասնագետների շահագրգիռ մասնակցությունն ապահովելու հարցում: Նաև այդ պատճառով է, որ շատերը (հատկապես՝ կրկնուսույցները) զբաղվածության պատճառով հրաժարվում են դասալսում իրականացնել:

Այս խնդիրները սովորաբար կարգավորվում են բանավոր համաձայնությամբ՝ դպրոցի տնօրենի հետ բանակցության միջոցով: Ինչպես նշել է հարցվողներից մեկը, «Նրա (դասալսողի) ժամերը լրացնում են այլ առարկաների ուսուցիչները, մինչև կվերադառնա և կլրացնի իր ժամերը: Նրա բացակայությունից տուժում է դասապրոցեսը: Բանավոր պայմանավորվածության հիման վրա է մասնակցում դասալսման, գրավոր ընթացակարգ չկա»:

Կադրային խնդիրներ և վերապատրաստում

Ներկայումս առկա չէ ԿՊՏ տեսուչների վերապատրաստման որևէ ընթացակարգ: Տեսուչները վերապատրաստվել են Տեսչության ձևավորման փուլում՝ շուրջ տասը տարի առաջ, բրիտանացի գործընկերների կողմից, և դրանից հետո մասնագիտական դասընթացներ գրեթե չեն իրականացվել:

Տեսուչները՝ որպես քաղաքացիական ծառայողներ, անցնում են օրենքով նախատեսված ատեստավորումները, որոնցում շեշտը դրված է օրենքների իմացության վրա: Մակայն բուն տեսչավորման կարողություններին և հատկապես կրթության բնագավառում տեսչավորման առանձնահատկություններին նվիրված դասընթացներ տեսուչներին չեն առաջարկվում:

Մինչդեռ տեսուչների շարունակական կրթությունն անհրաժեշտություն է: Օրինակ, ինչպես նշել է հարցվողներից մեկը, «Միայն կրթական չափորոշչին տեղյակ լինելն էլ բավարար չէ: Պետք է կարողանալ այն դիտարկել գործնականում, ունենալ հմտություններ՝ գնահատման, գործնականում դրա ապահովումը գնահատելու համար: Միայն օրենքը իմանալը շատ քիչ է»:

⁵⁰ Միլովանովիչ Մ., համահեղինակներ՝ Մեներիկ Ի. Ավետիսյան Մ. Խավանսկա Տ., Կոռուպցիայի դեմ պայքարը և բարեվարքության արմատավորումը Հայաստանի կրթական ոլորտում, 2015, էջ 66:

Բարեվարքության խնդիրները՝ տեսչավորման գործընթացում

Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ կետում սահմանված է, որ «Ստուգում իրականացնող անձինք պետք է պատասխանեն բացառապես տվյալ գործունեության համար նախատեսված ստուգաթերթում ընդգրկված հարցերին և ստուգեն դրանք կարգավորող նորմերի կատարման պահանջները»: Սա նշանակում է, որ ստուգումը պետք է իրականացվի միայն ստուգաթերթում սահմանված խնդիրների շրջանակում:

Ըստ հետազոտության մասնակիցների՝ օրենքի այս պահանջը երբեմն անտեսվում կամ խախտվում է տեսչավորում իրականացնող անձանց կողմից: Նրանք երբեմն քննության առարկա են դարձնում նաև այնպիսի խնդիրներ, որոնք ընդգրկված չեն ստուգաթերթում կամ գլխավոր տեսուչի կողմից հանձնարարված թեմատիկ ստուգման խնդիրների շարքում: Ըստ հարցվողների, տեսուչները երբեմն օգտվում են տնօրենների՝ օրենքի չիմացության հանգամանքից, ինչը կարող է դիտվել որպես պաշտոնական դիրքի չարաշահում. «Տեսչական ստուգման ժամանակ, եթե հատկապես տնօրենը թաքցնելու բան ունի, վախենալու բան ունի, տեսուչը ինչ էլ ուզի ստուգել՝ սովորաբար չեն ընդդիմանում: Նույնիսկ եթե դա ստուգաթերթի շրջանակից դուրս է: Տնօրենը մտածում է. եթե հրաժարվեմ, թույլ չտամ ստուգեն՝ կ'մտածեն, որ վախենում եմ, թաքցնելու բան ունեմ», «Հոգեբանական պահ կա: Շատ տնօրեններ, վախենալով, կաշկանդվելով, չեն էլ փորձում ընդդիմանալ տեսուչին: Ինչ պահանջի՝ իսկույն անում են: Այսինքն, միայն տեսուչի կողմից խախտումը չէ, այլ՝ տնօրենի՝ օրենք չիմանալը, ստուգաթերթերին ծանոթ չլինելը», «Հիմնական խնդիրը տեսուչների վարքագծի հետ է կապված: Լավ կլիներ՝ մտնեին ընկերական, որպես խորհրդատու, ոչ թե՝ սխալ բռնելու համար: Կան տեսուչներ, որ կեցվածք, դիրք են ընդունում, խիստ, պատժողի կեցվածք: Տեսուչներն իրենց ավելի ազատ են զգում մարզերում, այնտեղ կոռուպցիոն խնդիրներն ավելի տարածված են: Մի սխալի համար մարզում կարող են տնօրենին կանչել և պարտադրել ազատման դիմում գրել»:

Կոռուպցիոն ռիսկ է պարունակում նաև տեսչավորման ավարտից հետո դպրոցի տնօրենին Տեսչություն հրավիրելու պրակտիկան. «Ճիշտ չէ, որ տնօրենին կանչում են իրենց մոտ՝ Տեսչություն: Թող դնեն կայքում հրապարակեն, և վերջ: Ինչու են կանչում իրենց մոտ: Փորձում են հոգեբանորեն ազդել, վախեցնել»:

Մտահոգության տեղիք է տալիս նաև այն փաստը, որ Տեսչության գործունեության շուրջ մեկ տասնամյակի ընթացքում, երբ կազմվել են հարյուրավոր արձանագրություններ և հանձնարարականներ, դպրոցների ղեկավար մարմինները երբևէ չեն բողոքարկել դրանք: Բողոքարկման պրակտիկայի բացակայությունը կարող է մի շարք համակարգային խնդիրների վկայությունը լինել: Օրինակ՝ տնօրենների կաշկանդվածության կամ պասիվության, համապատասխան ընթացակարգերի չիմացության, բողոքարկման արդյունքների նկատմամբ ցածր վստահության, և այլն: Անկախ Տեսչության կազմած փաստաթղթերի որակից, դրանց վիճարկման փորձերի բացակայությունը մտահոգիչ է և չի կարող համարվել դրական երևույթ համարվել:

Տեսչավորման արդյունքների վրա, ըստ հանրակրթական դպրոցները ներկայացնող հարցվողների, մեծապես ազդում են դպրոցի տնօրենի անձնական հարաբերություններն ինչպես տեսուչների, այնպես էլ կրթական համակարգի պատասխանատուների հետ: Առավել լայն և ազդեցիկ կապեր ունեցող տնօրենները կարողանում են խուսանավել բացասական եզրահանգումներից, ինչպես նաև՝ լիազոր մարմնի կողմից դրանց հետևող պատասխանատվության միջոցներից. «Դեպքեր են եղել, երբ լուրջ խախտումների համար

ծածկադմփոց է արվել, որովհետև դպրոցի ղեկավարությունը բարձրաստիճան հովանավորներ է ունեցել»:

Վերջապես, տեսուչների անկողմնակալության վրա կարող են ազդել նաև բուն տեսչավորման գործընթացում դպրոցի անձնակազմի հետ ձևավորվող հարաբերությունները: Օրինակ, դեպքեր են լինում, հատկապես մարզերում, երբ հեռավոր, դժվարամատչելի դպրոցների տնօրեններն իրենց մեքենաներով տեսուչներին աջակցում են դպրոց հասցնելու հարցում, կազմակերպում են նրանց հյուրասիրությունը, աջակցում են կացարան գտնելու և այլ կենցաղային խնդիրների լուծման հարցում: Ակնհայտ է, որ գյուղական բնակավայրերում տրանսպորտի, կեցության, սննդի և այլ խնդիրների լուծումն իսկապես դյուրին չէ՝ հաշվի առնելով նաև գործուղման համար տրամադրվող սուղ միջոցները: Մյուս կողմից, սակայն, նմանատիպ հարաբերությունները կարող են կաշկանդող ազդեցություն ունենալ տեսուչների անաչառության վրա:

Բացի վերը նշված խնդիրներից, բարեվարքության վրա ազդում է նաև տեսչավորման միատեսակ, հստակ և կանխատեսելի մոտեցման բացակայությունը: Հարցվողները բազմաթիվ դեպքեր են հիշել, երբ միատեսակ խախտման համար որևէ դպրոցում արձանագրություն է կազմվել, իսկ մեկ այլ դպրոցում՝ տեսուչները հնարավորություն են տվել ղեկավարությանը՝ շտկելու այն: Իհարկե, սա չի նշանակում, թե տեսուչներն այս կերպ են վարվում միայն որոշակի կոռուպցիոն դրդապատճառներով: Տեսուչների մարտավարության այս տարբերությունները օրինաչափ են, սակայն դրա հետևանքով դպրոցներն անհավասար պայմաններում են հայտնվում: Ուստի հարկավոր է ավելի մեծ ուշադրություն դարձնել միատեսակ, և ամենակարևորը՝ դպրոցի համար կանխատեսելի (անձնային գործոններից հնարավորինս չպայմանավորված) մոտեցման կիրառությանը:

Տեսչավորման ենթակա խնդիրների սահմանափակ շրջանակը

Տեսչական ստուգումների և ուսումնասիրությունների շրջանակից դուրս են մնում բազմաթիվ ակտուալ հիմնախնդիրներ: Օրինակ՝ համընդհանուր ներառականության ապահովման խոչընդոտներն ու ներառական կրթության համակարգային բացերը, հանրակրթության անհասանելիությունը տարբեր խմբերի երեխաների համար, կրթության իրավունքի իրացման խոչընդոտներն ու կրթության սոցիալական երաշխիքները, կոռուպցիոն ռիսկերն ու բարեվարքության ապահովումը դպրոցներում, և այլն:

Այս խնդիրները նախատեսված չեն ԿՊՏ մասին գործող օրենքով: Բացի այդ, Տեսչությունը չի տիրապետում տեղեկատվության անհրաժեշտ աղբյուրների և մեթոդաբանության՝ դրանք հետազոտելու համար: Օրինակ, Տեսչությունը համադրում է դպրոցում գրանցված և իրականում, փաստացի սովորող աշակերտների թվաքանակները: Սակայն հանրակրթական համակարգից դուրս մնացած երեխաների հայտնաբերման և դրա պատճառների բացահայտման ուղղությամբ ուսումնասիրություն չի իրականացնում:

Հանրակրթության մասին ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ կետերում նշված է, որ.

5. Դպրոցական տարիքի երեխային ուսումնական հաստատություն ընդգրկելու համար պատասխանատու է ծնողը՝ օրենքով սահմանված կարգով:

6. Ուսումնական հաստատությունը, տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մարմինները ապահովում են դպրոցական տարիքի երեխայի ընդգրկումը ուսումնական հաստատություն:

Այսպիսով, առկա պրակտիկայի շրջանակներում այս խնդիրը համարվել և շարունակում է համարվել լիազոր մարմնի կամ տարածքային կառավարման մարմնի (օրինակ՝ մարզպետարանի կրթության վարչության) տիրույթը: Համարվում է, որ Տեսչության միջամտությունն այս հարցում կարող է միայն անուղղակի բնույթ ունենալ. մասնավորապես՝ վերահսկողություն իրականացնել այն հարցի առնչությամբ, թե լիազոր մարմինն իր հերթին ինչպես է իրականացնում իր վերահսկողական գործառնությունները: Ակնհայտ է, որ ուսումնասիրության այս միջնորդավորված շղթայում վերոնշյալ հրատապ խնդիրները պարզապես դուրս են մնում Տեսչության ուշադրությունից:

Այլ խնդիրներ

Բացի վերոնշյալ համակարգային խնդիրներից, հետազոտության շրջանակներում բացահայտվել են մի շարք այլ հիմնախնդիրներ ևս: Մասնավորապես.

1. Ըստ ոլորտի փորձագետների, կրթության ոլորտում գործող կառույցների միջև տեղեկատվության փոխանակումն ու հաղորդակցությունն՝ ընդհանուր առմամբ, արդյունավետ չէ: Տարբեր կառույցներ հանրակրթական դպրոցներում իրականացվում են ուսումնասիրություններ, որոնք, թեև հաճախ համահունչ են իրենց առարկայի տեսանկյունից, սակայն կապակցված և փոխադարձաբար պայմանավորված չեն: Օրինակ, ԳԹԿ կողմից դպրոցներում պարբերաբար իրականացվող քննությունների արդյունքները չեն օգտագործվում ԿՊՏ կողմից՝ հաշվետվությունների և վերլուծությունների պատրաստման ժամանակ: Դրա փոխարեն Տեսչությունն անցկացնում է իր սեփական ստուգում-քննությունները: Կամ՝ ԿՏԱԿ կողմից դպրոցների վերաբերյալ հավաքված տվյալները չեն օգտագործվում Տեսչության կողմից: Տեսչությունը հիմնվում է միայն տեսչավորման արդյունքում ստացված տվյալների վրա՝ դրանք համարելով ավելի հավաստի: Նույն կերպ նաև նշված կառույցներն էլ իրենց գործունեության ընթացքում գրեթե չեն օգտագործում Տեսչության հարուստ տեղեկատվական բազան:

Որպես հետևանք, կայացած չէ տարբեր աղբյուրներից ստացված տվյալների համադրման և խաչաձև ստուգման պրակտիկան: Հարցվողները նշել են, որ, օրինակ, ԿՏԱԿ կայքում դպրոցների կողմից տրամադրված տվյալները կարող են էականորեն տարբերվել միննույն դպրոցում նույն խնդրի վերաբերյալ Տեսչության ձեռք բերած տվյալներից. «ԿՏԱԿ-ի տվյալների հետ շատ է հակասություն լինում: Օրինակ, Վանաձորի դպրոցներից մեկը մեր ստուգումների արդյունքում 42-րդ տեղում էր, իսկ ըստ ԿՏԱԿ-ի՝ առաջինն էր ամբողջ Հայաստանում: Պատճառներից մեկն այն է, որ ԿՏԱԿ-ի տվյալներն իրենք (դպրոցը) են լրացնում, իրենց հարմար ձևով: Մեր տեսուչները ստուգում են, դրա համար մեր տվյալներն ավելի մոտ են իրականությանը»:

2. Դպրոցի ինքնագնահատումը կարևոր և առաջադեմ միջազգային փորձում դրական համարվող պրակտիկա է: Ցավոք, Հայաստանում դեռ կայացած չէ դպրոցի ինքնագնահատման մշակույթն ու պրակտիկան: Առավել հաճախ դպրոցի ինքնագնահատումը ձևական բնույթ ունի և իրականացվում է՝ առաջադրված ձևային պահանջների կատարման նպատակով: Առավել ևս, ինքնագնահատումը կապակցված չէ տեսչավորման հետ: Դպրոցների ինքնագնահատման արդյունքները համակարգված կերպով չեն օգտագործվում տեսչական այցերի նախապատրաստման համար: Մինչդեռ դրանք կարող էին ուղեցույցի դեր կատարել՝ կրթության տեսուչներին հուշելով իրենց ստուգման/ուսումնասիրության որոշակի ուղղվածություն կամ խնդիր:

3. Մինչև վերջերս Տեսչության գործունեությունը կարելի էր բավարար չափով թափանցիկ և հաշվետվողական համարել՝ հատկապես կայքի գործառության շնորհիվ (www.kpt.am). Այս կայքում տեղադրված էին Տեսչության տարբեր տարիների հաշվետվությունները, վերլուծությունները, տեղեկանքները, ստուգումների ժամանակացույցը, այլ փաստաթղթերը: Ցավոք, վերջին մեկ-երկու տարվա ընթացքում կայքը դադարել է գործել և այս կարևոր տեղեկատվությունն այլևս անհասանելի է:

Տեսչության առանձին կայքին ներկայումս փոխարինել է ԿԳՆ կայքի համապատասխան հատվածը («Առանձնացված ստորաբաժանումներ», «Կրթության պետական տեսչություն»), որտեղ, նախկին կայքի հետ համեմատած, նվազել է հրապարակված տեղեկատվության ծավալը: Ճիշտ է, նույնպես առկա են հաշվետվություններ, տեղեկանքներ՝ հայտնաբերված խախտումների մասին: Մակայն բոլոր այս փաստաթղթերը, առանց դասակարգման որևէ հասկանալի սկզբունքի, պարզապես տեղադրված են մեկ էջում: Ակնհայտ է, որ զգալի թվով փաստաթղթեր բացակայում են՝ հատկապես գործունեության նախորդ տարիների վերաբերյալ (2013թ.-ից ավելի վաղ շրջանի վերաբերյալ տեղեկատվություն գրեթե ներկայացված չէ): Ներկայացված տեղեկատվության ծավալն ու ձևաչափը դժվար է հաշվետվողականության պատշաճ դրսևորում համարել:

Եզրահանգումներ

- Տեսչական ստուգումների և ուսումնասիրությունների արդյունքում հանրակրթության խնդիրների և իրավիճակի վերաբերյալ ձևավորվող պատկերը բավական հատվածական (ֆրագմենտար) է: Ստուգումներն ու ուսումնասիրությունները հարուստ տեղեկատվություն են ապահովում առանձին դպրոցում առկա խնդիրների վերաբերյալ, սակայն բացակայում է դրանց պատճառահետևանքային կապերի համակարգային վերլուծությունը:

- Տեսչության կազմած փաստաթղթերում բացակայում է կրթական քաղաքականության և կրթական ծառայությունների արդյունավետության գնահատումը: Կրթության որակի և կրթական չափորոշիչների վրա ազդեցություն ունեցող հիմնարար խնդիրները հիմնականում բացահայտված չեն: Հայտնաբերված խախտումներից և խնդիրներից դուրս չեն բերվում հանրակրթության համակարգային հիմնախնդիրների վերաբերող օրինաչափություններ և եզրահանգումներ, չեն կատարվում կրթական քաղաքականության վերանայման հստակ առաջարկություններ (համենայնդեպս՝ հանրության համար դրանք հասանելի չեն):

- Որպես նկարագրված հատվածայնության հետևանք՝ տեսչավորման արդյունքներն ավելի քիչ ազդեցություն ունեն կրթական քաղաքականության մշակման և վերանայման վրա, քան ակնկալվում է կամ՝ հնարավոր է ակնկալել:

- Տեսչավորման առավել բնութագրական հիմնախնդիրներից է հետազոտական մեթոդների սահմանափակ «զինանոցը»: Տեղեկատվության ստացման հիմնական մեթոդը փաստաթղթերի վերլուծությունն է, որոշ դեպքերում՝ դիտարկումը: Հետազոտական այս մեթոդի գերակայությունն ազդում է ստուգման/ուսումնասիրության ֆոկուսի վրա: Մասնավորապես, Տեսչության հաշվետվություններում մանրակրկիտ անդրադարձ է կատարվում դպրոցական փաստաթղթերի/գրագրության որակին: Կրթական օրենսդրության ֆորմալ պահանջների կատարման, ընթացակարգերի պահպանման նկատմամբ գերակա ուշադրության արդյունքում տուժում է այլ, բովանդակային հիմնախնդիրների վերհանումը:

- Կրթության որակին, կրթական ծրագրերի յուրացմանը, կրթական ծառայությունների արդյունավետության գնահատմանն ու կրթության բովանդակային հիմնահարցերին նվիրված այլ խնդիրների ստուգումը/ուսումնասիրությունը կարծես թե մոլված է հետին պլան: Տեսչության մեթոդաբանության հիմնական բացն այն է, որ տեղեկատվության աղբյուրը ոչ թե մարդիկ են, այլ՝ փաստաթղթերը: Ուսումնասիրության առարկա են ոչ թե մարդկանց մոտեցումներն ու տեսակետները, գաղափարներն ու արժեքները, այլ՝ փաստաթղթերը:

- Այնուամենայնիվ, տեսչավորման վերոնշյալ մոտեցումը նպաստել է դպրոցներում գրագրության որակի էական բարելավմանը: Տարատեսակ փաստաթղթերը բերվել են պատշաճ վիճակի, էականորեն նվազել են տնօրենների կողմից օրենքի խախտումով աշխատանքի ընդունման դեպքերը, ուսումնական պլանի խախտումները, աշակերտների թվաքանակի՝ միտումնավոր կամ անփութության պատճառով գերազանցման դեպքերը: Տեսչությունը հսկայական աշխատանք է կատարել իրազեկման և խորհրդատվական աջակցության ուղղությամբ:

- Ստուգումների հայեցակարգային մոտեցման մյուս կարևոր խնդիրն այն է, որ տեսչավորումն առավելապես միտված է սխալների, թույլ կողմերի և բացերի հայտնաբերմանը: Դպրոցի ուժեղ կողմերի բացահայտման և դրանց հիման վրա զարգացման ուղենիշերի առաջարկման մշակույթը, ցավոք, կայացած չէ:

- Որպես հետևանք՝ դպրոցների զգալի մասում տեսչավորումն ընկալվում է որպես պատժիչ կամ պատժի համար հիմք նախապատրաստող գործողություն: Տարածված է

ընկալումը, որ ստուգումներն իրականացվում են ոչ թե աջակցելու, այլ՝ ինչ-որ խախտում հայտնաբերելու համար:

- Տեսչական այցերը լուրջ լարվածություն են առաջացնում դպրոցի անձնակազմի համար: Ստուգման ժամանակահատվածում բոլոր ջանքերն ուղղվում են տեսուչների վրա դրական տպավորություն թողնելուն: Անձնակազմի խնդիրն է դառնում ծանոթ խնդիրների քողարկումը և հնարավորինս դրական լույսի ներքո հանդես գալը:

- Ստուգումների փաստացի, ներկայումս ակտուալ ժամանակացույցը (միննույն դպրոցում ստուգումների/ուսումնասիրությունների միջև տևական ընդմիջումները՝ հինգ և ավելի տարի) թույլ չի տալիս բավարար և խորքային պատկերացում ձևավորել տվյալ դպրոցի յուրահատուկ իրավիճակի և դրա դինամիկայի վերաբերյալ: Յուրաքանչյուր հաջորդ ստուգում իրականացվում է միանգամայն այլ (նոր կադրեր, նոր օրենսդրական և ենթօրենսդրական պահանջներ, այլ) իրավիճակում, ինչից տուժում է դպրոցի զարգացման տրամաբանությունն ու նվաճումները հասկանալու հնարավորությունը: Զարգացման միտումները հասկանալու փոխարեն՝ հերթական ստուգումը վերածվում է նոր էջից ծանոթացման:

- Բացի Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին ՀՀ օրենքով նախատեսված ժամանակային սահմանափակումներից (դպրոցների ռիսկայնությամբ պայմանավորված), ստուգումների ժամանակացույցը մեծապես կախված է Տեսչության սահմանափակ կադրային և ֆինանսական ռեսուրսներից: Առկա ռեսուրսների պայմաններում յուրաքանչյուր տարի տեսչավորում է իրականացվում միջինում 60-80 հանրակրթական դպրոցում (Հայաստանում գործող շուրջ 1400 դպրոցից): Ընդ որում, յուրաքանչյուր դպրոցում ստուգումը տևում է միջինում հինգ օր, ինչը բավարար չէ տարբեր խնդիրների խորքային գնահատման համար:

- Միննույն դպրոցում ստուգման փաստացի պարբերականությունը գերազանցում է հինգ տարին, կարող է հասնել յոթ և ավելի տարվա: Տեսչության գործունեության շուրջ մեկ տասնամյակի ընթացքում մեծ թվով դպրոցներում մինչ օրս կամ չի իրականացվել տեսչավորում, կամ՝ միայն մեկ անգամ է իրականացվել: Բազմաթիվ փոքր, գյուղական դպրոցներում ստուգումներ և ուսումնասիրություններ չեն իրականացվել:

- Հաշվի առնելով դպրոցների մի մասի ռիսկայնության գնահատականի բացակայությունը և Տեսչության սահմանափակ մարդկային ռեսուրսները՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը լիարժեք կիրառություն չունի:

- Թեև Տեսչության կողմից ուսումնական հաստատությանը տրվող հանձնարարականները ենթակա են պարտադիր կատարման, սակայն Տեսչությունը չունի դրանց կատարմանը նպաստող կամ այն երաշխավորող հարկադրանքի միջոցներ: Դպրոցների նկատմամբ պատասխանատվության միջոցների կիրառման իրավասությունը վերապահված է լիազոր մարմնին, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին: Նկարագրված իրավիճակը առիթ է հանդիսացել այս մարմնին բնորոշելու որպես «անատամ տեսչություն»:

- Տեսչության՝ վարչական մարմին չլինելու, վարչական վարույթ չիրականացնելու և պատասխանատվության միջոցներ չկիրառելու հանգամանքը մի կողմից դրական ազդեցություն ունի այս կառույթի հանրային ընկալման վրա: Վտանգ կա, որ պատժիչ գործառույթների կատարումը կարող է սովորել, երկրորդային պլան մղել Տեսչության խորհրդատվական, աջակցող գործառույթները: Հարկադրանքի/պատժիչ մարտավարության արդյունքում դպրոցներն ավելի զգուշավոր և փակ գործելակերպ կորդեգրեն:

• Մյուս կողմից, պատասխանատվության միջոցների կիրառության ներկայիս պրակտիկան նույնպես խնդրահարույց է՝ լիազոր մարմնի ցուցաբերած կամայական մոտեցման պատճառով: Կախված անձնական հարաբերություններից և այլ գործոններից՝ նույնատիպ խախտման համար մարզպետները կարող են պատժել (մինչև անգամ աշխատանքից ազատումը) որոշ դպրոցների տնօրենների, մինչդեռ մյուսների նկատմամբ՝ պատասխանատվության որևէ միջոց չկիրառել: Պատասխանատվության ենթարկելու պրակտիկան հստակ և կանխատեսելի չէ: Այս տեսանկյունից, Տեսչության կողմից, կենտրոնացված կերպով պատասխանատվության միջոցների կիրառությունն ավելի անաչառ և անկողմնակալ կարող է լինել:

• Վերջապես, որևէ խախտման վերացման համար կարևոր է ոչ այնքան սպասվող պատիժը կամ խրախուսանքը, որքան՝ անհրաժեշտ ռեսուրսային հենքի, կարողությունների, ենթակառուցվածքների առկայությունը: Հատկապես գյուղական բնակավայրերում բազմաթիվ խախտումներ պայմանավորված են ոչ թե դիտավորությամբ կամ անփութությամբ, այլ՝ իրազեկվածության և որակյալ կադրերի պակասով: Տեսչության գործունեության միջոցով փոփոխությունների հասնելու համար կարևոր է այդ բարեփոխումները սպասարկող ենթակառուցվածքների, ֆինանսական և մարդկային ռեսուրսների առկայությունը:

• Տեսչության գործունեության ընթացքում անխուսափելի է շահերի բախման ռիսկը, քանի որ, մի կողմից, այն ստուգող մարմին է, մյուս կողմից՝ ԿԳՆ առանձնացված ստորաբաժանում: Այս մարմնի վերահսկողական գործառույթները որոշ իրավիճակներում ուղղակի հակասության մեջ են մտնում գերատեսչական շահի (օրինակ՝ հանրակրթական համակարգի հեղինակության պահպանման, թերությունները ծածկելու ցանկության) հետ: Տեսչությունը, որ գործում է նախարարության կազմում, կաշկանդված է նույն նախարարության կազմում կամ ենթակայությամբ գործող այլ կառույցների տեսչավորման հարցում: Քաղաքականության մշակող ու իրագործող և դրա նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինների տարանջատումը կարող է նպաստել պետական կառավարման միևնույն բնագավառում հակակշիռների ստեղծմանը, շահերի բախման ռիսկերի կանխմանը, ներհամակարգային կոռուպցիոն ազդեցությունների չեզոքացմանը:

• Հետազոտության արդյունքում Տեսչության կողմից լայնորեն կիրառվող դասալսման մեթոդի արդյունավետության մի քանի հիմնախնդիրներ են բացահայտվել:

- ✓ Տեսչության կողմից չի օգտագործվում դասալսման այնպիսի կարգ (ներառյալ չափանիշներն ու մեթոդաբանությունը), որը կողմերի համար հնարավորինս ընդունելի կդարձնի դրա արդյունքները: Դասալսման արդյունքների տարբերեցման պատճառներն են՝ դասավանդող ուսուցչի և դասալսում իրականացնող անձի հայեցակարգային մոտեցումների տարբերությունները, տվյալ ուսումնական հաստատության և աշակերտների առանձնահատուկ կարիքների անտեսումը, տվյալ տարիքային խմբի առանձնահատկությունների անտեսումը, և այլն:
- ✓ Տեսչության տրամադրության ներքո առկա չէ դասալսում իրականացնող մասնագետների տվյալների բազա, որն ընտրության լավ հնարավորություն կընձեռներ:
- ✓ Գործող ուսուցիչների՝ որպես դասալսողների ներգրավումը շահերի բախման խնդիր է առաջացնում: Նրանց օբյեկտիվության վրա, ուղղակի կամ միջնորդավորված, ազդում է մասնագիտական համերաշխության պահպանման ձգտումը: Մարզային դպրոցներում հատկապես, գործընկերային և ընկերական կապերի ազդեցությունն ավելի ուժեղ է արտահայտված:

- ✓ Հարցվողների զգալի մասն ընդհանրապես թերահավատ է դասալսման մեթոդի արդյունավետության և արժանահավատ տվյալներ ապահովելու կարողության հարցում: Դպրոցի անձնակազմը և նույնիսկ աշակերտները մոբիլիզացնում են իրենց ուժերը՝ դասալսման ընթացքում հնարավորինս դրական լույսի ներքո հանդես գալու համար:
- ✓ Բացի այդ, դասալսումն ընկալվում է որպես «սխալ բռնելու միջոց», իսկ այս ընկալումն էլ կաշկանդում է դասավանդող ուսուցչին՝ առկա խնդիրները բաց ներկայացնելու և քննարկելու հարցում:
- ✓ Կարգավորված չեն նաև դասալսման մասնակցող ուսուցիչների՝ իրենց ուսումնական գործընթացից բացակայության խնդիրները: Դասալսում իրականացնողը դրա համար չի ստանում որևէ փոխհատուցում, դասալսման պատճառով բացակայությունը չի ձևակերպվում որպես գործուղում: Այս խնդիրները սովորաբար կարգավորվում են բանավոր համաձայնությամբ՝ դպրոցի տնօրենի հետ բանակցության միջոցով:
 - Դասավանդման որակի միջնորդավորված գնահատումը՝ սովորողների մնացորդային գիտելիքների գնահատման միջոցով, հարցվողների գերակշիռ մասի կողմից ավելի արդյունավետ եղանակ է համարվել, քան դասալսումը:
 - Ներկայումս չի գործում ԿՊՏ տեսուչների շարունակական կրթության որևէ համակարգ: Տեսուչները վերապատրաստվել են Տեսչության ձևավորման փուլում՝ շուրջ տասը տարի՝ առաջ, դրանից հետո մասնագիտական դասընթացներ գրեթե չեն իրականացվել: Տեսուչները որպես քաղաքացիական ծառայողներ, անցնում են օրենքով նախատեսված ատեստավորումները, որոնցում շեշտը դրված է օրենքների իմացության վրա: Բուն տեսչավորման կարողություններին և հատկապես կրթության բնագավառում տեսչավորման առանձնահատկություններին նվիրված դասընթացներ տեսուչներին չեն առաջարկվում:
 - Տեսչավորման գործընթացում առկա են բարեվարքության խախտման ռիսկեր: Մասնավորապես, թեև Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին ՀՀ օրենքում նախատեսված է, որ ստուգումը պետք է իրականացվի միայն ստուգաթերթում սահմանված խնդիրների շրջանակում, օրենքի այս պահանջը երբեմն խախտվում է տեսուչների կողմից: Ըստ հարցվողների, տեսուչները, օգտվելով տնօրենների՝ օրենքի չիմացության հանգամանքից կամ հոգեբանական կաշկանդվածությունից, քննության առարկա են դարձնում նաև այնպիսի խնդիրներ, որոնք ընդգրկված չեն ստուգաթերթում, ինչը կարող է դիտվել որպես պաշտոնական դիրքի չարաշահում:
 - Տեսչավորման արդյունքների վրա մեծապես ազդում են դպրոցի տնօրենի անձնական հարաբերություններն ինչպես տեսուչների, այնպես էլ կրթական համակարգի պատասխանատուների հետ: Առավել ազդեցիկ կապեր ունեցող տնօրենները կարողանում են խուսանավել բացասական եզրահանգումներից, ինչպես նաև՝ լիազոր մարմնի կողմից դրանց հետևող պատասխանատվության միջոցներից:
 - Տեսուչների անկողմնակալության վրա կարող են ազդել նաև բուն տեսչավորման գործընթացում դպրոցի անձնակազմի հետ ձևավորվող անձնային հարաբերությունները: Հատկապես մարզերում, որտեղ դպրոցի անձնակազմն աջակցում է տեսուչներին տրանսպորտի, կեցության, սննդի և այլ կենցաղային հարցերում, տեսուչների անաչառությունը կարող է տուժել:
 - Բարեվարքության խախտում կարելի է համարել նաև տեսչավորման միատեսակ, հստակ և կանխատեսելի մոտեցման բացակայությունը: Հաճախ միատեսակ խախտման համար որևէ դպրոցում արձանագրություն է կազմվում, իսկ մեկ այլ դպրոցում՝ տեսուչները

հնարավորություն են տալիս ղեկավարությանը՝ շտկելու այն (առանց արձանագրելու): Իհարկե, սա պայմանավորված չէ միայն կոռուպցիոն շահագրգռվածությամբ: Սակայն տեսուչների աշխատառճի այս տարբերությունների պատճառով դպրոցներն անհավասար պայմաններում են հայտնվում:

- Մտահոգության տեղիք է տալիս նաև այն փաստը, որ Տեսչության գործունեության շուրջ մեկ տասնամյակի ընթացքում, երբ կազմվել են հարյուրավոր արձանագրություններ և հանձնարարականներ, դպրոցների ղեկավար մարմինները երբևէ չեն բողոքարկել դրանք: Բողոքարկման պրակտիկայի բացակայությունը կարող է մի շարք համակարգային խնդիրների վկայությունը լինել. տնօրենների կաշկանդվածության կամ պասիվության, համապատասխան ընթացակարգերի չիմացության, բողոքարկման արդյունքների նկատմամբ ցածր վստահության, և այլն:

- Տեսչական ստուգումների և ուսումնասիրությունների շրջանակից դուրս են մնում բազմաթիվ հրատապ հիմնախնդիրներ: Օրինակ՝ համընդհանուր ներառականության ապահովման խոչընդոտներն ու ներառական կրթության համակարգային բացերը, հանրակրթության անհասանելիությունը տարբեր խմբերի երեխաների համար, կրթության իրավունքի իրացման խոչընդոտներն ու կրթության սոցիալական երաշխիքները, կոռուպցիոն ռիսկերն ու բարեվարքության ապահովումը դպրոցներում, և այլն:

- Կրթության ոլորտում գործող կառույցների (այդ թվում՝ Տեսչության և մյուս մարմինների) միջև տեղեկատվության փոխանակումն ու հաղորդակցությունն, ընդհանուր առմամբ, արդյունավետ չէ: Տարբեր կառույցներ հանրակրթական դպրոցներում իրականացվում են ուսումնասիրություններ, որոնք, թեև հաճախ համահունչ են իրենց առարկայի տեսանկյունից, սակայն կապակցված և փոխադարձաբար պայմանավորված չեն: Այլ կառույցների ուսումնասիրությունների, կազմակերպած քննությունների և այլ գնահատումների արդյունքները գրեթե չեն օգտագործվում Տեսչության կողմից՝ հաշվետվությունների, վերլուծությունների պատրաստման ժամանակ:

- Որպես հետևանք, կայացած չէ տարբեր աղբյուրներից ստացված տվյալների համադրման և խաչաձև ստուգման պրակտիկան: Մինևույն խնդրի վերաբերյալ տարբեր մարմինների հրապարակած տվյալները հաճախ հակասում են:

- Դպրոցների կողմից իրականացվող ինքնագնահատման արդյունքները նույնպես գրեթե չեն օգտագործվում տեսչական այցերի նախապատրաստման կամ տեսչավորման արդյունքների հետ համեմատության/համադրման նպատակով: Իհարկե, սա միայն Տեսչության խնդիրը չէ: Դպրոցների ինքնագնահատման մշակույթը դեռևս կայացած չէ, հիմնականում ձևական բնույթի ունի և դժվար է այդ տվյալներն արժանահավատ համարել:

- Մինչև վերջերս Տեսչության գործունեությունը կարելի էր թափանցիկ և հաշվետվողական համարել՝ www.kpt.am կայքի գործառույթյան շնորհիվ, որտեղ տեղադրված էին տարբեր տարիների հաշվետվությունները, վերլուծությունները, տեղեկանքները, ստուգումների ժամանակացույցը, այլ փաստաթղթերը: Ցավոք, վերջին մեկ-երկու տարվա ընթացքում կայքը դադարել է գործել, և այս կարևոր տեղեկատվությունն անհասանելի է:

- Ճիշտ է, ԿԳՆ կայքի համապատասխան հատվածում հրապարակվում են Տեսչության հաշվետվությունները, ստուգումների ժամանակացույցը: Սակայն, նախկին կայքի հետ համեմատած, էականորեն նվազել է հրապարակված տեղեկատվության ծավալը: ԿԳՆ կայքում փաստաթղթերը ներկայացված չեն պատշաճ դասակարգմամբ, բացակայում են նախորդ տարիներին (2013թ.-ից վաղ) վերաբերող զգալի թվով հաշվետվություններ:

Առաջարկություններ

Տեսչության ենթակայության խնդիրը և շահերի բախման կարգավորումը

1. Տեսչության անկախության ապահովման հնարավոր տարբերակներից մեկը դրա գործառնությունն է՝ ԿԳՆ կազմից դուրս, օրինակ՝ որպես Կառավարությանն առընթեր մարմին:
2. ԿԳՆ կազմում գործելու դեպքում շահերի բախման ռիսկերը հնարավոր է կանխել, օրինակ, վարչապետի կողմից տեսչության պետի նշանակման, տեսչության պետի՝ կառավարման խորհրդին (ոչ միայն ԿԳ նախարարին) հաշվետու լինելու միջոցով, ստուգումների պլանի հաստատումը վերապահելով կառավարման խորհրդին (ոչ ԿԳ նախարարին), և այլն:

Տեսչության նոր ռազմավարությունն ու խնդիրները

3. Կարևոր է ոչ թե խախտումների հայտնաբերումը, այլն՝ դրանց համակարգային պատճառների և հիմնական օրինաչափությունների բացահայտումը: Սա նշանակում է ստուգումների և ուսումնասիրությունների մոտեցման վերանայում, ամբողջական (հոլիստիկ) մոտեցման կիրառություն: Նպատակը պետք է լինի ոչ թե խախտման, այլ՝ հիմնախնդրի/օրինաչափության հայտնաբերումը, ախտորոշումն ու հաղթահարման նախագծումը: Այս հարցում օգտակար կարող են գտնվել տարբեր տարածաշրջանների միջև համեմատական հետազոտությունները:
4. Խթանել և խրախուսել Տեսչության կողմից օրենսդրական փոփոխությունների մշակման և իրավական ակտերի վերանայման նպատակով առաջարկություններով հանդես գալու գործառնությունը: Տեսչության վերլուծությունները պետք է մշակվեն՝ որպես վերջնականակառուցվածքով օրենսդրության բարելավումն ու կրթական քաղաքականության վերանայումը:
5. Կարևոր է Տեսչության կողմից խորհրդատվական մարտավարության պահպանումը և հետագա զարգացումը: Ուսումնական հաստատություններին խորհրդատվության տրամադրումը և խախտումների վերացմանն ուղղված մեթոդաբանական աջակցությունը պետք է գերակայություն ունենան պատժողական մարտավարության նկատմամբ:
6. Ցանկալի է ավելի մեծ ուշադրություն դարձնել կանխարգելիչ միջամտությանը: Իրազեկման ավելի ակտիվ աշխատանքի, դպրոցներին տրվող մեթոդական աջակցության և ուղեցույցերի միջոցով հնարավոր է կանխել խախտումների զգալի մասը:
7. Արդյունավետ կարող է լինել հետևյալ մոտեցումը. յուրաքանչյուր ուսումնական տարվա համար սահմանել ստուգումների/ուսումնասիրությունների մի քանի գերակա առաջնահերթություններ և իրականացնել դրանց խորքային հետազոտությունը: Այս մոտեցումը կարող է լավ այլընտրանք դառնալ գործող մոտեցմանը, երբ ուսումնասիրվում են բոլոր խնդիրները, բայց ոչ բավարար խորությամբ:
8. Բացի պարտադիր կատարման հանձնարարականներ տալուց, Տեսչությունը պետք է աջակցի դպրոցին՝ կազմելու զարգացման համապարփակ ծրագիր: Բնականաբար, դպրոցի զարգացման ծրագիրը միայն խախտումների վերացմանը չէ միտված, այլ ավելի բարձր, արժեքային ուղենիշեր հանդիսացող նպատակներին:
9. Հանրային իրազեկման և շահակիցների հետ հետևողական աշխատանքի միջոցով հարկավոր է փոխել Տեսչության՝ որպես պատժող մարմնի ընկալումը: Տեսչությունը չպետք է ընկալվի որպես «սխալներ հայտնաբերող» և սանկցիաներ կիրառող մարմին:

10. Տեսչության գործունեությունը կանոնակարգող իրավական փաստաթղթերում ցանկալի է ամրագրել Տեսչության վերահսկողական գործառույթները հետևյալ խնդիրների առնչությամբ.
 - սովորողների կրթության իրավունքի իրացում,
 - կրթության սոցիալական երաշխիքների ապահովում,
 - դպրոցներում սովորողների հավասարություն և սոցիալական արդարություն,
 - դպրոցի պայմանները (ներառյալ՝ շենքային պայմանները, ջեռուցումը, սնունդը),
 - համընդհանուր ներառականության ապահովում,
 - Դպրոցի ներքին և արտաքին սոցիալական միջավայր, խրախուսվող արժեքներ և վարքի մոդելներ:
11. Պետք է հատուկ ուշադրություն դարձնել կրթական համակարգից դուրս մնացող երեխաների խնդրին և ներագրել դպրոցների վրա՝ այդ ուղղությամբ առավել հետևողական աշխատելու համար:

Ղրական փորձի հայտնաբերում և հորիզոնական ուսուցում

12. Տեսչության գործունեության արդյունքում ոչ միայն պատասխանատվության միջոցներ պետք է կիրառվեն բացթողումներ ունեցող դպրոցների համար, այլև՝ դրական արդյունքներ և դրական դինամիկա ցուցաբերած դպրոցները պետք է խրախուսվեն: Սա նաև կխթանի դպրոցների միջև դրական մրցակցությունը:
13. Տեսչության նոր մտտեցման նպատակ կարելի է հռչակել դրական փորձի հայտնաբերումը, հրապարակումն ու առավելագույն տարածումը՝ այլ դպրոցների ուսուցման նպատակով: Օգտակար կարող է լինել եվրոպական երկրներում գործող «Դպրոցը՝ դպրոցին» աջակցության մոդելի ներդրումը: «Ուժեղ» դպրոցների համար սա բարոյական խրախուսման, հեղինակության ապրապնդման մեխանիզմ է, «թույլերի» համար՝ հորիզոնական ուսուցման և զարգացման լավ հնարավորություն:

Դպրոցների ինքնագնահատումը

14. Ցանկալի է ներդնել կամավորության սկզբունքով, հանրակրթական հաստատության նախաձեռնությամբ մեկնարկող ստուգումների մեխանիզմ: Դպրոցի նախաձեռնությամբ իրականացված ստուգման պարագայում հարկավոր է բացառել պատասխանատվության որևէ միջոցի կիրառումը՝ նախատեսելով միայն հանձնարարականների կատարման ընթացակարգ:
15. Ներդնել դպրոցների ինքնագնահատման պրակտիկայի խթանման, շահադրդման մեխանիզմներ: Օրինակ, եթե դպրոցի իրականացրած ինքնագնահատման արդյունքները հնարավորինս մոտ են Տեսչության ստուգումների և ուսումնասիրությունների արդյունքներին (այլ կերպ ասած՝ արժանահավատ են), կիրառել խրախուսման տարբեր միջոցներ: Խրախուսանք կարող է լինել հերթական ստուգման հետաձգումը, պարգևատրումը, այլ:
16. Տեսչության կանոնակարգերում պետք է պահանջ նախատեսել՝ դպրոցի ինքնագնահատման արդյունքները տեսչական այցի պլանավորման ժամանակ օգտագործելու, իսկ այցի ավարտից հետո՝ արդյունքների համեմատություն/համադրություն իրականացնելու համար:

17. Հետևաբար, պետք է լրացուցիչ մեթոդաբանական աջակցություն ցուցաբերել դպրոցներին՝ նրանց ինքնագնահատման որակը բարձրացնելու և ստացված տվյալների արժանահավատությունը երաշխավորելու համար:

Բարեվարքության խթանումը

18. Ցանկալի է մշակել և կիրառության մեջ դնել տեսուչների վարքագծի կանոնագիրքը, որտեղ սահմանված կլինեն բարեվարքության կանոններ և դրանք պահպանելու ուղեցույցը:
19. Հատկապես կարևոր է շահերի բախման իրավիճակների կանոնակարգումն ու կանխարգելումը՝ տեսչական այցերի ժամանակ:
20. Տեսչությունը պետք է հետամուտ լինի, որ ստուգման արդյունքները չծառայեն որևէ կոնկրետ անձի կամ խմբի շահերին, գործիք չդառնան՝ անցանկալի անձանց հետապնդման կամ որևէ կերպ վնասելու համար:

Էլեկտրոնային եղանակով ստուգումների զարգացումը

21. Դպրոցական փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակների հասանելիությունը թույլ կտա իրականացնել դրանց ստուգումը գրասենյակային պայմաններում, էլեկտրոնային համակարգի միջոցով: Ընդ որում, հատուկ ստուգման կարիք այլևս կարող է չլինել: Եթե էլեկտրոնային համակարգ է բեռնվում պահանջվող փաստաթուղթը կամ՝ հատուկ պատուհաններում լրացվում են պահանջվող տվյալները, ստուգումը կարող է իրականացվել համակարգի կողմից՝ ավտոմատ եղանակով:
22. Համակարգը, ավտոմատ կերպով ստուգում իրականացնելով, կարող է առկա խախտումների վերացմանն ուղղված հուշումներ տրամադրել:
23. Այսպիսով, տեսչական այցերի ընթացքում դպրոցի գրագրության վրա ծախսվող զգալի ժամանակ է ազատվում, որը կարելի է ուղղել այլ՝ ավելի խորքային, բովանդակային խնդիրների ուսումնասիրությանը: Սա նաև թույլ կտա կրճատել տեսչական այցի տևողությունն ու, հետևաբար, գործուղման համար կատարվող ծախսերը: Խնայված ժամանակը կարող է ուղղվել ավելի մեծ թվով դպրոցներում ստուգումներ/ուսումնասիրություններ իրականացնելուն: Բացի այդ, էլեկտրոնային եղանակով ստուգումները կնվազեցնեն տեսուչների հետ դպրոցական անձնակազմի անմիջական շփումն ու դրա անխուսափելի հետևանք հանդիսացող կոռուպցիոն ռիսկերը:

Տեսչության կադրային ռեսուրսի ընդլայնում

24. Ապահովել կրթության պետական տեսուչների բավարար թվաքանակ՝ ստուգումների և ուսումնասիրությունների ծավալի ընդլայնման նպատակով: Տեսուչների թիվը որոշելիս հիմք ընդունել որակյալ տեսչավորման համար պահանջվող միջին ժամաքանակը, յուրաքանչյուր դպրոցում ստուգումների օպտիմալ ժամանակացույցը:
25. Նոր՝ վերլուծական ուղղվածության հաստիքներ ներդնել Տեսչությունում՝ հավաքված հարուստ տեղեկատվությունն առավել համակողմանի վերլուծելու և գնահատում իրականացնելու նպատակով:

Տեսուչների կրթությունն ու կարողությունների զարգացումը

26. Հստակեցնել տեսուչների մասնագիտական որակավորմանն առաջադրվող պահանջները:
27. Մտեղծել տեսուչների պատրաստման, վերապատրաստման և շարունակական կրթության մասնագիտացված ուսումնական կենտրոն: Այդ դասընթացները պետք է տարբերվեն քաղաքացիական ծառայողներին առաջարկվող ընդհանուր բնույթի վերապատրաստումներից: Դրանցում անմիջականորեն պետք է թիրախավորվեն տեսչավորումը, դրա համար անհրաժեշտ գիտելիքներն ու կարողությունները:
28. Ապահովել տեսուչների նեղ մասնագիտացում՝ ըստ ստուգման/ուսումնասիրության ենթակա խնդիրների և թեմաների (օրինակ՝ փաստաթղթերի ստուգում, կրթության որակ կամ չափորոշիչներ, կրթության իրավունք և հավասարություն, այլ):
29. Զարգացնել տեսուչների հետազոտական կարողությունները՝ հետազոտական մեթոդների ընդլայնման և նոր մեթոդների կիրառությունն ապահովելու նպատակով:

Դասալսման բարելավման ուղիները

30. Յուրաքանչյուր դպրոցում, նախքան դասալսման գործընթացը, իրականացնել նախապատրաստական աշխատանք՝ դասալսման խնդիրներն ու սկզբունքները բացատրելու, դրանց շուրջ մասնագետների համաձայնությունն ապահովելու նպատակով: Նախապատրաստական աշխատանքի գլխավոր նպատակը պետք է լինի փոխվստահության մթնոլորտի ձևավորումը, որպեսզի դասալսում իրականացնողներն ընկալվեն որպես գործընկերներ և աջակիցներ: Տեսուչները պետք է համոզված լինեն, որ դպրոցի անձնակազմը բավարար վստահություն ունի՝ առկա խնդիրները չթաքցնելու և բաց քննարկելու համար:
31. Հստակեցնել դասալսում իրականացնող մասնագետներին առաջադրվող պահանջները (օրինակ՝ գործող ուսուցիչ լինելու պահանջը, կամ՝ մասնագիտական փորձառությանը/ստաժին առաջադրվող պահանջը, և այլն):
32. Դպրոցների հետ համատեղ մշակել դասալսման հստակ մեթոդաբանություն/ուղեցույց և չափանիշներ:
33. Կանոնակարգել շահերի բախման (մասնավորապես՝ գործընկերային և անձնական հարաբերությունների ազդեցության) խնդիրները դասալսումների գործընթացում:
34. Կիրարկել դասալսում իրականացնողների ֆինանսական փոխհատուցման, գործուղման ձևակերպման (հատկապես՝ գործող ուսուցիչների դեպքում) ընթացակարգեր:
35. Ձևավորել որակյալ մասնագետների բազա՝ դասալսողների ընտրության համար:
36. Ցանկալի է քննարկել դասալսումները տեսչավորման գործընթացից անջատ և այլ կառույցների հետ համատեղ (օրինակ՝ ԿԱԻ-ի) իրականացնելու նպատակահարմարությունը: Այս կերպ դասալսումներն այլևս չեն զուգորդվի ստուգումների հետ:

Տեսչության հաշվետվողականությունն ու թափանցիկությունը

37. Վերագործարկել Տեսչության կայքը (www.kpt.am) ապահովելով տեղեկատվության նախկին ծավալն ու պատշաճ դասակարգումը:
38. Տեսչության և ԿԳՆ կայքերում հրապարակել նաև Տեսչության վերլուծություններն ու կրթական քաղաքականությանն ուղղված առաջարկությունները:

39. Խրախուսել Տեսչության կազմած փաստաթղթերի մասին հանրային առավել լայն իրազեկումը: Ակնկալվում է, որ խախտումների առնչությամբ կազմված ակտերի (բովանդակության) և դրանց կատարման հրապարակումը հանրակրթական հաստատությունների նկատմամբ հասարակական վերահսկողության լրացուցիչ լծակ կդառնա: Այն կնպաստի կրթական հաստատության հանրային հաշվետվողականությանը և հետագա խախտումները կանխարգելելու լավ հիմք կլինի:
40. Տեսչավորման արդյունքները մարզպետարաններում և այլ կառույցներում քննարկելիս՝ խրախուսել լայն հանրային մասնակցությունն ու լրատվամիջոցների լուսաբանումը:
41. Տեսչական ստուգումների և ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա ձևավորել հանրակրթական դպրոցների վարկանիշավորման ոչ պաշտոնական ցանկ՝ ներառելով ինչպես բարեխիղճ և առաջադիմության բարձր արդյունքներ, այնպես էլ առավելագույն խախտումներ և սովորողների ցածր առաջադիմությամբ աչքի ընկած դպրոցների անվանումները:
42. Հարկավոր է ակտիվացնել Տեսչության հանրային հաշվետվողականության ձևաչափերը. տեսչության աշխատակիցների մամուլ ասուլիսներ, ելույթներ, մասնակցություն հանրային քննարկումներին:
43. Մշակել և ներդնել Տեսչությանը ներկայացված դիմումների և ահազանգերի քննության ընթացքին առցանց հետևելու համակարգ (պահպանելով որոշ անձնական տվյալների գաղտնիությունը): Հանրությանն առավել մտահոգող խնդիրների առնչությամբ ապահովել դիմումների քննության առավելագույն թափանցիկություն, տվյալների պարբերական թարմացում:

Հանրային մասնակցության խթանումը

44. Կրթական ուղղվածության հասարակական կազմակերպություններին և այլ շահակիցներին (օրինակ՝ ծնողների ակտիվ խմբերին) ներգրավել հանրակրթական դպրոցների ակտուալ հիմնախնդիրների շուրջ այլընտրանքային զեկույցների պատրաստման աշխատանքներին: Այս կերպ խթանել Տեսչության և հասարակական հատվածի «մրցակցությունը» հանրակրթության հիմնախնդիրների առավել արդյունավետ հետազոտման հարցում: Այլընտրանքային զեկույցների արդյունքները կարող են ծառայել նաև Տեսչության մեթոդաբանության բարելավմանը:
45. Օգտակար կարող է լինել դպրոցի նախաձեռնությամբ և պատվերով կրթական աուդիտի իրականացումը: Աուդիտ կարող են իրականացնել կրթության ոլորտի փորձագետներն ու նրանց խմբերը, հասարակական կազմակերպությունները: Հատկապես լիցենզավորված կրթական աուդիտի իրականացումը կարող է լավ այլընտրանք դառնալ տեսչավորմանը, մրցակցություն խթանել կրթական ծառայությունների մատուցման ոլորտում:
46. Բավական արդյունավետ կարող է լինել հորիզոնական կրթական աուդիտը՝ այլ դպրոցների գործընկերների կողմից: Հատկապես դպրոցների նախկին տնօրենների և ուսուցիչների միավորումները կարող են օգտակար գտնվել այս հարցում: Վերջիններս, բացի հարուստ մասնագիտական փորձից, կունենան նաև անկախության բավարար աստիճան: Ընդհանուր առմամբ, հորիզոնական աջակցությունը նախընտրելի է ուղղահայաց բնույթ ունեցող ստուգումներից:
47. Ցանկալի է, որ կրթական աուդիտ իրականացնող փորձագետների և կազմակերպությունների ընտրությանը մասնակցեն ծնողները: Դա կնպաստի

- հանրակրթության նկատմամբ նրանց անուղղակի վերահսկողությանն ու վստահության ամրապնդմանը:
48. Տեսչական ստուգումներին չԿ-ների ներկայացուցիչների մասնակցությունն ապահովել բաց, մրցութային ընթացակարգով՝ հրապարակելով գործընկեր չԿ-ների անվանումները:
 49. Մահմանել մամուլի հրապարակումներում, հասարակական կազմակերպությունների, անհատների ուսումնասիրությունների և մշտադիտարկման արդյունքներում ներկայացված խախտումները քննելու թափանցիկ ընթացակարգ: Տեսչությունը պետք է որպես ահազանգ դիտարկի նշված աղբյուրներում հրապարակված մտահոգիչ տեղեկությունները:
 50. Հարկավոր է ընդլայնել անմիջական շահառուների՝ սովորողների և նրանց ծնողների մասնակցությունը տեսչական ստուգումների և ուսումնասիրությունների գործընթացում: Ծնողների՝ ներկայումս իրականացվող հարցաթերթիկային հարցումից բացի, ցանկալի է ֆոկուս խմբեր, հարցազրույցներ իրականացնել նաև սովորողների հետ:
 51. Օգտակար կարող է գտնվել դպրոցի շրջանավարտների և նրանց ծնողների շրջանում անցկացված հարցումը: Վերջիններիս պատասխաններն ավելի արժանահավատ կարող են լինել:
 52. Ցանկալի է ստեղծել էլեկտրոնային հարցման համակարգ, որտեղ յուրաքանչյուր ծնող հնարավորություն կունենա մասնակցելու պարբերական և մշտական հարցումներին, ներկայացնելու առաջարկություններ, ինչպես նաև՝ էլեկտրոնային նամակներ, դիմում-բողոքներ հղելու Տեսչությանը:
 53. Համապատասխան կադրային ռեսուրսի առկայության պարագայում օգտակար կարող է լինել Տեսչության կողմից ոչ միայն ուսումնական հաստատություններին, այլև՝ առանձին ուսուցիչներին, աշակերտների ծնողներին, համայնքներին ուղղված խորհրդատվական աջակցությունը:

Միասնական տեղեկատվական համակարգի գործարկումը

54. Հարկավոր է ուժեղացնել Տեսչության, ԿՏԱԿ-ի, ԿԱԻ-ի, ԳԹԿ-ի 51 և կրթական քաղաքականության հարցերով զբաղվող այլ կառույցների համագործակցությունը՝ շեշտը դնելով միասնական տեղեկատվական համակարգի ստեղծման վրա: Մեկ հարթակում հավաքված տեղեկատվությունը թույլ կտա կողմերից յուրաքանչյուրին՝ իր առաքելությանը և լիազորություններին համահունչ վերլուծություններ իրականացնել, պլանավորել անհրաժեշտ միջամտությունը:
55. Միասնական համակարգը թույլ կտա հայտնաբերել միմյանց հակասող տեղեկությունները և ճշգրտել դրանք:

Տեսչության արդյունավետության գնահատումը

56. Մշակել Տեսչության արդյունավետության գնահատման չափանիշներ՝ հիմնվելով նախկին փորձի և պրակտիկայի միջինացված ցուցանիշների վրա:

⁵¹ Ընդհանուր առմամբ, այս կառույցների միջև որոշ գործառույթների և կիրառվող մեթոդների վերածածկ է նկատվում, ինչը պետք է քննարկման առարկա դարձնել:

57. Տեսչության աշխատանքի արդյունավետության գնահատման մոտեցումներում հստակ ամրագրել այն սկզբունքը, որ վերջինս պատժիչ մարմին չէ: Տեսուչների աշխատանքի արդյունավետությունը գնահատելիս հնարավորինս խուսափել հայտնաբերված խախտումների, կամ կիրառված պատասխանատվության միջոցների ցուցանիշներից:
58. Տեսչության արդյունավետությունը գնահատելիս նախապատվություն տալ Տեսչության գործունեության արդյունքում արձանագրված դրական արդյունքներին ու նվաճումներին (կրթության որակ, կրթական չափորոշիչների ապահովում, հանրակրթության հեղինակության աճ, սովորողների առաջադիմության մակարդակ, այլ):
59. Արդյունավետության ցուցանիշներից կախված՝ կիրառել թե՛ Տեսչության՝ որպես կառույցի, թե՛ առանձին աշխատակցիների խրախուսման մեխանիզմներ:
60. Ապահովել տեսչության և տեսուչների աշխատանքի հետադարձ գնահատման հնարավորություն՝ դպրոցների և ծնողների կողմից: